

Բնագրի




ՀԵՎՏԵՐԵՐ 1980

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ



- ԵՎ. ՊՕՅԱՃԵԱՆ Մարդը նորէն, մարդը նորէն . . .
- Զ. ՈՐԲՈՒՆԻ Վարձու սենեակ
- Դ. ՎԱՐՈՒԺԱՆ Ո՛վ Վայցե
- Ր. ՔԵՊԱՊՃԵԱՆ Ճախարակը
- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Օր մըն էր, հետո՛ւ . . .
- » Տարածութեան սահմանէն դուրս
- Ա. ԱՐԷԼԵԱՆ Պանդուկը
- Պ. ՀԵՐԵԱՆ Եւ ես եկայ
- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Մուտք՝ Որբունիի
գրականութեան ներս
- Լ. ՄԿՐՏՉԵԱՆ Երեսնի «Լիտերատուրնայա Արմենիա»
ամսագրի խմբագրական առթիւ
- Ա. ԵՂԻԱՅԵԱՆ Թիւրն ու քերիմ
- Յ. ՔԻՐՔՅԵԱՆ Թիւրն ու քերիմ՝ այսօր
- Կ. ՇԱՀԻՆԵԱՆ Ծրածրութեան բնոյթը
- * * * Սաղունակամ սարսափ
- Ա. ՇԻՐՎԱՆՁԱԿԷ Ահա մի ուրիշը
- * * * «Բագին»ի 1980ի բովանդակութիւնը



55-8/p
digitised by

A.R.A.R.@

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅ. ԵԱՐՐ. ԹԻՒ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1980 ԳԼՍԲԵՏ

Ե Դ . Պ Օ Յ Ա Ճ Ե Ա Ն

ՄԱՐԴԵ ՆՈՐԷՆ, ՄԱՐԴԵ ՆՈՐԷՆ...

Ժամանակ ու աշխարհ լեցուցած՝
 Ես կ'ապրիմ, կը խօսիմ, կը մեռնիմ.
 Շատ եմ ես, —
 Բաշխուած բախտերու, ախտերու բազմաթիւ, բազմազան,
 Սէրերու, վիշտերու, իղձերու, միշտ անթիւ, այլազան.
 Բաշխուած՝
 Աչքերու, եւ ոնի, եւ ճամբու,
 Կարօտի եւ խօսքի անհաշիւ:

Շատ եմ ես,
 Ո՛չ թէ մարդ մը իբրեւ,
 Այլ ուռած, պայթելու չափ լեցուած՝
 Մարդկութիւն:
 Գրաւած թիւ ու հոդ,
 Հաց բերնի եւ սրտի,
 Հաց մտքի եւ հոգւոյ՝
 Կը ստակամ:
 Գրաւած իրաւունք՝
 Գիտերու եւ գիտն իսկ գլելու, անցնելու ամէն կերպ ծարաւի,
 Վերելիքի՝
 Կը ստակամ վերստին...

8942



Ես ու Դուն...

Ո՞վ թաղեց մեր միջեւ մտերիմ այսօրվա բան,

Թանկագին այսօրվա բան.

Մեզ իրար մօտեցնող ո՞վ երկար, անապառ ըրաւ հին, հարագաւտ
այս նամբան:

* * *

Կը ժողովեմ ես բաներ խորութեանց մութ ծովէն,
Հեռացած, հեռացող, երկինքի դեռ անպիղծ կտորէն.
Կը ժողովեմ ես բաներ սրտերու չբացուած գաղտնիքէն,
Հոգիէն՝ որ ունի աշխարհներ երազի,
Աստուածներ՝ հին ու նոր ցանկութեան, հին ու նոր սէրերու.
Հոգիէն՝ որ սակայն միշտ կու լայ, նորէն մեծ ու նորէն վերաւոր,
Նորէն խենթ, նորէն սուրբ, եւ դարձեալ մեղաւոր...

Մամուռներ չարաշահ, խորամանկ,
Փռչիներ, ու բորբոս, թանձր ժանգ՝
Գտան սիրուն աշխարհին, բրին խոր թանգարան
Կմախքի, մամուլի, ահաւոր մողէսի ըրին տուն ու սլալատ:
Մամուռներ, այս, միշտ՝
Ծախեցին նոր օրուան շատ հին օր.
Նոր մարդուն հին մարդու ոսկորներ ու վիշտեր, արցունքներ
ծախեցին,
Հին աման ու հին գէնք, հին ջրանցք ծախեցին.
Ջրհեղեղ ծախեցին
Ու տապան —
Մասիսի բարձրութիւն:

Ծախեցին, ծախեցին, հին օրուայ գրքի էջ, վանայ ժայռ,
Նինուէի աստղագէտ, պատմարան աղիւսներ,
Կուտակուած մտածում, վեհութիւն բուրգերու,
Սփինքներ լոյսի մէջ, աւազի ու ջերմի,
Առեղծուած արտադրող ու պատմող հառախօս լուսեամբ
մեծ քարեր:

Ծախեցին՝
Գերասան, նարտասան, հոնտոր հնութիւն,
Վիքինկներ, ու մէգեր, մառախուղ հիւսիսի,
Արիական ցրուումի ուղիներ, սսիական միշտ թթու, միշտ կծու
արշաւանք:

Ծախեցին, կը ծախեն՝
Չինաստան, Հնդկաստան, Մեքսիկա, Ովկիանեա,
Միջագետք, ու Նեղոս, Յունաստան, ու Հռոմ,
Տիգրանի, Լեւոնի դրամներ,

Հոգիով այնքան պաղ՝
Կը տեղամ, կը դիզուիմ,
Կը փլիմ:

Բազմութեամբ մը անթիւ,
— Հոգերու, խոհերու, խոռովֆի՝
Կը ճզմեմ հոյ ու հաց,
Շողացող, բարձրացող, ամէն ծիլ, ամէն լոյս,
Մանրագոյն ամէն յոյս.
Բազմութեամբ մեղաւոր, ահաւոր՝
Կը ճզմեմ ես կրօնք, զաղափար ու սատուած...

* * *

Գիրեր կան ճակատի,
Երդումներ՝ անվրէպ ու բեզուն,
Խօսքեր կան Աստուծոյ, գիրքերու բանտին մէջ չմտած,
Բացօթեայ տաճարի, շողացող, չվախցող, միշտ ազատ մեծ
խօսքեր,

խօսքեր նոր, որ կ'ըսեն.
— Դուն ինչպէ՞ս կը մնաս անկատար,
Կը մնաս ճամբուդ դէմ հաշմանդամ.
Ձայնին դէմ քեզ կանչող՝
Կը մնաս կատարեալ տգէտի նման խուլ,
Նման խեղճ, նման մունջ:
Գիրեր կան գորաւոր,
Երկինքով ու երկրով բեռնաւոր,
Կեանքերով, մահերով բեռնաւոր,
Հրդեհով, հրդեհով, հրդեհով բեռնաւոր.
Գիր եմ ես բու վրադ ամէն օր,
Գիր հօգը, իմաստուն,
Ես քիչ ես, ինծի դէմ չեաւոր,
Կարենալ գիրիս դէմ փորձելու ընդվզում:
Գիր եմ ես բու վրադ՝ ըլլալու, տեսլու,
Չես կրնար դուն չըլլալ, չտեսլ, չմեծնալ...

— Ես ու Դո՞ւմ...
Բայց քայնեմ, քայնեմ դեռ հակառակ ուղղութեամբ,
Անողորմ երդումով, անողորմ մեծութեամբ:
Հեռանա՞նք երկնային անասիման չափերով,
Կեանքէն մահ տարածուող թաւերժի չափերով.
Չգիտնա՞նք մենք գիրար,
Մնա՞նք միշտ սառոյցի չափ անգէտ:

Շատ եմ ես,
 Հոռ եմ ես, հոռ եմ ես,
 Այր եմ ես, կին եմ ես,
 Ծնողք եմ, հին պապ եմ, պատմութիւն, առասպել,
 Հեփիաթի ազատ ուժ,
 Ամէն ինչ կարելի ընող կամք բոցավառ երազի.
 Զուակ եմ, թռռնիկ եմ,
 Ազգական, բարեկամ, մրցակից, թշնամի,
 Խաղաղ կեանք ու արեւ, կռիւ գեշ ու կրակ,
 Ու արիւն, ու սատակ...

Շատ եմ ես,
 Գործի տէր, գործաւոր,
 Եւ անգործ.
 Բանաստեղծ, եւ անբան,
 Եւ մարդ, եւ ճրի,
 Ունեւոր, չունեւոր,
 Ի՞նչ գիտեամ.
 Թնճուկ մը միլիոն թել կապերու, միլիոն ձեւ հիւսուածքի,
հանգոյցի,
 Մտեցման, միացման ուխտերու,
 Անջատման ձգտումի,
 Երդումի...

Շատ եմ ես, կը շատնամ,
 Տանիքէս մինչեւ վար վախճում թէ կործանիմ,
 Զտոկամ իմ վրաս տեղացող ջրհեղեղ մարդկութեան.
 Մարդ ինչպէ՞ս կը տոկայ իր վրայ ամէն օր տեղացող
 Մարդկութեան,
 Ջուրի պէս, ովկիանի հողմի պէս գինք քշող,
 Մտածման, ու կիրքի, ու խօսքի մէջ խեղդող մարդկութեան:
 Շատ եմ ես, ու չեմ միշտ խորունկ սէր,
 Մասերըս ական են իրարու շատ յանախ...

Հակատի գիրք իմ,
 Գրուած է մասամբ ալ, կարեւոր տողերով՝
 Հակատին ուրիշի.
 Կեանքը մեր պատմող գիրք յանախ՝
 Գրուած է ձեռքով խորթ,
 Անձին մէջ, գրքին մէջ ուրիշին,
 Էութեան մէջ տարրեր:

Շատ եմ ես,
 Զիւնի պէս ցուրտ օրուայ,

Հայոց վիշտ, —
Աշխարհի ցորենէն աւելի, ծովեզրի աւազէն աւելի...

Բորրոսներ, այո, միշտ,
Կնէնցիմ ու բերին կոտորած հին պարիսպ,
Կրօնքի մնացորդ տաշուած քար,
Թուական ու կեանքեր, ու ազգեր բառերով կարկտոզ մագաղաք,
Երկրաշարժ, քաթափիլզմ պատմող վատ հողաշերտ,
Հագար նաւ, ու հին դեկ, ու խարխիս,
Նաւերու վարձու աչք հին փարոս,
Կոուի դաշտ,
Ու կեղծ վայր հանգիստի:

Մամուռն ու ծեր փոշին, իմ սրտիս դրամ քով՝
Ամէն օր պատմութիւն, հին խնդիր, հին լուծում, հին բառեր
Տխրութիւն, յոգնութիւն, հմուտութիւն, հին տումեր ծախեցին,
Գանձեցին նորածագ լոյսի պէս ջինջ արցունք:

ԵՒ. ՊՅԱՅՆԱՆ

(Անտիպ)

Զ. Ո Ր Բ Ո Ւ Ն Ի

ՎԱՐՁՈՒ ՍԵՆԵԱԿ



Ձարե՛կ Արրունիի առողջական վիճակը անձանթ էր մեղի, երբ սիստոճ հրատարակել իրեն հետ ունեցած Մոսկու Պլազմահի զրոյցին առաջին մասը և նոր աւարտած էր վերջին մասին տպագրութիւնը, երբ հասաւ մահուան գոյժը։ Երեսնական թուականներուն Փարիզի մէջ մէկ օրէն միտք իրենց անունը լսելի դարձուցած և ՎՄԻՄԵ պարբերականով գրական լրբանոցներուն ուշադրութիւնը պահ մը բոլորովին իրենց վրայ կեդրոնացուցած գրողներէն եղաւ Արրունի, որուն գրական կենսոթին վերջին երկու տասնամակհները, բարբառաբար, առաջին երկուսին ոչն յանախողեալ ընդհատուածներով շխալաւ մեռուեցան, եղան աւելի միակտուր ու սրղիւս նաւոր։

Սփիւթի գրականութեան մէջ իր յատուկ տեղը գրաւած դէժք մը, որուն նուիրուած ուսումնասիրութիւնները անպայման հաւուր պիտի առնեն ճիւղիմօի նախնիքաց երկու թիւերուն տրուած երբեմն յաւակնոտ, երբեմն անձնատէր, միտմիտ, բայց խորպակէս անկեղծ իր գրույցը։

Ստորեւ տրուած պատմուածքը բաւարար դասագիրք մը կու տայ անհետացող գրապատին գրական հակումներուն ու ոճին մասին։

Ամպիրը կախեր էին շրթունքնին ու կու լայնի փողոցներուն մէջ։ Ինչպէս նաեւ Տիգրանի հողիին մէջ։ Դանդաղաշարժ ամբողջը կը սահէր մաշթիւնէն։ Տիգրան պէտք էր քալէր։ Աւելի շուտ քալէր։ Անոր սոքերուն առջեւ բողմաթիւ սարեր ցանց քաշեր էին։ Ամբողջ ուժը կզակներուն մէջ զետեղած՝ կը հրէր, կը հրմշակէր, կը սահէր, ի հարկին, ինքնագոհացման պատրուակով, քան թէ՛ ճամբայ բանալու համար, սաքի հարուած մը կը նետէր հոս, հոն։ Արազ քայլու նպատակով վատնուած ճիղը իր արդիւնքը չէր բերեր միջոցին մէջ։ Այնպէս որ՝ անոր ուժը կը գործէր իր մեկնակէտին վրայ։ Տիգրան կ'ենփէր ինքն իր մէջ։ Ձիգերը անկանոն պարի մը անձնասուր էին, խորհրդածութիւնը հոն կը փոշիանար։ Ուստի կը շեղէր մէկը, սոքով կը վարէր ու բիւի մը։ Սպասնական նայուածքէ մը ճներսդութիւնը կը հայցէր, յանգստի շնչումով։ Ու կը շարունակէր առաջանալ, զլուխը ուսերուն մէջ։ Երբ թաւ յոնքերը կախուեր էին անպայլ նայուածքներուն վրայ, ինչպէս երկնքին ամպերը քաղաքին վրայ։ Մանրակշիւ լրջութեամբ, ճակատը ամփոփուեր էր յոնքերուն մէջտեղ, վերաւոր սրտերու պէս տերեւները կը թափէին ծառերէն, կը հանդիչէին մէկը ուսի մը վրայ, միւսը՝ փախչող կառքի մը մէջ, և կամ կը ճղմուէին ոտքերու, քսուչուէ անիւներու տակ, հողիւ լսելի տրտում խելաչոց մը արձակելով։ Տիգրան նայուածքը տարաւ այդ համեստ ու մեռած տերեւներուն, կմախքացած ծառերուն, որոնցմէ թախծութիւն կը հասէր իր հողիին մէջ։ Ամբոխին պատճառած շղայնութիւնը քեչքեչ տեղի կու տար նոր զգացումի մը, որ թոյլ ու մեղկ էր, գորտիի, գրգռելու, շոյշու անհրաժեշտութիւն մը, հողին իրերու վրայ սփռելու, գտնոնք տաքցնելու իր ժողովին ջերմութեամբ, պաշտպանելու՝ սպաննացող կո-

ընտանիքի մեջ, Օրբերը այնպիսի կարճացրել են, Նոյեմբերը սկսել էր հասնել, Օրուան ութ, նոյնիսկ տասը ժամերը կ'անցնէին դործարանը: Այս կային զնումները: Որովհետև Տիգրան ճաշարաններու մէջ չէր մտնէր իր այնքա՞ն դժուարութեամբ ձեռք անցուցած դրամը: Անյայտութիւնը իր բաւարարութեան եւ մտածումներուն գառաւորն էր: Իրիկունը կը պատրաստէր ճաշը: Յարող օրուան բաժինը կը ծրարէր: Քիչ անգամ կը նստէր սրբաւորնի մը անկիւնը: Եւ ոչ ալ շտապու պէս պարահանդէսներու թմրութիւնը կը փնտռէր: Կոկիկութիւնը, մաքրութիւնը, կրկին ինայողութեան սիրոյն արդիւնքն էր: Ի՞նչ չափուած շարժումներով կը հագուէր, կը հանուէր:

Այդ իրիկուն արագ-արագ սենեակը հասեր էր: Հաներ՝ դործարանի գիւղացուք, հագուեր՝ գիւղացուքնանք ու նետուեր էր փողոց: Երբեք Տիգրան մանրամասնութիւններով չէր սպասած իր մտային կամ պայմանական դործունէութիւնը: Երանկիւն մը, ամէն բանէ առաջ, տարածութիւն մըն էր: Ուրիշ ոչինչ: Իրեն ի՞նչ կողմերը: Գիծը, տարածութեան մասնակիներու յարգականութիւն մը: Իրեն ի՞նչ մասնակիները: Կայ տարածութիւնը: Կարելորդ այն էր, որ Տիգրան այդ տարածութեան վրայ չէր կրնար քայլել ազատօրէն: Ամբողջ իրեն նման նպատակով մը կամ աննպատակ շարժող անհատներու ամբողջութիւն մը չէր: Անիկա արդիւնքն էր: Բացարձակ անտարբերութիւն մը իր շուրջիններուն հանդէպ: Կարծես պատի մը առջև ըլլար, որուն վրային պետք էր ցատկել: Ձէր ուղիք զիտնալ, թէ այսինչին թի՞ր տարածակ է, միևնույն՝ աննպատակ դորդարուած: Ա՛յ, այդ չէր զիտուրը: Գրեթէ անտարբեր այն էր, որ պետք էր հասնիլ ընտանիքին վարձող քաղաքային դրամանեանքը, որ շուտով սկստի գոցէր դուռները: Անոր անտողութեան դաշար միայն բացակայ զէճով մը դրուուած էր: Գլուխ մը իրմէ առաջ կը քոչէր, զէճով իրեն կողմը դարձուցած, ու կը ժպտէր, քրոջական անսպասու դորդարանքով: Հեռուոր յիշատակ մըն էր այդ տեսիլը: Ընտանեկան լուսանկարէ մը դուրս ելած, որ յարուարաբար կու գար լուծուիլ ուրիշ լուսանկարի մը մէջ: Արդէն հասուն աղջիկ մը, որբանոցի պարզ դորդարանով, որուն տակ կնոջական յուզումներով կազմուած, կորացած կուրծք մը: Առջորդ ու քաղցր նայուածքով աչքեր, ապրկու տենչը զգալի, բայց միտով ու համակերպութեամբ ապրուած կեանքի մը կիկը վրան: Լեցուն այտերը բնական կարմիրի մը ներկայութիւնը կը զգայնեն, հակառակ լուսանկարին սեւ ու ճերմակին: Կեանքը զարկեր էր գլուխին, ուսերուն, որ ինքզինքնուն վերայ ծածկէին, հաստ արեւարկել տերեւներուն շուրջն տակ զլիսահակ թուած մանկականերու պէս: Բայց երիտասարդութիւնը, հակառակ բոլոր ճշնշումներուն, ի՞նչ սողակուն ճամբաներով եկեր հաստատուեր էր կուրծքին ու այտերուն մէջ:

Մէկ խօսքով, անծանօթ մը, որ Տիգրանի հոգիին մէջ ապրկու իրաւունքը կը ստանար, շնորհիւ այն միւս լուսանկարին, մանուկ աղջկան, որ իր քոյրն էր եղած, եւ անոր յարուցած յիշատակներու խուժումին վերականուցած անվերապարձ անցեալին: Վարդան՝ յ. յ. յ. կը բաւէր միայն արտասանել այդ անունը, շրթունքներու շարժում մը ու թեթեւ հնչիւնը վանկերուն, թեթեւ՝ որպէսզի ոչ ոք իմանար զովն է, ակնհայտուն մէջ թրթուացում մը, ամբողջ արտի աշխարհ մը կ'արթննար, կը վերադարձեր ու կը լեցընէր երիտասարդը, որուն կեանքը յանկարծ նոր իմաստ մը, նոր ուղղութիւն մը կ'առնէր: Ահա այդ պատկերը, որ կ'երթար իրմէ առաջ, որ ամբողջն չէր արդիւնքեր, որովհետև ան կրնար նետուիլ կոնակի մը վրայ ու գայն ջնջել:

Քափանցկացնել: Տիգրան, գայն աշփէ կորսնցնելու վախով՝ կը շտապէր, կը ստիպուէր ընդհարել: Բացակայ պատկերներ կը ծնէին անոր դէմքին շուրջ, փափաքներ ու յիշատակներ կը ներկայանային անոր կամքին անճիգ ըզճանքովը ու կը շարունակէն թղթախաղերու պէս, պատրաստ հրամանի: Նախ եւ առաջ՝ քնակարան մը: Կը խորհէր, խոհանոց մը կազմ փուռով, երկու նընջածնեակ, երկտրակոն կոճակը ճիշդ մահճակալին դուռի, որպէսզի գիշերը, երբ մարմինը անկողին մէջ անշարժանայ, երբ օրորուի քունի եւ արթնութեան մէջոնց կոհակներուն վրայ, երբ միտքը մտնէ խորհուրդներու տարօրինակ աշխարհը, ձեռքի աննշան շարժումով մը կոճակին վրայ՝ փահէ ցերեկուան աշխարհին դուռը կոնակին ու նաեւ անարգել, անվերացարժ ճանապարհորդութեան մը անձնատուր: Եւրոպա գալէն ի վեր, աւելի ճիշդը՝ գործարանի մը մէջ կայուն գիրք մը ապահովելն ի վեր, Տիգրանի կիսանքր կծկուեր էր ինքն իր վրայ՝ կարծր կծկի մը պէս: Եւ յանկարծ կանգ առեր էր ու կը քաղուէր: Այնպէս կանոնաւոր կը քաղուէր, որ միւս կողմէն նոր կծկի մը կը կաղմուէր: Իրիկուն է: Գործարանին զուտները, պատասխանելով սուրցներուն, կը դառնան իրենց ծինիններուն վրայ, լայն կը բացուին, փրսխելով մարդերու զանգուած մը: Տիգրան կը մերթէ ընկերներու հրաւէրը: Ախորժարի գաւաթներուն շուրջ անցած արուեստական զուարթութիւնը իրեն համար չէ այլեւս: Տիգրան բնականիք հայր է հիմա: Արդէն կը բարձրանայ սանդուխներէն, կերակուրի քմպարար հոտը ունդերուն մէջ: Քոյրիկը կանգնած է, համեստ պարտէզի մը մէջ բացուած վարդի պէս: Քոյրիկը կը ժպտի: Ժպտաւ կը լծցնէ քնակարանը իր լոյսով: Պատերը կը ինչպան: Ու խնդուքին ջերմութիւնը կ'անցնի քոյր իրերէն, որ կը փողփողի պահ մը կենդանով: Բայց ամէն քանէ առաջ՝ Տիգրանի հոգիէն: «Ե՛տ, շէ՛տ, կերակուրը կը պաշի...» մինչ ինք՝ ազտոտ ձեռքերը կը մաքրէ, երկունքը կը լուսայ, աշխատանքի միօրինակ ժամերուն իր մէջ լարած մեքենակոնտրիւնը թօթափելով, ժամանակաւոր ազատութեան մը զգացումը կը խլրտի իր մէջ, կը կայտուէ: Զուարթ:

Տիգրան մէկ կողմէն ճամբայ կը բանար, միւս կողմէ՝ այս երջանիկ հետակարը իրմէ դուրս կը յորդէր:

— Այո՛, անպայման՝ երկու սենեակ, մէկ խոհանոց...
 Երթունքները թեթեւ մը շարժեցան: Դաւադրական ժողովի նստած գիմազիները իսկոյն տարտղնեցան ու կրկին ամբաստանեցան: Այս անգամ ցուազին ու ջրամիգ կերպարանքը խորունկ ստուեր մը հագաւ: Թղթախաղերը վերստին ոտքի ելան: Հո՞ծ ամբոխը հսկայ կրիայի մը նման ծանր-ծանր կը դառնար շուրջը: Մտապահներնորու բնուր կը ծանրանար գանկին մէջ, սիրտը մայթերու կշռոյթը կը լարէր ու ոտքերը կ'ենթարկուէին ընդհանուր շարժումին: Հիմա մաս կը կաղմէր այդ զանդուածին, անկէ քաշուած, կրտնակէն քաշելով, ինքը, մնացեալը, որ կ'աղբէր իր հտիւր: Կը յիշէր այն օրը, որ նաւ մը զինջը բերաւ նետեց եւրոպական այս մեծ քաղաքը: Անոր վրայ ձգած առաջին ակնարկը սարսափ մը պտըտուց իր երակներուն մէջ: Հրէշ մը, որ մարդերով կը սնանի, երկաթէ ատամներուն տակ ծամելով գանոնք, արձակելով դէպի երկինք իր անյառ սրտին կիկարական ճիշիւրը: Անմիջապէս, որ ինքզինքը գտած էր երկայն, արեւահար պողոտային վրայ, միտակ, պայուսակը ձեռքին, անշարժ ու չճամ, ինչպէս թաթառի բռնուած թռչուն մը, քաղաքին դիտապատյա պատճառող արագութեան սահմանազուխին վրայ, առաջին անգամ ծովը լողադղի պէս կը վարանէր, կը գողցուէր: Ինքնաշարժները հագին կ'երեւային մէկ ծայրէն, գիւահար արագութեամբ

մը, ակնթարթի մը մէջ, խիաղարհնով օդի ալիքները, հոնդիւններ պայթեցնելով, արդէն կորուած էին միւս ծայրէն: Ու այսպէս անդադար, Մէկը միւսին հետեւէն, Հանրակառքեր, ինքնաշարժներ, տեղափոխուող չեռնե՛րու նմանող բեռնատարները: Պայթեցնելով օդը: Քանի մը օր ետք, այդ սարսափելի արագութեան վրայ կայան մը: Առաջին անգամ, երբ ինքզինքը դէմ դիմաց գտաւ աշխատանքին, սիրտը, որ դադարած ըլլաւ կը թուէր բարսխել, որ կ'սարէր անբոց, միացող կրակի պէս, սկսաւ կրկին իր բնականոն զարկը: Տիգրան ամբողջականութեան զգացումն է, որ ունեցաւ: Երբ յետագարձ ակնարկ մը նետեց այդ քանի մը օրերուն վրայ, շփոցաւ, ոչ մէկ կերպով, դտնել իր ցրուած, փոշիացած, անորոշութեան ու անձկութեան հետ կորսուած անձը: Անծանօթ մը, խոստումներով բեռնաւոր, լուսնային կը փսփարէ ակնշիւն: «Ես աշխատանքն եմ, ապահովութեան եւ տուաճութեան երկրինքը, Հրաշքնիրը ինձմով միայն կը կատարուին»: Առանց այլի-այլի Հաւատաց ան այդ պատգամին: Աւելի՛ն. փութեցաւ անոր իր ամբողջ ուժովը: Կառչեցաւ անոր արիւնով կարմրած եղունգներով: Այնպէս որ՝ ըսկրտաւ իր մէջ սնուցանել յամառ զգուշաւորութիւն մը թուր այն պատճառներուն հանդէպ, որ կրնային դիմքը բաժնել աշխատանքէն: Խուսափեցաւ ուրիշներու մերձեցումէն: Դարձաւ կատարեալ սողուն մը իր աստիճանաւորներուն առջեւ, շարունակ պարտաւոր ընդունելու ամէն տեսակի զոհողութիւն: Եղաւ մենաւոր մարդ մը: Յայթիական կեցուածք մը անկելով, յեշեց պզտիկ դէպք մը, մեծ հետեւանքներով յդի: Առաջին ամիսներու զանաւաշխատաւորութեան ընթացքին ցոյց տուած Հնազանդութեան, նախանձախրնդորութեան շնորհիւ, օր մըն ալ ինքզինք զառաւ մեքենայի մը առջեւ: Մարդը եւ մեքենան դէմ դիմաց: Ու Տիգրան աւելի խրցաւ իր միտակութեան մէջ: Եւ սակայն, երբեք մարդ ըլլալու հաճոյքը այդ աստիճան գիտակցական ու զեղուն շէր եղած անոր մէջ: Այնուհետեւ, ամէն առաւօտ, ան մեքենային առջեւ կ'անցնէր ողորուած տեսակ մը ստեղծագործ Հոսանքով, որ կը իջեցնէ այն պահը, ուր բանաստեղծն ու ճերմակ թուզթը դէմ դիմաց կը դառնուին: Անգամ մը, իրիկուան արձակուրդին, իրիկուան կիսաստուերին մէջէն դէմք մը ցրուեցաւ: Տիգրան սարսուռ մը զգաց ողնայարին երկայնքին: Վտանգի մը, դէշ լուրի մը նախազգացումը: Հապիւ շնչմարել ձեւացը ննելով ցայերը արագացուցած էր, արդէն մարդը ձեռքը դրած էր անոր ուսին: «Բարե՛ւ, ընկեր»: Զգուշաւորութեան ոգին Տիգրանը կծկեց ինքն իր վրայ: Եւ սակայն նոր զգացում մը կ'արթննար իր մէջ միատամանակ: Ինք նալթում:

Անծանօթին ձեռքը տաք էր իր ուսին վրայ: «Ընկեր» բառը քաղցր կը հնչէր ակնշիւն, հակառակ ամէն բանի: Բարեկամ, «Ընկեր» սիրտի մը զատափարը այնքան անուշ թուեցաւ իրեն, որ առանց դժուարութեան քրտեռն ըսաւ: Ու շարունակեց. «Գարծիմ միեւնոյն գործարանը կ'աշխատիս»: «Այո՛», պարոն Մարտիի աշխատանոցը, իմացա՞ր, թէ մեծ գործադուշ մը կը պատրաստուի հղերն: Աւելի առաջ չգնաց: Տիգրանի դէմքը մթազնած էր: Ո՛չ մէկ դիմապիծ կը շարժէր: Նայուածքը սեւեռած միւսին սեւ աչքերուն, որոնք հոն յոնքերու տակ կը փայլէին: Տիգրան ամբողջովին կ'յանուած էր մտածումէ մը՝ «Գործադուշը»: Լաուրիւնը առիթ գտած էր խոսվիչ կերպով Հաստատուելու անոնց միջեւ: Տիգրանի արտին մէջ լուրը կը մեծնար՝ զլորուող միւսազուտի պէս: Կը մեծնար, իրեն Համար ամէն բանի վերջն էր: Առանց այդ ամէնօրեայ կանոնաւոր կեանքին, անորոշութիւնը պիտի Հատատուէր արտին մէջ: «Մրիկաներ», մրմնջեց, առանց գիտնալու, թէ շքե-

Թունքները բացուեցան, օդին մէջ հնչուն ալիքներ կազմեցին ու իր դադող-
նի մտածումը միւսին հաղորդեցին: «Բայց ո՞վ իրաւունք ունի գործուորը
իր մեքենայէն, իր աշխատութէն հեռացնելու: Կր հասկնա՞ս: Ո՛չ ոք: Աշ-
խատանքը սուրբ է, ու այս երկիրը ազատութեան երկիր է», բայտ Տիգրան
վերջապէս, շնչաակի նայելով իր խոսակիցին աչքերուն մէջ: Ջախով մը,
որ իրմէ չէր զար, ժայնով մը, որուն շնչար կը հասկցնէր, թէ դեռ շատ
բաներ կրնար բռնի, միւսը պատասխանեց ու հեռացաւ: «Այո՛, բայց մար-
դիկ անուորը են: Կր ներնս, բնկեր, ես ստիպուած եմ բաժնուիլ: Ուրիշ ա-
ռիթով, չէ՞, կը տեսնուինք դեռ»:

Տիգրան հետեւեցաւ հեռուէն քանուորին, որ կը կարտուէր կիսամու-
թին, լոյսերուն ու մարդոց բազմութեան մէջ: Իրիկուան ստուերը կը խո-
շորցնէր անոր կոնակը: Իրեն աշպէս թուեցաւ, թէ այդ մարդուն հետ ար-
զէն խորհրդաւոր հանդիպում մը ունեցած էր: Այդ հանդիպումէն քանի մը
լարաթ առաջ էր, հանդերձարանը, ձեռքը գրպանին մէջ թուղթի կտոր մը
խնայուցուցած էր: Ու մէկը, ակնթարթի մը մէջ, ստուերի պէս անհետացած
էր: «Մերկի ընկեր, կը հրաւիրուիս, այս իրիկուն, ժամը 6:30ին, Պառ.
Մարիաւսի հասեի քրահը: Օրակարգ՝ Սենտիբանի հայկական հաստուածի
կազմութիւն»:

Մայթերուն վրայ ցնցում մը տեղի ունեցաւ: Մտապատկերները թա-
ւալեցան եւ աներեւութացան: Երկար երազէ մը արթնցողի պէս, աչքերը
բացաւ ապշահար իրականութեան վրայ: Ոտտիկանին ճերմակ, կտր ծայրով
զաւազանը ժողական նշանով մը շարժման մէջ դրած էր կառքերու անվերջ
շարանը: Մայթերուն բազմութիւնը, իր կարգին, ստիպուել էր կունց առ-
նել, փողոցը անցնելու համար: Այդ ընկերումը ելկկտրական հոսանքի նման
անցեր էր մայթին մէկ ծայրէն միւսը: Այդ միջոցին կնոջ մը ժպտար եկաւ
լողալ իր աչքերուն մէջ: Մէկէն, Տիգրան ինքզինք հրճուանքի զազաթնակէ-
տին գտաւ: Ինչպէս որ երազի մը մէջ մեր քայլերուն առջև կը բացուի ա-
ռասպելական ծաղիկ մը, միւնասպիտակ, խոշոր թերթերով, համակ դե-
թանք եւ փորձութիւն, եւ որ քաղելու մեկնող մեր ձեռքերուն տակ ան-
դունդի կը փոխուի ու իր մէջ կը զահալիթէ մեզ, Տիգրան նման սարսուռէ
մը բռնուեցաւ: Իրական ուրախութեան ու պատրանքի մը զգայախարտութեան
առջև, Տիգրան ժպտեցաւ, բայց ի՞նչ ժպտ... երկիտ, անհամարձակ,
դողդոջ, գրեթէ ակամայ, Տկարին ժպտը զօրաւորին առջև:

Մայթերը նորէն սկսան հոսիլ:

Տիգրան աչքերը վերցուց՝ անմկութեամբ հետեւելու համար այդ օր-
րուն զլուխին, որ յայտնուել էր երջանկութեան խոստումով: Գլուխներու
վրայէն կարգապահ ոտտիկանին հարող միայն տեսաւ: Անբաժանելի զանգը-
ւածէն զլուխ մը փրթեր էր յատկապէս իրեն համար: «Ինձի համար...»,
խորհեցաւ Տիգրան: Ու եսասէր զգացում մը յորդեցաւ իր մէջ: Ուռեցաւ:
Մեծ կարեւորութիւն ստացաւ: Քայլերը ծանրացան: Ժպտերեօ զլուխը ան-
յայտացած էր: Անիկա յայտնուել էր զլուխներու մակերեսէն վեր ու կրկին
մխրճած՝ անոր մէջ, ի՞ զուր նայուածքը կը թափառէր աջէն ձախ: Արդեօք
նորէն տեսիլքի մը տո՛ւրք պիտի տար սիրաը: Բարեբախտաբար քուրքը նա-
մակը այդ պահուն սողաց անոր մտածումին մէջ ու լեցուց պարապը: «Մի-
րկի Տիգրան, դեռ չեմ կրնար հաւատալ, թէ տար օր միայն մեզ իրարմէ
կը բաժնէ, նամակս օչային ճամբով քանի մը օրէն քեզ պիտի գտնէ: Ամ-
բողջովին կլանուած եմ մտածումով մը: Մեր հանդիպումը: Տարբ տարի,
երեւակայէ: Մանչուկ մըն էիր այն ատեն, որ պզտիկ քոյրիկդ կ'ապշեցնէիր

հազար ու մէկ հնարքներով: Գրեթէ աստուած մը, ամենակարող: Ինծի այնպէս կու գար, թէ բան չկայ աշխարհի վրայ, որ չկարենայիր բնել: Հայրիկէն այ աւելին: Այստեղ կանգ առաւ մեր ինքնուրու: Մնացեալը ցնդեցաւ մշտնէ մէջ, մինչդեռ թողիմն վարը պիտի խառնուէր, մտեցան աշտերուն՝ «Քեզ սիրող քոյրք՝ Վ. Ստեփանն»: Բայց ի՞նչ պէտք ունէր այդ նա՝ մակին, պահու մը, որ անծանօթ ողբերգի ժպտը եկած զայն հաստէր, ինք նահաւան դարձուցած էր: Յաւազնորէն, Տիգրան զգոց, որ յայտնուած մըն էր, ոչ մէկ աորնչութիւն անցեալի այն մանուկին հետ, որ թեւ կ'ոտնէր արագային վրայ: Բան մը խորտակուած էր այդ վայրկեանէն Տիգրանի մէջ: Իր ինքնագոհութիւնը: Ու անտարակտիկ սանձարձակ փափաքներ ունեցու: Թռչիլ օդերուն մէջ: Աշխարհի ամենամեծ նստը կոտորեցանել: Վարցաւ Վարդանուշին երազները պատռելու զուգարհուն:

Հասնը էր փողոցին ծայրը, ուրկէ կը սկսի կլոր հրապարակը: Զորս կողմը քննելով անցաւ հանդիպակաց փողոցը: Բողոքութիւնը ցրուած էր հրապարակէն ճիւղաւորուող փողոցներուն մէջ: Հիմա աւելի աղտոտ կը շարժէր: Զամբայ բանալու պէտք չուենայր, ջրախուժիւնը հանդարտած էր: Տիգրան մտքին մէջ փնտռող կնախկան երկու դէմքեր, զսառ ու զհետեղեց քով քով հակաթաձեւ շրջանակի մը մէջ: Կարեց մտքին պատէն: Այդ երկու գլուխներուն իր կեանքէն ներս մտնելը անոր մէջ արթնցուց արթնելու բնադրը, զօրաւոր, վտանգաւոր: Կեանքին առջեւ պագած վախն էր, որ դինքը հնազանդ անասունի մը վերածած էր:

Փողոցը կը բարձրանար ուղղակի իր նպատակակէտին:

— Այո, այո, մեծ վիլլա մը, — խորհեցաւ Տիգրան, նոյնիսկ շանդրադառնալով, թէ ի՞նչ էր ըսածը: Փողոցիկ, նեղ քնակարանի մը պատկերը մտքին մէջ, խեղճութեան նողկանքը տուած էր:

Վերջապէս հասաւ մեռելախաղներու քաղաքային շէնքին առջեւ: Հոն էր, որ կը գտնուէր վարձու բնակարաններու հանրային դրասենեակը: Ներս մտաւ:

Առաջացաւ կեսամութ նրբանցքէն: Վարանտ: Պատերուն վրայ սեւ վարագոյններ ցաւուած էին: Յուրտ լուսութիւն մը կը տիրէր: Անմիջապէս խոռոչեցաւ Տիգրան: Մաքին պատկերները ցնդեցան եւ անոնց ծնունդ տուող մտազբաղումը լքեց դինքը: Կը լողար անիմաստ տարտամութեան մը մէջ: Լուսութիւնը, մեռելային ու դժնէ: Նրբանցքներուն գերեզմանային հոտը պահուցիլ պահեցողներ կը նետէր անոր մտքին մէջ: Ինքզինքը այնքան պղտիկ զգաց այդ ցուրտ միջնորտին դէմ: Անգոր ու միեակ: Իր քայլերուն շփու՝ մը գեանին վրայ սարսափի յայտնութիւններով յդի միջնոցը կ'արթնցնէր: Ուժգին կը բարախէր սիրտը: Բոլոր զգայարանները լարուած էին արտաքին օգնութեան մը ապաստումով: Պատերուն հտեւ ականջները մարդկային ձայնի փշրանքներ կը փնտռէին, եւ ահա իր սեփական շնչառութեան, սրտին զարկին ազդուելը, աւելի շնչառուած, կը բարձրանար ու հստառութեան անհամ երեւոյթներուն կը խառնուէր: Կը քաշէր պատերուն տակէն, կարծես անոնց ներկայութեամբ ինքզինքը ապահովելու համար, բայց վարագոյնները կը շարժէին ու կը թափէին իրենցմէ անտեսանելի գոյուցիւններու ողկոյններ: Սիրտը կը ցնցուէր վարագոյններու ամէն մէկ ծանր ու զանգաղ շարժումին: «Ճարտարիւն» կ, — խորհեցաւ, — ի՞նչ խելք: այս մեռելային շէնքին մէջ հաստատել վարձու բնակարաններու դրասենեակը: Մանուկներուն վերեւ ելեկարական լապտեր մը իբրեւ յոյս երեւցաւ իրեն: Լապտերին լոյսը վատուած էր, կարծես թաւային խաւարը մատնանշող: Ճառագայթները

կը ծառայէին դժուարակ պատկերներու զծագրութեան: Տիգրան պահ մը խորհեցաւ քաղաքային վարչութեան, որ ուրուականներէ կազմուած պէտք էր ըլլար: Այսպէս է, որ առաջին անգամ անոր սրտին մէջ ապստամբ նշոյլ մը յայտնուեցաւ: Բայց դառնութիւնը զինքը դրուած ըլլալուն, ատելութիւնն էր, որ դիտեց իր մէջ: Սանդուխին առաջին աստիճանին վրայ դրաւ ոտքը: Լոռիքի կը շարունակէր շատցնել ամէն մէկ շարժումի հնչականութիւնը: Տիգրան սեղմեց շունչը կոկորդին մէջ ու վազեց: Բարձրացաւ աստիճաններէն, հրդեհէ փախչողի մը պէս: Առաջին յարկի նրբանցքները ճիւղաւոր էին եւ երկար, խրած մթութեան ծոցը, հոս-հոն նոյն վատուժ լապտերներով: Նոյնպէս սեւ թաւիչէ վարագոյրներ կախուած՝ վերէն վար, նրբանցքներու երկայնքին, ծալք-ծալք: Իւրաքանչիւր ծալք խորհրդաւոր ուժերու ակաստան կը թուէր: Տիգրան կը վախճար անոնց հպելէն, արթնցնելէ խորհուրդները, որոնք, քնաթաթաւ, անակնկալի կկած կրնային վազվզել նրբանցքներէն խուճապահար: Կենդանութեան ա՛յ մէկ հեռք: Անշարժութիւնը, վհատած լոռիքիներ կը պեղէին Տիգրանի խռոված ուղեղը: Զգուշութեամբ կը քալէր նրբանցքին մէջտեղէն, կրունկները զարնելով տախտակամտին: Յանկարծ վարագոյր մը գլորեցաւ: Տիգրան, որ կը ջանար հեղնել պատկերներու միմտութիւնները, իրապէս սոսկաց: Մարդու մը գլուխը երեւաց վարագոյրին ետեւէն: Տիգրան շունչ առաւ:

— Ի՞նչ կը փնտռէք, երիտասարդ:

Տիգրան կակաղեց: Չկրցաւ ամբողջացնել նախադասութիւնը, Իր ձայնին մէջէն օտար մը կը խօսէր: Զարհուրեալ՝ բան... ճարդ իր ձայնին մէջէն ինքզինքը չլսուէ՞ր... Բարեբախտաբար մարդը հասկեցաւ:

— Միայն չեք, վարը, ճիշդ մուտքի դրան քով:

Տիգրան վերադարձաւ սանդուխին: Վերջին աստիճանին, պարապի մէջ կախուողի պէս, ցնցուեցաւ: Զգացումները, որոնք իր քայլերը առաջնորդէր էին այդ շնչով՝ իրեն շէն ներկայանար: Ժպտուն զոյգ գէմքերը մտքին մէջ չէին: Ինքզինքը սաւորդ բան մը կը դարձ: Վարագոյրները ու դեռ շատ մը առարկաներ, զորս չէր նշմարած՝ մեռելի հոտ կ'արտաշնչէին: Երբ փողոցին դուռը բացաւ, ամպերը կը վազէին երկինքէն: Ինքնաշարժները՝ դեռնէն: Բաց օդին ու խոշոր լապտերներու լոյսին մէջ Տիգրան հառաչեց: Կուրծքին մէջ մանր ձուկ մը թպրտաց: Հառաչը սպառեցաւ, Տիգրան ինքզինքը ողորդուած զգաց տարօրինակ խաղաղութեամբ մը: Ու տեսաւ, որ իր երազին ազլիկը ներս կը մտնէր այն դուռէն, ուրիշ դուռս կկած էր ինք: Աճապարանքով անոր կուրծքին մէջ թպրտացող ձուկը ցատկեց իրձէ՛ դուռս եւ վազեց աղջկան ետեւէն: Իրենց ու գրկեց: Համբոյրի անձրն մը տեղացուց անոր այտերուն եւ շրթներուն վրայ: Աչքերէն հոտոջ ուրբախութեան արցունքները թրջեցին աղջկան երեսները: Բերանին շուրջ, օդին մէջ, բառերու թաթառ մը կը պտուտէր, անկապ, անհեթեթ՝ ինչպէս սէրը: «Ո՛ւ, ո՛ւ, չեմ թողուր, որ հեռանաս... ա՛յ պէտք չէ, որ կորսուիս... գիտնալի՛ր... ոտիկանին անիծեալ ճպտալ... որ բաժնեց մեզ... այո՛, չեմ թողուր... կ'ընդունիս, չէ՞... սիրելիս... սիրելիս...»: Այլեւս պիտի չթողուր: Ո՛ւ, պիտի չթողուր, որ կորսուի... Բայց կը մնար մայթին վրայ՝ անշարժ, վարանտո, երկդիմի: Կը վախճա՞ր ծիծաղելի երեւալէ: Մպասեց քիչ մը: Նայեցաւ երկինքէն փախչող ուժերուն, որոնց ծայրերը կրծուած էին յստակ արծաթադոյն լոյսով մը: Զիդերը սկսան հանդարտիլ ու անմիջապէս անյատարար փոթորիկին տեղ կը վերադառնար հին տղան, որ երկշտ ու անհամարձակ էր: «Քիչ մը կենամ, թող չկարծէ, թէ իր ետեւէն կը

վազեմ...», վարձակալութեան գրասենեակը: Դեղնուած պատեր, որոնց վրայ հաստատուած են խոշոր քառակիւն շրջանակներ, Հասցէները հոն գետնեալած են ըստ տեսակի: Չափ կողմը դուռ մը, որ կը տանէր բուն գրասենեակը, ուր պաշտօնեան գլուխը ծուած էր սեղանի մը վերեւ: Պաշտօնեային կողմը դարձած՝ «Bonsoir, m'sieurs-dames» մը փոփոսաց: Թեթեւ զըրտինք մը թրջեց ճակտին վերեւ մազերուն արմատները: Յօնքերը իջեցուց աչքերուն վրայ, կարճատեսի պէս, կը կարդար գեղադրութիւնները, կրկնելով ինքն իրեն «Մերկու սենեակ, մէկ խոհանոց», մինչդեռ ցուցակը, որուն առջեւ կանգ առած էր, կը ներկայացնէր «պատշերու, ճնալարատուն»երու, «քաղնիքներու եւայլնի խմբակ մը խոշոր խորագրով՝ «Fonds de Commerce»: Աղջկան նայելու փոփոքը տնդիմազրելի էր: Բայց դառնալ անոր հետ խօսելու իսկ գաղափարը, արիւնը գլուխը խուժել կու տար: Կարծեց թէ պատահմամբ է, որ իրենց նայուածքները իրարու հանդիպեցան: Աղջկան ղէմքին վրայ ժպիտ մը կար: Ան է, որ յամառօրէն կ'որոնէր Տիգրանին նայուածքը: Կը ժպտէր: Յետոյ անտարբերութիւն կը ձեւացնէր: Քանի որ քայլ կը նետէր ու նորէն կը բերէր նայուածքը մխրճել իր որսին ապահար աչքերուն մէջ: Տիգրանի աչքերուն առջեւ տողերը դիմեր կ'ըլլային: Գիծերը՝ կէտեր, մինչեւ որ իր նայուածքին առջեւ ճերմակ խաւաքարունը դուռ: Կինը հասկցած էր, թէ անիորձ աղու մը հետ գործ ունէր: Տեսակ մը դրօսաւէր յամառութեամբ կը հալածէր դայն:

Ու օրօրուելով ժօտեցաւ իրեն:

— Կ'երգնում, թէ բնակարան կը փնտէջե...

— Անտարակոյս, տիկին, ուրիշ ի՞նչ կարելի է փնտռել հոս:

Տիգրան զգաց, թէ ձայնը կը դողար: Մտածեց եոյնիսկ, թէ իրապէս իր ձա՞յնն էր: Արդեօք ուրիշ մէկը չէ՞ր իր տեղը խօսողը: Մա՛նուտնը, ա՛նոր համար, որ իր նախապէս պատրաստած նախադասութիւնները տարբեր էին: Ան պիտի ուզէր ըսել, օրինակի համար՝ «Ա՛հ, շո՛ւն ես, ի՛նչ երջանկութիւն... մնացի՛ր, մի՛նակ մի՛ ձգեր գիտ...»: Եւայն: Բայց անիծեալ բաները գամուեր-մնացեր էին իր մէջը: Չէին ուզեր դուռն գալ: Արտասանուած բառերը օտար էին իրեն համար:

— Օրբորդ, — շղթեց կինը, — դեռ տիկին ըլլալու պատիւը չեմ ունեցած:

«Դեռ տիկին ըլլալու պատիւը չեմ ունեցած» կրկնեց Տիգրանի սիրտը: Ըստ աղալոզ շեշտով մը բարձրաձայն՝

— Ներողութի՛ւն... օրբորդ...

— Այն ատեն, ահաւասիկ բնակարաններու ցուցակը, — ըսաւ կինը կէս հեզնոտ, կէս զուարճացող շեշտով մը:

Տիգրան նայլաւ իր առջեւի ցուցակը: «Պատ», բաղնիք, վաճառատուն, քրճարան եւայլն պարեցին անոր աչքերուն առջեւ: Անոնք նայեցան իրարու: Կինը խնդաց: Տիգրան կարմրեցաւ: Բայց ներքնապէս գո՛հ էր, որովհետեւ վստահ էր, որ աղջիկը հասկցած էր իր խոփութեան պատճառը:

Անոնց նայուածքները լուսութեամբ շրջեցան պատի գլուխներուն վրայ ու երբ կրկին իրարու հանդիպեցան, աղջիկը ժպտեցաւ:

— Չեմ համարձակիր, — ըսաւ, — եկած եմ բնակարան վարձու տալու...

— Ա՛հ... — ընդմիջեց Տիգրան: — Բայց ինձի պատիկ բնակարան մը պէտք է, երկու սենեակնոց եւ մէկ խոհանոցով:

Կինը շեշտակի նայեցաւ Տիգրանի աչքերուն մէջ: Ժպտեցաւ: Աչնան բարակ անձրեւ մը իջեր էր, թրջեր սալալատակները ու քաշ-

եր՝ երկինքին շեն պիտեր ո՛ր անկիւնը։ Թաց մայթերը կը պլպլային լապտերներուն ցուլքերովը։

Տիգրան քայնց կնոջ կուշտին, ինչպէս երազի մը մէջ։ Կարճ, խորտուրորտ փողոցներ, մէկը միւսին մէջ մեռնելով՝ զոյգը բերին գունաթափ պանդուկի մը առջեւ։ «Եկուր՞», լսուեցաւ աղջկան ձայնը, ցած, վախկոտ։ Տիգրան, իր ներքին երազին պատճառով, կատարեալ automate մը դարձած էր։ Աղջկան նրբակէր, «եկուր», տրամութիւն մը նետեց անոր հողիին մէջ, բայց հետեւեցաւ։ Պանդուկի հասարակ սենեակ մը։ Պատերէն պազ տպաւորութիւն մը կու գար։ Հիասթափութիւնը շատ զանգաղ եղաւ։ Տակաւին պայծառօրէն չէր ըմբռնեք ցուրտի, զգուանքի եւ փախուստի խառն զգայութիւնը։ Իրեն այնպէս կը թուէր, թէ բառերը կը փախչէին իրմէ, չէին հնազանդեր իրեն։ Ձէր կընար զանոնք դասուարել։ Նորէն ինքզինք շատ պզտիկ զգաց։ Ինչպէս երբ մանուկ էր։ Բառերը տարօրինակ մոզութիւն մը կը գործէին իր վրայ։ Կը ստիպէր զանոնք արտասանել։ Անոնք կընային քանդել երազը։ Երազը լուռ է, մունջ, անձայն։ Սենեակը միայն մէկ պատուհան ունէր ու փեղկերը փակ էին։ Երբեք բացուած չբլլային կարծես։ Պատուհանին անմիջապէս մօտը՝ խարխուլ մահճակալ մը, ցած։ Վրան աղտոտ ծածկոց մը։ Շնիկ մը, դունչը ռաբերուն մէջտեղ, աչքերը սուկուց տրամութեամբ ու կրկին քուն ձեւացուց։ Անդին, փայտի ածուխէ կրակարանի մը վրայ աման մը լոտր կը տաքնար յուշիկ-յուշիկ։ Կինը հաներ էր վերարկուն, ղլխարկը։ Մօտեցաւ Տիգրանին։ Տիգրան չէր շարժեր։ Փախչելու գաղափարն իսկ չէր գար մտաքին։ Մէկու մը պէս, որ չի կընար հեռանալ սիրուած էակի մը մեռելէն, ան փարած էր իր երազին դիակին։ Այդ լուսութեան ու անշարժութեան առջեւ աղջիկը պահ մը շփոթեցաւ։ Ձկրցաւ, ըստ սովորականին, զործածել իր թեւերը, որոնք աւելորդ մասերու պէս կախուած էին ուսերէն։ Յետոյ մօտեցաւ, վերջապէս բարձրացուց թեւերը ու հասաատեց զանոնք Տիգրանի ուսերուն վրայ։

— Օ՛հ, — ըսաւ, — կը վախնա՞ս ինձմէ։

Երբեք արհեստը իրեն այնքան զժուար եկած չէր։ Քիչ մըն ալ՝ կորսուած կուտութիւնը պիտի վերագտնէր։

— Եկո՛ւր... — ըսաւ ձայնը, գրեթէ խնդրոց։

«Մ՛ի վերաուանք տուաւ իրեն հետս եղակի խօսելու», խորհեցաւ Տիգրան ու քայլ մը ետ քաշուեցաւ։

Կինը կրկին փարեցաւ իրեն։ Գգաւեց մազերը, կոթնեցաւ անոր քստն տարեկանի հասակին։ Տիգրանի նայուածքները դէպի ներս կը նայէին ու անոնք աղջկան այնքան՝ զեղեցիկ կը թուէին, որ, պահ մը, իրական տարփանքի շերտութիւնը գրկեց զինք մէջէն։

— Ինձի նայէ։

— Հանդիստ ձգեցէք դիս, ձգեցէք, որ մեկնիմ... կը հահի՞ք... — ըսաւ Տիգրան, որ աշտ մ այնքան խաղաղած կը զգար ինքզինքը։

— Ինչպէ՞ս թէ մեկնիլ, կը կարծես, թէ պարսպ տե՛ղը ժամավաճառ եղայ...

Տիգրան ցնցուեցաւ։ Կինը վերջապէս դիմակազերծ եղած էր, կատակերգութիւնը կանգ տուած էր ու Տիգրանին տուած՝ քաջութիւնը։ Թորունկ զգուանքով մը զրպանէն քսանոց թղթադրամ մը հանեց, շարտեց մահճակալին վրայ ու վազեց դէպի դուռ։

Գուրբ քայնց կարճ փողոցներէն, որոնք իրարու մէջ հոսելով Տիգրանը տարին մեծ պողոտան։ Իրեն այնպէս կու գար, թէ որովհետեւ նախ

ւածքները միշտ դէպի ներս էին, դանկին հորիզոններուն վրայ, այո, այնպէս կը թուէր, թէ երկու սիրուած էակները պարունակող հաւկթաձեւ շքեղանակը ինկած փշրուած էր ու անոր կտորտուքներուն վրայէն է, որ կը քաւէր: Պողոտային վրայ՝ վազելու, փախչելու ցանկութիւն մը կը մտրակէր պայտ: Սկսաւ վազել, էր բարկութեան ամբողջ ուժովը: Բարկութիւնը անոր մէջ վառելանքի պէս կը բռնկէր, ստառած մը բնել կու տար Տիգրանին, որ կը վազէր, կը կենար, կը դանդաղէր եւ յանկարծ, յանձնուելով խելար վազքի մը, սկսաւ փախչիլ: աւելի ինքզինքէն կը փախչէր, քան թէ էր շրջապատէն: Քանի կը վազէր, աւելի կը բարկանար, աւելի կը ջղապրզուէր, որովհետեւ կ'ուզէր իր ետեւը ձգել իր այն ընդդիմադիր մասը, որ կը կուռչէր իրեն, կը տարածուէր իր մէջ, կը շատնար, կը ճիւղաւորուէր: Երկար ատեն ան ինքզինքը անխոցելի հաւատացած էր: Ու բաւական եղած էր, որ զէժը մը երեւայ, ժպտի, յոնքերը պոտէ, թքնէ երեսին, որպէսզի իր մէջ քուն եղած ձայներ արթնան, աղաղակեն ու խառնախնթոր հողմիւրհակի մը մէջ զահալիժեն զինքը: Ժամանակը իրմէ աւելի կը վազէր: Ծէնքերը, փողոցները, քաղաքը նմանապէս մրցումի ելած էին: Փողոցէ փողոց կը մտնէր, կը դառնար մէկ անկիւնէն միւր, արագ, մէքնական: Երբ լայն հրապարակի մը վրայ դառաւ ինքզինքը, նայեցաւ շէնքի մը ճակատին: Խորը ժամացոյց մը մատը տաներկութիւն վրայ դրնէր էր: Դէմի սրճարանէն մարդ մը դուրս ելաւ, ձեռքը սակաւ մը, Թուղթէ ծրարներու տեսքին՝ Տիգրան անթուրիւն զգաց: Յիշեց, զեռ չէր ճաշած: Սկսաւ սուկել պոտտակները եւ ուտել: Քայլերը ինքնաբերաբար դանդաղեցան: Այն ատեն քաղաքը զտուեց իր սկզբնական տեղը, անշարժացաւ ու Տիգրանին երեւցաւ այնպէս՝ ինչպէս որ կը ճանչնար արդէն: Ողորդած մտքին մէջ զտաւ իր սենեակին պատկերը: Ուզեց երթալ պոտակի, մտնալ: Բայց պանդուկին պոտակ տեսքը, հանրատան պէս ընդմիջաւ բաց, նկայեց զտուանքը անոր արտին մէջ: Անենակին առօրեայ գործածութեան առարկաներն իսկ գերծ շնացին այդ զտուանքէն: Անկողինը, որուն մէջ էր մարմինը ոչ մէկ բարեբար հպուժի կը հանդիպէր, եթէ ոչ, ըստ բախտի, իր սեփական մասներուն՝ որ իր գոյութեան տարածութիւն հեշտապէս զգայութիւնը կու տար իրեն: Զտուանքը համառարած էր: Տիգրան վերադարձաւ: Գնաց ծովեզերքը: Հեռու:

Բայց ոչինչ չկրցաւ ցրուել վրդոված մտածումները: Ամէն ինչ կը դըրոշմուէր իր տրամադրութեամբ, կը ստեղծէր միեւնոյն անշնչելի մթնոլորտը: Վերադարձաւ: Նորէն փողոցներ: Մայթեր: Ոստիկաններ: Կնոջ գեղեցկօրէն շպարուած դէմքեր, որոնց ժպտը թղթադրած կը հոտի: Տիգրան ապշած կը նայէր շորս դին. «Ա՛հ, այո՛, — կը քրթմնէր, — վարձու սենեակ...»: Տիգրանի սիրտը կը գտնայնգուէր, կը խլրտէր նոր ուժերով: Նոր փիւնիկ մը դուրս կու գար անոր մոտիկէն: «Աղուոր դաս եղաւ», կը խորհէր ու կը քաւէր դէպի սենեակը: Քիչ վերջը արշալույսը պիտի բացուէր, շորս կողմէն պիտի լուսէին գործարաններու սուլիչները: Տիգրան ակամայ, ականջները կը ցցէր, օքնութեան ոպատող ծովամայրներու պէս:

— Հաւատացէ՛ք, պարո՛ն, գրեթէ ողորմութիւն կը մուրամ... անթութիւնը... Հոս... տեղս մօտ է... — կը փոփսար կնոջ մը խապտո ձայնը: Տիգրան շիմանալ ձեւացուց: Քայլերը արագացուց: Ետևով հասաւ պանդուկ: Ելաւ սենեակը եւ անմիջապէս մտաւ անկողին:


Վերմակին տակ, մտածումները հանդարտած, բայց դէպքին մնացած պատկերներու կտորուանքները դեռ կը դիմադրէին: Քունը չէր գար: Ամբողջ ուժով կը ճպնէր վարապոյր քաշել այդ աննախընթաց օրուան վրայ:

Շփոթ դէմքեր մաքին մէջ իրարու կը յաջորդէին: Անծանօթուհիին զէմքը, զանազան արտայայտութիւններով կը պարզուէր ու ծնունդ կու տար խորածանկութեան խաղին: Ապրելու կոխին: Պահ մը սիրտը կը լեցուէր կարեկցութեամբ, կրկին տեղի տալու համար հրասթափութեան տաղաուկին: Փոխազարձաբար: Եծիքը, — կ'ըսէր Տիգրան սովորաբար ինքզինքին, — ներքին ճիգն է, որ մարդը կը բնորոշէ անասունէն: Ծիպը մարդուն կոխն է ինքզինքին հետք:

Սիզանին վրայ ժամացոյցը ամենայն անտարբերութեամբ երկվայրկեանները կը համբէր ամէն օրուայ պէս: Տիգրանին այնպէս կու դար, թէ ժամացոյցը, որ իր աշխատուորի կեանքին անբաժան ընկերն էր, այդ ճիգին օգնութեան կը հասնէր: Անոր թիջ-թաքս սղոցի պէս կ'երթար-կու դար մտապատկերներուն վրայէն ու ինք, գլուխը վանակին երկարած հնազանդ մահապարտին նման, վերջին խաղաղութեան կը սպասէր: Գունը չէր գար: Կը դառնար ար, կը դառնար մար: Գլուխը կը խոթէր բարձին տակ, բայց թիջ-թաքս կ'արիւնէր զգացումները, ինչպէս շարուած դանակը աջուրի մը վրին վրայ: Գիշերային խաւարը, մեկուսացած, միջոցէն անջատուած սենեակին մէջ, զառանցանքներու գործարան մը կ'ըլլար: Տիգրան, երեւակայութեան ուժ տալով, սարսափ ունեցաւ: Տասկեց անկողնէն: Դարձուց ելիկարական կոճակը: Լոյսը ժայթքեցաւ շորս գին: Լոյսը եւ խաւարը իրարու բախեցան աչքերուն մէջ: Մասներով ճճութեան աչքերը, ուժգին, շտապով, շնչատ: Կարծես մութին մէջ թշնամին խեղդամահ կ'ընէր: Ու երբ աչքերը բացաւ, լոյսը ժպտեցաւ իրեն: Ինքն ալ՝ լոյսին: Ժամացոյցին զարկը իր ամէնօրեայ իմաստը ստացաւ: Գաւթ մը ջուր խմեց: Լոյսը մարեց: Վերմակին տակէն փախեր էին խոռվարար պատկերները: Խաղաղութիւնը կ'իջնէր, կը տարածուէր բուրմունքի նման: Թարթիչներուն մէկ ծայրէն ներս սահեցաւ քրոջը զէմքը: Մանկութեան յիշատակներ մը լուրի մը մէջէն տողանցք ըրին: Տողանցքը յառաջացաւ հեռուոր ցամաքներէ, լեռներէ, ծովերէ, եւ ահա, խելահաս, հասուն կնոջ մը զէմքը կ'առաջնորդէր անցեալի կարաւանը ու կանգ կ'առնէր ներկայի կայարանը: Տիգրան կեանքը աւելի շօշափելի կը զգար: Ահաւոր պարապութեան մը զագլուխիւնը, իր հոտը, տեղի կու տար սիններու, օրոնք կը կանգնէին հաստատուն բռնելու համար շէնքը: Երբ Տիգրան իրայէս հասկցաւ ապահովութեան վերադարձը, աւելի կայուն հիմքերով, շրթները մեղմօրէն շարժեց մութին մէջ. Երայց ի՞նչ արդիւնքի յանգեցնել ճիգը... Ի՞նչ կատարի հասցնել...»:

Սւ այս խորհրդածութիւնը հարթեց, ներգաշնակեց անոր միտքը, համակերտն ծրարիներու միապաղաղ հոգեմթնոլորտին մէջ: Գունը վրայ հասաւ, բացաւ թեւերը, փռեց մահապարտին վերեւ... քունը... անուշ քունը... խորունկ... Գիշեր բարի...»

ՁԱՐՆՆՆ ՈՐՐՈՒՆԻ



...Ո՛Վ ԼԱԼԱԳԷ

*Մեր Յուլիսի համարին մէջ առած էինք
Դանիէլ Վարուժանի «Ո՛Վ Տալիքայ և Վաղուա-
նական» քանաստեղծութիւնները, հետեւեալ նո-
թով.*

*«Երանիչ Վարուժանի «Ո՛Վ Տալիքայ և
Վաղուանական»ը, որովհ շեղանաւ երգերնու
կարգ մը քանաստեղծութիւններուն հետ գայ-
քակիցուցած էին իրենց ժամանակակից բարո-
յախօսները, Հայաստանի մէջ վերջերս գործեալ
իմպրոյ առարկայ դարձան, յուզիլով քեր ու
դէմ կարծիքներ:*

*«Այդ մասին կարդալ մեր այս քիւի մշտ-
րը»:*

*Ազգայնական նշանը լոյս չտեսաւ, նոյն հա-
մարին վերջին էջին վրայ յայտնուած զանգի
անմկութեան պատճառովն: Զայն կը ներկայա-
ցընենք այս թիւով, իսկ անկէ առաջ կ'արժէ ան-
գամ մը ևս կարդալ «Ո՛Վ Լալագէ»ը, որուն ա-
ռաջին սպաղարութեան հետ սկսաւ գայթակղած
բարոյախօսներուն անկեղծութիւնը:*

Կը յիշե՞ս, ո՛վ Լալագէ. —
Ես քեզի հետ, ծանր ամիսն յղղութեամբ,
Այգիիս մէջ մամ եկայ
Պըտղաքերն օր մը աշնամ:

Մայրամուտին շողերուն տակ դավկահար
Ծառերն էին ոսկեհալլ:
Եւ ողկոյզներն աչքերու պէս հըրեղէն
Քաղցրութիւններ կը ծարէին հողին վրայ:

Օ՛ իմ այգիս, օ՛ իմ այգիս կուքֆի՛ մէջ...
Հաքիւրաւոր ժիր գերիմերըս հըլու՛
Երկայնքն ի վեր ցանկերուն՝
Կը կըթէին սարքիմամ.
Եւ կողովներն հիւսուած էին հրաշագեղ
Մայրամուտի ոսկեհալլ նշույլներով
Անապատի սմծամօք երգ մը՝ շուրքին,
Եթովպուսին խընճարեմին կը թօթուէր
Ծիծերն ի վար, գոգին մէջ:
Հոն, տըղաներ խառնածին՝
Կանանչացած, լեղակէ թուխ ձեռներով՝
Կը ժողվէին ընկաշգներ:
Անդին, բլուրէն վար, դէպ՝ Քաղաքը, նըընչուն,
Մեծդի եզներ, որոնց եղջիւրն այգեպանն
Որթատունկի սաղարթներով է պսակեր,
Կը քաշէին սայլերն ամբողջ բնոնաբարձ
Ողկոյզներու դէզերով
Եւ ալիքով գինիի:
Եւ փարշին մէջ, աղբիւրներուն վրայ բալօր
Տերեւներ լի՛ւզ, տերեւներ լի՛ւզ կու գային...

Արդ յիշեցի՛ր դու այն օրն, ո՛վ կալագէ:
Ակօսներուն եւ կողերուդ ընդմէջէն,
Այն ծանր ամիսն յղութեանդ,
Կանցներ ալիքն հողին յարող ուժերուն:
Արեգակի արիւնին նուռն էր՝ ծոցիդ
Մէջ եասունցած: Բուններն ի վար ծառերուն
Կը ծարէին շիթ առ շիթ
Հոյզերը՝ նման արցունքի:
Քու համբուրուած մարմնիդ պէս ծանրակիր
Հողն էր թըրջուած, էր կըպչուն
Քաղցուններով եւ մեղրով:
Անուշաբայր իր բռնին տակ կը կըքէր
Գեղձներն քե՛զ նրամակ,
Քու ծիծերուդ նըմանակ
Ողկոյզներն այն լեցուն էին՝ ապագայ
Ծիծաղներով, ցընծութիւնով եւ կայքով:
Ու իրիկունն այն՝ կ'ուէր կո՛ւրծէր հողին...
Հընճաններուն քովէն անցանք մեմք դիւթուած
Խաղաղութիւն բարկ բուրումէն:

Գերուհիներ, պարեգօտնին հանգրքեմած
 Մինչեւ իբնց պարտին վրայ,
 Կը կոխէին խաղողն ատո՛ք՝ թըրչելով
 Մինչեւ իրենց պարտին տակն, ո՛վ Լալագէ՛:
 Վայրածըփիկ մագերնուն ծայրը համակ
 Կը ճերկուէր բոտրագեղ հոյզին մէջ
 Եւ ինչո՞ւ իրենց՝ հընարոյր լայն կարասներ
 Նուիրագործուած ամէն տարի, ծոցիդ պէս,
 Լեցո՛ւն էին զիմիներով — ծոցի՛դ պէս —
 Լեցուն շողո՛վ, յաղթանակո՛վ, բերկրանքո՛վ,
 Յաւերժակա՛մ կեանքներով:

Հետըդ անցանք ծիծաղներու, երգերու
 Մէջէն ասոյց, գար աշխատող հոգիներ
 Կը պոռթկային տիրեններուն ներքեւէմ.
 Ու բարումներն աշունին
 Կը հասնէին միւլչեւ աստղերն արծարծուն.
 Ու այզին, լի պլուտուղներով քաղմագան,
 Կարծես կ'այրէր, կը ծաւալէր խունկ մ'անուշ
 Վա՛րը, մինչեւ Քաղաքին վրայ հեքանոս,
 Քաղաքի՛ն վրայ որ միշտ, տօնի խրախի մէջ,
 Կը սլառէր հողն ու աւիշները հողին:
 Այն ասեմ (թո՛ւլ կու տա՞ս ինձ
 Խաստովանիլ, Լալագէ՛)

Եւ անեցայ ընդվրգումներ արիւնի:
 Ու ցանկացայ արեգակին, հողին պէս
 Ռոտացընել ինձ մերձեցող ամէ՛ն հունու.
 Ու — թո՛ւլ տար ինձ խոստովանիլ, Լալագէ՛ —
 Երբ դում անդին՝ կարկառուն ճառը ծառէն
 Կը ճաղէիր, ու յետոյ
 Կը խածնէիր լիարերան հեշտամէով
 Անոր բոտր մարգրիտներուն շարքն անուշ՝
 Եւ ասդին թուխ եթովյուսին — որ ջլեբաց՝
 Հընձամին մէջ կը ճըմլէր կուզն —
 Համբուրեցի՛... բընած հընդիկ ծամերէն
 Պառկեցուցի ժըպտագին գլուխը կուրծքիս,
 Եւ հեշտաբո՛ւրն շըրքներով, Լալագէ՛,
 Համբուրեցի՛...:

... Բայց դուն ինչո՞ւ կ'արտասուես:
 Այն հեռաւոր աշունին
 Բարումներուն մասնըչուքեանը համար,
 Ո՛վ աշնագեղ Լալագէ՛,
 Արտասուել չ'արժե՛ր այսօր: —

ԳԱՆԻԿԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Բ. Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Ճ Ա Խ Ա Ր Ա Կ Ը

— Տղաս, գնա՛ դուռը բաց, — ըսաւ մայրս:

Ան կարկտուքով դրողած էր, իսկ ես փէջոս Պիլի վերջին արկածախնդրութիւնները կ'ուսումնասիրէի:

Ոնդրանքը կրկնեց մայրս:

Մեծ մայրս եւ մեծ հայրս տունը չէին այդ օրը, այցելութեան դացած էին: Վստահ էի, որ եթէ անոնք տունը ըլլային, մէկը կամ միւսը պիտի կարենայի համոզել: Մայրս դուռ բանալու պէս պատասխանատու գործ մը չէր վստահած ինծի: Ներկայ պայմաններուն տակ, գրեթե ողորմած բացարձակ վստահութիւնը հեռու էր ինծի հոգեկան հրճուանք պատճառելէ: Մա՛նաւանդ խնդրանքին շեշտը զայն կը վերածէր աւելի հրամանի: Դանդաղորէն ոտքի ելայ պառկած տեղէս — ըսաւ կը սիրեմ դորսին վրայ երկնալ — անցայ նրբանցքէն: Գորգին վրայի ծաղիկները հազար անգամ եւ աւելի տեսած էի: Բայց եւ այնպէս՝ այսօր աւելի եւս կը հետաքրքրէին անոնք զիս: Ծռած՝ ուսումնասիրեցի զանոնք եւ շարունակեցի դէպի դուռ: Աւելի տիրական էր խոհանոցին հմայքը իր մէջի սառնարանով: Պիտի ուզէի աւելի երկարել ճամբաս, մտնելով ո՛չ միայն խոհանոց, այլեւ՝ դըրան ճիւղ քովի սենեակը, ուր հանդուցեալ հօրեղբորս փողը կը գտնուէր, կապոցներու, սնտուկներու մէկ անկիւնը: Երբեմն կը փնտռէի այդ նուագարանը, հիմա ալ թերեւս պիտի փնտռէի զայն, եթէ մէջս արթնցած չըլլար հետաքրքրութիւնս, որ զիս դէպի դուռ կը մղէր:

Դուռը բանալով տեսայ մարդ մը: «Բարեւ», ըսաւ: Ես զինքը վարէն վերջնեցի: Վերէն վար կարելի չէր ինծի համար: Հինցած կօշիկներ հագած էր, նոյն-

պէս՝ մաշած վերարկու մը, վիզէն արկղ մը կախուած էր: Իր երկու ձեռքերը կը հանդէսէին այդ արկղին վրայ: Արեւի ակնոց մը զրած էր այս անարեւ օրով: Թերեւս այս վերջինը եւ ձեռքերը դէպի ինծի երկարելը պատճառ եղան, որ ես սովորական ՎՄայրի՛կ, դուրսը մէկը կայ՞ նախազատութիւնը ըսեմ յատուկ շեշտով մը: Առեւանգող գնչուներու մասին շատ բաներ կը պատմէր մեծ մայրիկս եւ ես առեւանգուիլ չէի ուզեր: Երբ մայրս վաղելով հասաւ քովս, տեսայ, որ մարդը գաւազան մը ունէր ձեռքը եւ, անոր ապաւինելով՝ զգուշօրէն ոտքերը առաջ կը քշէր: Մարդը կոյր էր:

— Վստա՛հ ես, որ կոյր է, — հարցուց Դաւիթ՝ մեր դասարանին առաջնորդը, — սովէնքս ալ կը յարգէինք զինք: Ես առանկ կոյրեր շատ տեսած եմ:

— Այո, — ըսաւ Պաշիկ:

— Մէկը կար, որ իշխամբային առջեւը կը կենար, — ըսաւ Դաւիթ:

— Այո, այդպէս էր, — ըսաւ Պաշիկ:

— Հոն կը կենար եւ կը մուրար, — ըսաւ Դաւիթ:

— Եւ ինչպէ՛ս, — ըսաւ Պաշիկ:

— Օր մը իր գլխարկէն հինգ ոսկի գողցայ, — ըսաւ Դաւիթ:

— Տեսա՛յ, տեսա՛յ, այգերով տեսայ, — ըսաւ Պաշիկ:

— Ետեւէս կը վազէր կոյրը: Հէիոգ սօկիս ետ տուրք կը պոսար, — ըսաւ Դաւիթ:

— Կը պոսար, կը պոսար, — ըսաւ Պաշիկ:

— Կ'արժէր տեսնել կոյրին վաղելը:

Երեւակայէ՛. կոյրին վազելը, — ըսաւ Դաւիթ:

— Եա՛տ, շա՛տ, — ըսաւ Թաշիկ:

Շարաքներ անցան: Ես միշտ սպասեցի կոյրին: Վերսկոչեցի այդ օրուան զպացումներս: Հակառակ մօրս ներկայութեան, ես դեռ կը վախնայի: Ոչ թէ օտարի մը ներկայութենէն: Օտարներ շատ տեսած էի մեր տան մէջ եւ ոչ մէկէն վախցած: Կարծեմ մարդուն կուրուքիւնն էր, որ վախ կը պատճառէր ինծի, իր ունեցած պակասը: Անիծեալ մըն էր ան: Երթալէն յետոյ զգուշացայ իր կոխած տեղերը կոխելէ: Բազմոցին այն մասը, ուր ան նստած էր, ինծի համար արդիւուսած դօտի մըն էր այլևս:

Գիշերները ես յաճախ տեսայ կոյրը: Էլհամբայի առջեւը նստած ինծի կը նայէր եւ «Ձիտ ճանչցա՞ր» կ'ըսէր: Երբեմն մի մութ նրբանցքին վրայ զանուող սենեակներէն մէկուն դուռը կը բացուէր եւ ան դուրս ելլելով ուսերէս կը բռնէր: Ես կը խուսափէի գիշերները նրբանցքէն անցնել: Ես մութէն կը վախնայի:

Առանձին եղած պահերուս, աչքերս գոցելով կը քալէի տան մէջ: Կը ջանայի անոր աշխարհը պատկերացնել ես ինծի: Ինքզինքիս արտօնած էի երբեմն աչքերէս մէկը բանայ, Եթէ Դաւիթին ըսածը չիտակ էր, ան բոլորովին կոյր չէր կրնար ըլլալ:

Գանի մը շարաք ետք, գրեթէ ամբողջութեամբ մոռցայ թէ՛ կոյրը եւ թէ իր գիշերային այցելութիւնները: Համարձակեցայ նոյնիսկ մութ նրբանցքէն անցնել: Կարեւորութիւն չտուի գուռին զարնուելուն: Առաջին օրերուն հեքով մը կը վազէի դէպի դուռը, յուսալով, որ ան է զանգահարողը: Մօրմէս առաջ կը բանայի դուռը, բայց ան չէր: Մեր բարեկամները յուսարեկ երես տեսնելով կը ննդուէին, մայրս ինծի կը հարցնէր, թէ արդեօք չե՞մ ախորժիք մեր հին բարեկամներէն: Ոչ մէկուն պատմեցի զաղտնիքս:

Յը մը, չսպասած մէկ օրս՝ եկաւ:

Ո՛չ գուռը զարնելը եւ ոչ ալ գորգին վերայ քալելը իմօցայ: Մօրս օգնութեամբ դնաց բազմոցին թով եւ նստեցաւ: Եթէ չեմ սխալիր՝ նոյն գորշ վերարկուն հագած էր, կարկուտած նոյն — նո՛յն — սեւ կօշիկները, որոնք մաքրուելու պէտք ունէին: Այդ օրն ալ սեւ ակնոցները չէին պակներ: Վիզէն կախուած էր նոյն արկղը, որուն բովանդակութիւնը ցարդ չէի կրցած տեսնել, Վիզէն հանեց արկղը եւ բազմոցին մէկ կողմը զետեղեց զայն: Տեսց եւ մատներովը սաստրեց ալեւեր մազերը: Յոգնած ըլլալ կը թուէր: Տարիքը զուշակելը դիւրին չէր ինծի համար: Հօրմէս աւելի տարիքոտ էր, բայց մեծ հօրմէս աւելի երիտասարդ: Որքա՞ն կ'ուզէի քննել արկղին պարունակութիւնը: Մայրս եկաւ, ձեռքէս բռնեց եւ քովը տարաւ:

— Ահաւասիկ, զաւակս, քեզ պարոն կարասպետին ծանօթացնեմ:

Ձեռքս ձեռքին մէջ առաւ: Միւս ձեռքս ալ վրան դրաւ: Մէջտեղը մնացած էր ձեռքս: Կակուղ, տաքուկ ձեռքեր ունէր: Մերթ շոյնց, մերթ սեղմեց: Երեսին արտայայտութիւնը հասկնալ կարելի չէր ինծի համար: Աչքերը կը պակսէին, այն աչքերը, որոնք սեւ ակնոցներու ետեւ սպաստան գուած էին:

Մազերս շոյնց եւ ձևատուած պահէ ու պահպանէ՞մ մրմնեց: Բերանը ճմռեց, բայց յայտնի չեղաւ, թէ ինչ կ'ուզէր արտայայտել: Ետեւի լսած էի այդ օրհնութիւնը: Երբեմն յուզուած, երբեմն ալ զուարճացած էի: Բռնած դիրքս կախեալ եղած էր ըսողէն: Ետտակեր, շատախօս զթանթիկներուս պարագային՝ ընդհանրապէս խնդացած էի: Այս անգամ ո՛չ զըւարճացայ եւ ոչ ալ յուզուեցայ: Նուզ կանգի նման զգացում մը համակեց զիս: Ձեռքս ձեռքէն քոչեցի եւ սկսայ քննել արկղը: Ինչե՛ր չկային մէջը: Ասեղներ, զնգասեղներ, որոնք, ըստ մեծութեան, դասաւորուած էին փոքրիկ տուփերու մէջ: Կային նաեւ զանազան ճախարակներ՝ մեծեր եւ պղտիկներ, խաւաքարոտ եւ հաստ փայտէ, վրանին գոյնզգոյն զերձաններ փաթթուած: Ուրիշ անկիւն

մը՝ մատնոցներ, մկրտանք եւ կարի, կարկտուղի համար անհրաժեշտ իրեր գետեղուած էին: Ամէն ինչ դասաւորուած էր, ինչպէս որ պիտի ըլլար սովորական խանութի մը մէջ: Բայց եւ այնպէս՝ խանութի տպաւորութիւն չէր թողուր: Դերձանները մասամբ իրենց դոյնը կորսընցուցած էին եւ մկրտանքը թեթեւ մը ժանգոտած:

— Ասոնցմով ի՞նչ կ'ընէք, պարոն Կարապետ, — Հարցուցի:

Մեծ Հայրիկս ձեռքի կարուկ շարժումով մը լռեցուց զիս: Եարունակեցին իրենց խօսակցութիւնը: Այլեւս յոգնած էր ասնորոններէն վեր ելլալէն: Իր բախտէն էր ինչ, յաճախորդները միշտ վերի յարկերը կը բնակէին, իր տարիքը ունեցող մէկու մը համար շատ դժուար էր գործը:

— Կրնամ երեւակայել, — ըսաւ մեծ Հայրիկս, — շատ դուրս կ'ամ շունիմ, բայց հոս՝ վերէն կը տեսնեմ, թէ որքան լաւ կ'աղբի կ'անցնին դուրսէն: Չանոնք տեսնելով քեզ կը յիշեմ: Ետտ վտանգաւոր բռնեմ ես:

— Հոտին ի՞նչ կ'ըսես, սարսափելի բան է: Իրենց այդ հոտէն եւ աղմուկէն զվտուս ցար կը բռնէ: Իրիկունները երբ տուն վերադառնամ, կը տառապիմ ցուերէս:

Եարունակեցին իրենց խօսակցութիւնը: Իմ սիրտս նեղուել սկսած էր: Այցելութեան եկած էր: Վիզէն արկղ կ'ախուած հիւր չէինք ունեցած: Եթէ բան մը ծախել կ'ուզէր, ինչո՞ւ զինք ներս կանչած էր մայրս: Կը պատահէր, որ դուռէն կարգ մը բաներ զնէինք: Կը յիշեմ զնշուհին, որ ճերմակեղէն կը ծախէր յարմար զինով: Կար նաեւ յոյն մը, Պարպտ Երզնկոն, որ մեզի կալէքա, կարկանդակ կը բերէր: Քիչ թէ շատ՝ բաներ մը կ'առնէինք իրմէ: Ամիտ մը հաք, վերբասին կու գար եւ իր հասակէկ ձայնով եւ յոյնի յատկանշական առողանութեամբ կ'ուղղէր իր սովորական Հարցումները: Ինծի համար աւելի հետաքրքրական էր կ'ալազործ Մուսթաֆան, որովհետեւ ան մեր անփայլ ամանները կը վերագարձընէր շողջողուն վիճակի մը մէջ: Չէր պա-

տահած, որ ասոնք եւ կամ միւս շրջիկ վաճառորդները հիւրասենեակ կ'անչէինք: Պիտի ուղիք մօրս սկանչն ի վար փսփսալ հարցում մը, որ թերեւս պիտի պարզէր այս խորհուրդը: Չկրցայ, կոյրը խօսիլ սկսած էր մօրս հետ:

— Այս անգամ ի՞նչ կ'ուզէք ատեն, տիկին:

Մայրս երկու օր առաջ Պէյոզլու գացած էր, կարգ մը բաներ մոռցած պիտի ըլլար: Գնեց քանի մը ճախարակ դերձան՝ զանազան գոյններով: Տունին մէջ մկրատ կը պահուէր հաւանաբար, որոհեաւ երկու հատ ալ մկրատ դէպք: Կարգ մը ուրիշ բաներ եւս: Մարդը շնորհակալութիւն յայտնեց, իր տարտամ քայլերով, որոնք ինծի համար աւելի ինքնավատան ըլլալ կը թուէին, քայնց նորբանցքն ի վար եւ դուրս ելաւ: Ես դրան ետեւը կեցայ եւ մտիկ ըրի իր քայլերուն եւ գաւազանին մարմարեայ աստիճաններուն վրայ հանած ձայները, մինչեւ որ անոնք անլսելի դարձան: Յետոյ՝ վաղեցի դէպքի պատուհան եւ տեսայ մարդը: Դանդաղորէն կը շարունակէր իր ճամբան: Ես հայեացքովս հետապնդեցի զինք, մինչեւ որ անհետացաւ ամբողջին մէջ, որ դէպքի թաքսիմ կը խուժէր:

Այս այցելութեան յաջորդող օրերուն ընթացքին ուշադրութեամբ դիտելի մայրըս: Նոյնիսկ անգամ մը շտեմայ իր նոր ճախարակները եւ մկրատը գործածելը: Ի փոխարէն՝ տեսայ մեր ցոլացող մկրատը, որուն սրութիւնը քանի մը անգամ փորձելու առիթը ունեցած էի: Ո՞վ կ'ուզէր գունատ դերձաններով կար կարել եւ ժանգոտած մկրատներով աշխատիլ: Իրեն Հարցուցի, թէ ինչո՞ւ զնած է: Երեսո նայեցաւ, ժպտեցաւ եւ «Տօրդ մի պատմեր» ըսաւ: Մեծ Հայրիկս խորունկ շունչ մը քաշեց եւ զոտն շեռ հասկընար» ըսաւ: Մեծ Հայրիկս Հարցնելու պէտք չտեսայ այլեւս, իր պատասխանը շատ տարբեր պիտի չըլլար:

— Իմ կարծածէս աւելի նարպիկ է ձերինը, — ըսաւ Դաւիթ՝ քանի մը օր ետք: Զբօսաբեի ատեն էր եւ մենք գըն-



զակ խաղալէն յողնած՝ բակին մէկ անկիւնը քաշուած էինք: Վա՛յ անպիտան, վա՛յ...

— Այո, — ըսաւ Խաչիկ, — շատ մեծ անպիտան...

— Էլ չամբայի առջեւի մուրացկանէն աւելի խորամանկ է: Ան պարզապէս կը մուրար, իսկ քուկինդ իբրեւ թէ բան կը ծախէ կ'որ:

— Գիտե՞ս, — ըսաւ Խաչիկ, — Ենի ճամբին առջեւը այլանդակ պզտիկ տղաներ կան, քանի...

— Վա՛յ անպիտան, վա՛յ, — ըսաւ Դաւիթ:

Ջանդակը հնչեց, դէպի դասարան քալեցինք: Դաւիթ զեռ զլուսը կը շարժէր: Խաչիկն ալ նոյնը կ'ընէր:

Քանի մը ամիս է, որ կը գողնում: Քանի մը ամիս է, որ մեզի այցելութեան — ծախելու եկող կոյրին ճախարակները կը գողնում: Իր աչքերուն առջեւէն, որոնք իբրեւ թէ բան չեն կրնար տեսնել: Իր աչքերուն մէջ նայելով, տեսնելու համար, թէ կ'նշ պիտի ըսեն անոնք: Ուշին կ'ըսեն: Բուրբոյն անտարբեր են: Մեր բոլորին կարծածէն աւելի խորամանկ է ան, զիբաւ չի մտտեր ինքզինք: Կը վերցնեմ մերթ ճախարակ մը, մերթ զնպաստեղի առիթ մը եւ մերթ մկրատ մը: Մենեակս ճոխ հաւաքածոյ մը ունիմ արդէն: Գիշերները, անկողին մտնելէ առաջ՝ ներքնակին տակէն կը հանեմ եւ կը քննեմ հարստութիւնս:

Մտադրեալ կողմէ բռնուելու վախ չունիմ, քանի որ սենեակիս դուռը ամուր մը դոցած եմ ու բանալին դարձուցած: Միայն թէ կողպուած դուռը դիւ կոյրէն չի կրնար պահպանել: Ուզած ատենը ներս կը մտնէ եւ, աչքերը վրաս սեւեռած — այդ պահերուն վստահ եմ, որ կոյր չէ ան — ես կը պահանջէ իր ճախարակները: Կը սխալեմ, կը վազեմ նըրբանցքն ի վար: Կը վազեմ ու կը վազեմ եւ կը դգամ մարդուն տաք շունչը ծոծրակիս վրայ: «Օգնութի՛ւն», կը պոռամ՝ անոր թաթը ուսին վրայ դգալով: «Ի՞նչ կայ», կ'ըսէ ձայն մը: Հայրս է, վրաս ծոծած՝ ուս կը շոյջէ: «Վախնալիք բան մը չկայ, քովդ եմ»: Ձեմ գիտեր, թէ մղձաւանջի մէջ մտանցի՞մ ձօրս դադար

նիքը: Կոյրը ինծի հետ աւելի լոււ կը վարուի: Ուստի՝ ես աւելի համարձակօրէն կ'երկարեմ ձեռքերս: Վստահ եմ, որ բան մը պիտի չըսէ:

Ուրիշ՞ գտար ատենք: Չգտայ, պարզապէս դողցայ: Ինչպէս որ դուն էլ չամբայի առջեւը կեցող մուրացկանէն հինգ սոկի դողցած էիր: Ես ատանկ բան չեմ ըրած: Դուն պատմեցիր: Միայն պիտի ըլլայ: Ես վկայ չեմ, այդ օրը հոն չէի եւ: Բայց դուն ըսիր, որ...: Միայն հասկըցած պիտի ըլլաս: Ինծի ալ...: Եթէ իսկապէս կ'ոյր է մարդը: Ինչպէ՞ս կը համարձակես...: Այո, ինչպէ՞ս կը համարձակես...: Ամօթ է, ամօթ...: Այո, ամօթ է եւ շատ ամօթ...: Այսինքն՝ դուք...: Բնականաբար ոչ...: Այսինքն՝ ոչ, ոչ թէ այո՛՝ ոչ...: Էլ չամբայի առջեւի մուրացկանը...: Կա՛յ որ այդպիսի մէկը...: Ձեմ գիտեր...: Ամօթ, շատ ամօթ...: Եթէ մարդը իսկապէս կ'ոյր է...

Կը նշանակէ, թէ ես անոնցմէ աւելի քաջ եղած էի: Անոնք միակ խօսքով քաջ էին: Մեր դասարանին հերոսը՝ Դաւիթ, ինծի համար այլեւս հերոս մը չէր: Ի՞նչ նազդաբար ինքն ալ զզացած էր ատիկա, որովհետեւ, ամէն ջանք կը թափէր՝ ինծի շնանդիպելու համար: Բաջադործութիւնս շատով տարածուեցաւ դասարանին մէջ, նոր հերոսը ես էի այլեւս: Ես ատերը հետս պատահտուածի պէս կը վարուէին: Արտաքնապէս կ'այլանէին ըրածքս, բայց իրենց աչքերը կը մատնէին, թէ կը հիանային վրաս: Զրոյց կար, որ ես սնտուկներով լիցուն ապրանք դիզած եմ: Թող այդպէս կարծէին: Ուզողին շուրջովին բացատրեցի, թէ ինչպէս դիզած եմ այդ աներեսակայէի հարստութիւնը: Ուշիմ ունկնդիրներէս մէկը Խաչիկն էր, Դաւիթ անկիւն մը քաշուած անվերջ իր եզունգները կը քննէր: Ծատ հետաքրքրական պէտք է ըլլային անոնք: Ես կ'ըմբռնէի կողոթիւնը:

Օրերը ինծի համար ալ աւելի հանձնի դարձած էին: Եռանգով կը վազէի դպրոց: Մտադրեալ կարծիքով վերջապէս սկսած էի սիրել դպրոց կուլուած վայրը:

Շիտակ էր, իսկպզէս հաճոյք ատենի ըս-
 կրած էի: Գիշերները անտանելի դար-
 ամծ էին: Անվերջ վէճերու կը բռնուէի
 կոյրին հետ: Նեղ գրութեան մէջ կը
 գտնուէի, քանի որ ան — չեմ գիտեր, թէ
 իրեն ո՞վ պատմած էր — կը մէջբերէր
 Դաւիթի յայտնի նախազատութիւնը. «Ա-
 մօթ է, չա՛տ ամօթ»: Ձէր պակսեր նաեւ
 այդ նախազատութեան կրկնութիւնը, զոր
 ես միշտ «արձագանդը» կոչած էի: Հա-
 բարութիւնս, զոր իմ սեփականութիւնս
 կը նկատէի, պատրաստ էի տալ, դռնէ՛
 մասամբ: Միայն թէ՛ վերջ տար իր մե-
 զադրանքին: Ընդհակառակն, ձայնը ա-
 լելի կը բարձրացնէր, կը գոռար: Ականջ-
 ներս կը դռնէի, բայց ի դուրս: Արթնցայ:
 Կոյրը անհետացած էր, բայց դեռ կար
 ձայն մը: Չայրացած ձայն մը: Ոտքի ե-
 յայ, սենեակիս դուռը բացի: Չայնը ա-
 լելի յտակ կ'իմանայի, հիւրանոցէն կու
 դար անիկա: Մատներուս վրայ կոխելով՝
 մօտեցայ սենեակին: Հօրս ձայնն էր: Այդ-
 ի՛նչ էր, խայտառակ բաներուն համար
 դրամ տուած էր: Դերձա՛ն չէր մնացած
 քաղաքը: Մայրս գիտէ՛ր արդեօք, թէ ինչ
 տանջանքներով կը շահէր ան դրամը: Օ-
 րը քանի մը ժամ աշխատիլ պէտք կ'ըլ-
 լար: Հոգին բերանը կու դար յոգնութե-
 նէն: Յետոյ լուրթիւն:

— Կարծեմ դուն բանէ մը լուր չու-
 նիս, — ըսաւ մայրս, — պարոն Կարա-
 պետը կոյր է, ի ծնէ կոյր: Ունի կին մը:
 Ան ալ իրեն պէս կոյր: Ունի երկու դա-
 ւակներ, անոնք առողջ են եւ չափահաս:
 Կապելընին կտրած են իրենց ծնոցքին
 հետ: Դուրուչ մը անգամ չեն տար: Մար-
 դը ստիպուած է աշխատելու: Եւ անոր
 համար տունէ տուն կը պտրտի, բաներ
 մը ծախել կը փորձէ: Շատ անգամ ալ չի
 յաջողիր: Միշտ կ'ուզէ ստացած դրամին
 փոխարէն բան մը տալ: Արժանապատ-
 տութեան սէր է մարդը...

Աւելի չկրցայ գիմանալ: Ձեմ գի-
 տեր, թէ ուրիշ ինչ պատմեց մայրս:
 Միայն գիտեմ, թէ ես անապարանքով
 սենեակս վազեցի, անկողինս մտայ, վեր-
 մակը վրաս քաշեցի եւ երկա՛ր, երկա՛ր
 լացի:

Մըրըր ձեռքս՝ դուռէն դուրս նետ-
 digitised by A.R.A.R.®

ւեցայ: Շատ հեռու դացած չէր կրնար
 ըլլալ: Մտ ժամ մը առաջ եկած եւ քա-
 նի մը բուլէ առաջ մեկնած էր: Սենեակս
 քաշուած եւ հետապնդուածին համար ան-
 հրաժեշտ պատրաստութիւնները տեսած
 էի: Մըրըր շատոնց պատրաստ էր: Կը
 քաշէր դէպի թաքսիմի հրապարակը: Կը
 քաշէր դանդաղ, գաւազանովը քննելով
 ճամբան: Քայլերս անոր յարմարցոյցի:
 Անօթի էի, որքա՛ն պիտի ուզէի ճշանօ
 սրնեմայի քովի խանութէն ներս մտնել
 եւ կաթնապուր մը ուտել: Վստահարար
 ինձի բան մը պիտի չծախէին, տարի-
 քըս պզտիկ էր եւ զբոսան պարտազ:
 Ժիշ գրան քովը մարդ մը նստած
 էր: Մարդը գիրուկ էր, իր գիրուկ մատ-
 ներով դգալ մը բռնած էր, դգալը բեռ-
 նաւորուած էր կաթնապուրով: Մարդը
 բերանը բացաւ, կաթնապուրը անհետա-
 ցաւ բերնին մէջ, դգալը երեւցաւ վերըս-
 տին, մարդուն կզակները աշխատիլ սկի-
 սան: Հօրս կաթնապուր պիտի ապսպրեմ:
 Անպայման պիտի բերէ ան: «Շան» սի-
 նեման անշարժ լուսանկարներով դիւ շար-
 ժանկարին քաշել կ'ուզէր: Ինձի չեն խօ-
 սիր անշարժ լուսանկարները: Թաքսիմի
 հանրային պարտէզի պահապան տրիւ-
 ները, հակառակ իրենց վայրաղ արտա-
 քներին՝ հանդարտ կը կենային, օդին մէ-
 ջը ստուած ուտումով: Ձիւ չէին վախ-
 ցըներ անոնք այլեւս, ինչպէս պատահած
 էր, երբ մայրս դիւ անոնցմէ մէկուն վը-
 բայ բարձրացուցած եւ տիրապետելու
 զգացումը տուած էր: Դողացած եւ գողա-
 լով տիրապետած էի: Մինչ կոյրը կը շա-
 բունակէր քալել: Աւելի ետքը, մարմարէ
 մուտքով ասն մը առջեւը կեցաւ եւ ներս
 մտաւ: Ես կեցայ խանութի մը հակայ
 ցուցափեղկին առջեւ եւ հիացումով դի-
 տեցի ցուցադրուած ինքնաշարժները՝
 չքեղ սէ՛ղաքոնները, շողացող փլայնաթ-
 ները, տոկուն սքոսաղպէյքրները: Եր-
 կար շտեւեց վայելքս, կոյրը վերադար-
 ձաւ: Երեսի արտայայտութենէն բան մը
 դուռակնէ կարելի չէր: Հրապարակը
 ինչպէս միշտ՝ խճողուած էր: Երկուն լու-
 սանկարիչները պատրաստ էին հինգ բո-
 պէէն անցորդներուն լուսանկարը քաշե-
 լու: Ոչ մէկը հարցուց, թէ ես կ'ուզե՛մ
 լուսանկարուիլ: Ուրիշներ թարմ սիմի-

ներ կը ծախէին: Ձանոնք տեսնելով՝ յիշեցի անօթութիւնս եւ պարտապարտեալս: Իմ տարիքիս տղաք էին ծախողները, թե՛րեւս անոր համար կրնայի հարցիւն, թէ...: Տեսնելով անոնց սփռոյն երեսը, անօթի աչքերը, հրաժարեցայ հոգեւորական Պէտրոսէի անոնց սփռոյնէն: Կոյրը աչքէ չկորսնցնելու համար: Աւելի մօտեցայ իրեն: Հիւսկատոսարանին առջեւը մարդիկ պիտի շարժուէին զեռանք: Ոմանք անձայն կը կենային անոնց առջեւ եւ կը թերթէին ու կը կարդային: Քայլեր աւելի դժուարացած էր, հիմա, որ ուղղակի Պէտրոսը կը գտնուէինք: Միայն հրեւրէի կոյրը կորսնցնելէ եւ բռնուելէ: Հայրս շատ մը ծանօթներ ունէր հոս: Եթէ անոնցմէ մէկը զիս տեսնէր եւ ճանչնար: Կոյրը նորէն տան մը մէջ անհետացաւ: Էլ համարային առջեւը մուրացկան չկար, կար միայն թերթ ծախող տղայ մը: Սարային առջեւը մարդիկ պիտի մըտած էին: Կը վախնայի բռնուելէ եւ նոյն ատեն կը վայելէի արտօնութիւնը: Առաջին անգամն էր, որ առանձին կ'անցնէի մյուս ճամբաներէն, եւ ինծի ծանօթ այս մարդերը բոլորովին տարբեր կ'երեւային: Ծամբուն երկու կողմի ճաշարաններուն չէի նայեր այլևս: Երբ ինքներս ծրարներով բեռնաւորուած եւ յոգնած՝ կը քաշէին անասան: Կը քայլեր նաեւ կոյրը: Իր քայլերուն մէջ կը կարծէի տեսնել իր յուսահատութիւնը: Ամէն անգամ, որ դուրս ելլէր, սաստկացող տենդով մը կը մօտենայի իրեն եւ հասցնեպօրէն կը քրնելի արկղը: Բայց ան չէր պարպուեր: Անցանք ննի Մէլէքի եւ Աթլաթի առջեւ: Կոյրը քրամվայի կայանը հասնելով կ'եցաւ: Կայանի վայրէջքէն ինչեքէն մօտէն կը գտնուէինք: Առանց վարանումի առաջին եկող թրամվայէն ներս մտաւ: Գործէն վերադարձող մարդոցմով լեցուն

էր կառքը: Ձեռքերնին ծրարներով, յոգնած մարդոցմով, որոնց յոգնութիւնը տեսանելի էր. ուժաթափ կը նստէին եւ կամ բռնակներուն կը յանձնէին ինքզինքնին: Թաքսիմէն ետք, թրամվայը մասամբ պարպուեցաւ, կոյրն ալ նստելիք տեղ մը դուրս, նստեցաւ եւ պարտապարտեալը դրաւ լեցուն արկղին վրայ: Փողոցները պարպուիլ սկսած էին: Մարդիկ իրենց տունը կը փրաղաւանային: Հարպիլէի զօրանոցին ժամացոյցը ժամը եօթը ցոյց կու տար: Կոյրը Վայ-Լայֆօնի առջեւը թաքսի, թրամվայը իր ճամբան շարունակեց դէպի Շիշի: Անտօթները իրենց լոյսերը վառել սկսած էին: Ճերմակող տանող ճամբուն երկու կողմի ձկնափառաները մնացող պարանքները լամբարի մը լոյսին օգնութեամբ կը ժողովէին: Մայր պողոտան ձգած՝ ինծի անձանթ քոյնսի փողոցներէն մէկէն ներս մտած էինք: Տուները երթալէն կը փոխուէին: Բազմաթիւ շէնքերուն տեղ՝ հոս երկու յարկանի շէնքեր կային: Փողոցները փոշոտ էին, պարզապէս հողէ: Ամբողջն ատենը չկային այլևս, փայտալէն, միայն յարկանի խարտուլ խրճիթներ կը տիրէին հոս: Կոյրը խրճիթներէն մէկուն առջեւ կ'եցաւ, ներս մտաւ: Բաց պատուհանին տակ դէբը բռնած էր: «Գո՞նն հո», հարցուց կնոջ մայր մը: «Ես հո», ըսաւ կոյրը ստեն մը հոք: «Ինչպէ՞ս անցաւ», ըսաւ միշտ տկար մայրը: Մտաւ դրան առջեւը ձգեցի եւ վազելով հեռացայ: Ղեկ էի հեւ մեր տան սանդուխներէն վեր սլացայ: Ձանգակը չզարկած՝ դուռը բացուեցաւ: Հայրս էր: «Վերջապէս եկար», գոռաց: Ապտակեց զիս: Գնդալ սկսայ: Աջ ձեռքս տարաւիս զրպանը, վերջին ճախարակը ամուր բռնած, կը խնդայի: Պարզապէս կը խնդայի:

ՐԱՅՅԻ ԳԼԳՈՒԳՅԵԱՆ

ՕՐ ՄԸՆ ԷՐ, ՀԵՌՈՒ...

Ճամբաները սուսերից հետ մեկնեցան,
 Քայց ընտանի ձայնապնակը կ'երգեր.
 — Քեզի համար հեռացումի մամբայ չկայ, սիրելիս:

Այդ խոստացումն սուսին համար,
 Այցելունքու հայեցմներում մէջ,
 Իբրև քախճառ պատմութիւն՝
 Փնտեղի անդուլ յայտնութեան ցոլներ,
 Ու յայտնարեր ցոլներում հետ շագախում՝
 Ես ունկնդրել կարծեցի
 Լուսիւնը՝ քեզէ դատարկ իրերու:

Օր մըն էր, հեռու...

ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ԱԱՀԱՆՆԷՆ ԴՈՒՐԱ...

Քեզ գտնելու համար կրկին
 Հարկ է, որ գամ
 Տարածութեան սահմանէն դուրս:

Ու հաստատեմ բնակութիւն
 Քաղաք մը, ուր
 Դիմակներու զատորոշման ձեւեր չկան:

Ու գտնելէ առաջ ես ճեզ
 Վերակերտած անունդ հուր՝
 Շշուկ-շշուկ ես բաշխուիմ ամենում մէջ:

Հանդիպումը ըլլար այսպէս
 Ու փակուի՝ աչքերուդ մէջ՝
 Տարածութեան սահմանէն դուրս...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

Ա. Ա Բ Է Լ Ե Ա Ն

Պ Ա Ն Դ Ո Կ Ը

Ամենեք անցան :

Երաժիշտը չէր բարիւնք դիտ : Զէր փոխադարձեր բարեւիտ : Իր խօսակցութիւններուն մէջ նուազ յաճախ կը յիշատակէր Հայաստանը :

Եղբայրս միշտ կը թելադրէր ինձի սրբազրել պատահածը : Ան պանդուխտին մէջ չէր հանդուրժեր գոտութիւն եւ լարուած մթնոլորտ : Ես ալ անհանդիստ կը զգայի այդ ուղղութեամբ : Եղբայրս կը պնդէր, որ մեր բարկութեան վրայ արհուր ժայր չմտնէ : Համաձայն էի : Բայց Է՞նչ ըսէի, ըսէի, որ ես սխալած եմ եւ իր տեսակէտնե՞րը ճիշդ էին : Կը յետաձգէի այդ պահը, այլ տոբիթի մը սպասելով :

Երաժիշտին կեանքը իմաստաւորող վիպային այլ ներկայութիւն մը կար : Պանդուխտի ընտանիքին դեռ տնտնօթ, ստուերի նման գոյութիւն մը : Քաղաքի հիւանդանոցներէն մէկուն մէջ, գիշերային հերթին գործող Խոնա անունով հիւանդապահուհի մը :

Անսխալ ճշդապահութեամբ, հիւանդապահուհին իր գիշերային հերթը ստանձնելէ առաջ, ամենայն հաւատարմութեամբ, հետաձայնային հաղորդակցութիւն մը կ'ուսնենար երաժիշտին հետ : Անոնք, հետաձայնին ընդմէջէն, օրուան անցուդարձերուն վերաբար կ'ընէին եւ կը ճշգէին յաջորդ հանդիպումին վայրն ու ժամանակը : Երաժիշտը իր առողջական վիճակին մասին մանրամասն զեկուցում կու տար : Հիւանդապահուհին իր հոգածութիւնաբարձիւններն ու առողջապահական պատուէրները կը կատարէր :

Երաժիշտը հիւանդապահուհին հետ իր մտերմութիւնները խիստ ըզգուշաւոր եւ սահմանափակ տարրողութեան մը մէջ կը պահէր : Մարդոց հետաքրքիր աչքերէն եւ բամբաստող լեզուներէն խուսափելու ջանքով՝ ան Խոնան պահած էր որոշ հեռաւորութեան մը վրայ : Առիթով մը միայն, պանդուխտի յաճախողներէն մէկը, իրիկուան կիսամութիւն, հետուէն տեսած էր հիւանդապահուհին՝ իր փոքր ինքնաշարժով, երաժիշտը պանդուխտի հասցնելու ատեն : Անձրեւոտ օր մը ըլլալով՝ երաժիշտը անապարանքով պանդուխտի մտած էր : Հիւանդապահուհին փոքր ինքնաշարժը, կարմրորակ, բացափող լոյսերով՝ անհետացած էր անձրեւախառն կիսամութիւն մէջ :

Ամէն գիշեր, ուշ ատեն, երբ պանդուխտի աղմուկները զատրէին եւ իջեւանողները մէկկիւմ-մէկիւմ իրենց սենեակները քաշուէին՝ վիսաւոր գաւիթին մէջ գտնուող հետաձայնը կը հնչէր : Երաժիշտը կը վերցնէր ընկալուչը, կը շտկէր ակնոցները, օձիքը : Կը հազար :

Մեր սենեակէն, ես ու եղբայրս, դեռ սերտադութեամբ զբաղած՝ գի-

չերուան լուսթեան մէջ կը լսէինք անոր տաքնապահար ձայնը: Հետամաշ- նին միւս ծայրէն հասնող կնոջական հոգածու նախադասութիւններուն եւ գուրգուրոտ արտայայտութիւններուն ի լուր՝ անոր ձայնին մէջ ինքնավա- տահոթեան շեշտ մը կ'աւելնար: Վերանորոգուելիք կեանքի մը հաւանակա- նութիւններով խրախուսուած՝ երաժիշտը կը գոցէր ընկալուչը եւ կը շտա- պէր սենեակը:

Երբայրս պահ մը կը գոցէր գիրքը: Չարթուցիչը կը լարէր, յետոյ, խօսքը ինծի ուղղելով՝ կը հարցնէր.

- Ի՞նչ եղաւ երաժիշտին հետ հարցոյ:
- Նոյնն է:
- Ձե՞ս բարեւեր:
- Կը բարեւեմ՝ չի փոխադարձեր:
- Խօսեցա՞ր իրեն այդ մասին:
- Ի՞նչ խօսիմ:
- Ձե՞մ գիտեր: Ինծի համար կարելոքը այս կացութեան վերջ մը տան է, — կ'ըսէր մտահոգ լեշտով մը եւ լոյսը կը մարէր:

Այդ կացութեան վերջ մը գրուեցաւ Կաղանդի գիշերը:

Պանդուկը ունէր իր աւանդները: Անոնց կարգին՝ Կաղանդի գիշերնե- րուն մասնաւոր շուք մը վերապահէն էր: Բոլոր իջեւանողները, նորեկներ թէ մնայուններ, իրենց այդ օրուան ծրագրերնէրը կը դասուորէին ա'յնպէս, որ Նոր Տարուան գիշերը կարելի ըլլար մէկ սեղանի շուրջ համախմբուել՝ առանց բացակայութիւններու:

Մեկնողներուն բարի երթ, նորերուն՝ բարի գալուստ, եւ բոլորին՝ բարի Նոր Տարի մաղթելու համար, հարկ էր, որ բոլոր վերապահութիւն- ները վերնային, վերանորոգուած սիրով բարձրացուէին բաժակները եւ երբ գիրք ժամը հասնէր, քաղաքի բոլոր աղմուկները, հրացանաձուլութիւնները, սուսերն ու նաւահանգիստ խորխոսած նաւերուն ահաղանդային ճշակները յայտարարէին Նոր Տարուան ժամանումը, ողջագուրումները ըլլային ինք- նարուխ, անխարդախ ու ջերմ:

Ո'րքան մօտենար Նոր Տարին, ա'յնքան աւելի մտահոգիչ կը դառնար ինծի համար երաժիշտին հետ գծուած մնալս:

Ո՞վ գիտի ըլլար սառոյցը կոտորոյ:

Դեկտեմբերի վերջին օրերն էին: Պէլլուսթի երկինքը յոգնած էր: Կար- կըտախառն անձրևը անհանգիստ հեւքով մը կը Ծեծէր վերելակին հունը պատսպարող թիթեղեայ երդիքը: Երաժիշտը, թանձր վերարկուի մը մէջ պաշտպանուած, վիզնոցը շտկելով՝ կը սպասէր վերելակին:

Մօտեցայ իրեն, դէմքիս շատ բնական արտայայտութիւն մը տալով: Բարեւեցի: Առանց իր պատասխանին սպասելու՝ Կաղանդի գիշերուան հրա- տէրը փոխանցեցի:

Երաժիշտին խորը ինկած աչքերը վարանեցան պահ մը, բայց չկրցան խուսափել նայուածքէս: Ան կարծես կ'ուզէր հարց տալ, թէ ինչո՞ւ ինծի վստահուած էր գիւնք հրաւիրելու պարտականութիւնը:

— Անչուտ աջորտէնը չէք մոռնար, — աւելցուցի, որպէսզի իր շփոթ- թը նկատած ըլլալս ծածկեմ:

Մինչ այդ, վերելակը հասած էր: Շտապով բացաւ գուռը ու երբ կը պատրաստուէր ներս մտնել՝ ըսի.

— Իսկան ալ միտին բերէք:

Չկրցայ իմանալ իր հակազդեցութիւնը:

Առաջին անգամն էր թերեւս, որ բացայայտօրէն իրեն կը խոսուէր հիւանդագաղտուհիին մասին: Մինչ այդ, պատանհկան ամօթխածութեամբ մը, զայն ծածուկ պահած էր: Գաղտնագաղտութեան թրթրոց յաւելեալ մտերմութեամբ մը զուսուտրած էր իր այդ յարաբերութիւնը, որ յուսարեկամներով յիշուին իր շտափաշտի արդէն իսկ կապարագոյն հորիզոնին նոր լուսաւորած մը ըլլալու սահմանուած էր:

Գնկեմերի վերջին օրուան յետիջօրէին ամէն ոք եւջով կը պտտասուէր ասնական գիշերուան: Իրենց մասնակցութիւնը լուսոյն արձազուրկեամբ բերելու հետամուտ՝ բոլորը անսովոր խանդավառութեամբ մը վարակուած էին: Միայն ես անմասն էի այդ խանդավառութենէն: Եւ անձկութեամբ կը սպասէի երաժիշտին, վերաբաղի ենթարկելով բոլոր նախադասութիւնները, զորս զարծածած էի՝ զինք անզեակ պահելու համար կազանդի հուաքոյթին:

Սեղանը արդէն պտտաստուած էր, երգն ու կենացները իրենց թափը ստացած էին, երբ երաժիշտը, թէև վարանոտ, բայց յոտակ զոհուածութեամբ մը ներս մտաւ՝ կտնայի ընկերակցութեամբ: Փորձեց անկաս անզաւորուիլ անկիւն մը, կտնային հետ հրապարակային եւ հանգիստօր այդ երեսմէր անազմուկ անցընելու ջանքով մը, բայց ներկաներուն հակազդեցութիւնը իր փափաքներէն կտնեալ չէր: Մարդոց նայուածքներն անզամ կրնային նեղացուցիչ ըլլալ այդ պահուն: Նախ՝ փորձեց պաշտպանուիլ նախածքներու, մաղթանքներու, բարեկալուստի եւ այլեւայլ անկարելութիւններու ստաբիլի: Յետոյ՝ անդի տուաւ: Ապա, հուանարար, թաքուն պարձանքով եւ ներքին միջամտութեամբ փնտոնց նոյնիսկ այդ բոլորը: Անսոց՝ մով նուիրազործուած, իրազործուած, բացայայտօրէն իր սեփականութիւնն էր այլեւս այդ մտերմութիւնը:

Առանց աստամուսուծի, շտապեց սենեակ՝ աքորտները բերելու, երբ էրձէ ինզրեցին նուազել:

Ամէն կողմէ նախադասութիւններ եւ առաջարկներ տեղացին:

Կտնային քոշ հեռաւորութիւն մը պահած, նուազարտներն յենած, խորհրդաւոր ու անհանգիստ լուսութեամբ մը՝ երաժիշտը լսեց աստարկները: Լուռ էր նաև հիւանդագաղտուհիին եւ այլքերը անձկութեամբ անոր վրայ յառած՝ կը սպասէր: Որո՞ւն ինզրանքը տակի տալ պիտի կատարուէր՝ ի՞նչ երգով պիտի սկսէր իր ամանորեայ ելուիքը: Երաժիշտը անսովոր կերպով լուռ եւ բացօրոջ կերպով ասանազամ կը թուէր ըլլալ:

Յանկարծ շտկուեցաւ: Լայն շունչ մը տտաւ, նուազարտներ տակի հաստատ տեղաւորեց թիւերուն մէջ, անէի ուժգին սեղմուեցաւ անոր: Նախածքը շատ արագ եւ անցողակի հանդիպեցաւ կտնային:

Ամէն ոք լուռ էր եւ լուսութիւնը հեղուկէն ճնշող կը դառնար, երբ երաժշտութեան առաջին նոթերը երեբացին, տարածուեցան, հարցական եւ անակնկալի եկան դէմքերուն վրայ: Միայն չէինք: Մեծարենցի Վիլյէրմ անուշ է՞ք երգն էր: Քսանդրինք տարի ամբողջ, կապանքներու ասկ մնացած զգայնութիւններու, շիրականացած տենչերու, փոթորկումներու տալտապրումը կար երգին իւրաքանչիւր թրթրին մէջ:

Երաժիշտի յոգնած թոքերուն հեջով՝ աքորտներն ծալքերը կը դալարուէին, կը ասանապէին եւ բանաստեղծութիւնը, երգը, բանաստեղծութեան իւրաքանչիւր սոսքը, երգին իւրաքանչիւր գոգը անզամ մը եւս կը ասանդազործուէին:

Երաժիշտը ամբողջ մարմնով կը ցնցուէր, մասները աւելի հմտորէն կը սահէին ստեղծարարին վրայ: Ան իր տարերքով գինովցած՝ չէր իսկ նուշմարեր Ամսնորի համար սեղանին շուրջ հաւաքուած հողիները, անոնց առաջարկները եւ գոյութիւնը: Նոյնիսկ չէր նկատեր իտեան, որ իր աթոռին վրայ լուռ եւ անշարժ, նոյն հեռաւորութենէն, սև. հոռու աչքերով կը դիտէր այնքան մագնիսով՝ երաժիշտին խոսվալոյզ դուրսը, աչքերը, որոնց հեռաւոր խորութեան մէջ, արցունքի կաթիլներ գոյութիւն կ'առնէին:

Ատիկա իր եւ երաժիշտի կեանքին ամենայատկանշական դէպքը նկատելու երկիւղածութեամբ մը՝ Շահան բաժակը արին մէջ պահած, փղձկելու պատրաստ, կ'ուզէր լիովին հազարապիտից դառնալ իր արտակիցին զեզումնեքուն: Արոչ սոկոսով մը, ի՛ր ալ տանապահները, զգացումները, փոթորկումները արտայայտութիւն կը գտնէին հոն: Ինք վաղուց արդէն գրած էր իր ներաշխարհը այնպէս ապրումները անքակտելի կապանքներու տակ, բայց ասիկա արդեւէ մը չէր, որ երաժիշտը, ի միջի այլոց, արտայայտութիւնը չդառնար նաեւ իր ներշնչումներուն: Չէ՞ որ այնքան կէտերու մէջ կը նմանէին իրարու, այնքան հարցերու մէջ համաձայն էին միշտ:

Ժամացոյցին սյաքները արդէն տասներկուքին կը մօտենային: Դուրսը՝ անհամբեր որոտներ, հրացանածուրթիւններ, ոչին մէջ արձակուած բազմադոյն աստղերով պայթուցիկներու փունջեր կը դիմաւորէին Նոր Տարին:

Ներսը, սեղանին շուրջ, անջատ-անջատ ձայներով սկոտած, ապա՝ միաձայն ու լիաշունչ, Մեծարկնցի երգը կը հնչէր բոլորին հոգիներէն, երաժիշտին աջորտէնին հետ ներդաշնակ:

Անձրեւները ուշ սկսած էին տեղալ այդ տարի եւ հօրեղբայրս բաւարար ժամանակ չէր ունեցած պատասպարելու եւ ձմեռնային խնամքը տալու պատշաճ-տանիքը եզերող քաղմագոյն ծաղիկներուն ու տունկերուն:

Երբ ցուրտն ու հեղեղները հետզհետէ աւելի սաստկացան եւ թաղարներուն հողը սկսաւ աստիճանաբար պարպուիլ՝ յորդող ջուրերուն հետ, բոյժ սերուն մերկ ու անպատասպար արժատները դուրս մնացին:

Արձակուրդի օր մը յատկացուցինք տանիքը յարգարելու եւ բոյսերը պատասպարելու համար: Ձիառի խանդավառ մասնակցութեամբ եւ հօրեղբորս ցուցմունքներով՝ պատշաճը փակուեցաւ իր ձմեռնային պատեանով:

Պանդուկին ձմեռնային կեանքը աւելի խոզազ կ'ըլլար: Գլխաւոր սրահին մէջուկը զետեղուած ալաւտին վերմոցը, Պաղտատէն բերուած, որակաւոր պատրոյգին կապոյտ ու հանդարտ բոցով իր շուրջ կը հաւաքէր տարեցները, Ընդհանուր լուսթեան մէջ, մշտապէս հոացող թէյնիկին ձայնը կը տիրակետէր, որուն կախարիչը՝ շողիի ալիքներուն ճնշումով անհանդարտ կը պարէր: Մինչ շուրջը հաւաքուած ծերերը թերթ կը կարդային, կամ լիտ գիտեր ինչ կորսուած յաջողութեան կամ դալիք ո՛ր երջանկութեան հաշույն թղթախաղի քարթերով բախտ կը բանային:

Անդորրը կ'ընդմիջուէր միայն ամժօ Ղազարին միօրինակ ու մանրաքայլ երթիւնկով՝ սրահը զետեղուած ստանաբանէն խոհանոց իրեր եւ ուտեստեղէն փոխադրելով, միշտ նոր վառած սիկարէթ մը շրթներուն եւ աչքերը կետախուփ՝ սիկարէթի ծուխէն: Ամժօ Ղազարի հերթական ու կանոնաւոր երթիւնկը այդ անդորրութեան կ'աւելցնէր ապահովութեան երանգ մը, թէ՛ ամէն ինչ կարգին է, թէ՛ հակառակ դուրսի ցուրտին ու հեղեղին, հակա-

ուսկ անդրազ ու ձանձրացուցիչ նկատուկացին՝ աշխատանքները կը տար-
 ւէին աստիճան, ճաշերը կը պատրաստուէին, սմանները կը լուացուէին: Պան-
 դուկին խոհանոցէն մեկնելով՝ կարելի էր մտածել քաղաքին ընդհանուր կա-
 ցութեան մասին, թէ՛ բոլոր վաճառատուններուն մէջ, զործատեղիներէն, զբա-
 րաններէն, զստարաններէն ներս, դեսպանատուններուն գաղթի ու
 ճամբորդութեան բաժանմունքներուն մէջ աշխատանքները կ'ընթանային ան-
 խոչընդոտ եւ կեանքը իր ընթացքը կը պահէր: Եւ քանի որ այդպէս էր, կա-
 րէի էր այլեւս անփոյթ ու անշտապ վէպ կարդալ այսատիկի մօտ, բախտին
 նայիլ ծուլորէն եւ նոյնիսկ, մէջընդմէջ, կարճ մրափ մը առնել ու յօրան-
 ջնել երկա՛ր:

Այլ անխոյզ մթնոլորտին մէջ, միակ տաղնապողը հաւանաբար Շա-
 հանն էր: Անոր համար տեղ մը սխալ մը գոյութիւն ունէր, թերեւս նոյնիսկ
 ամէն տեղ: Ամէն քը ինքն իր մէջ հակասութեան մէջ էր: Կը մտածէին, կը
 գործէին հակասութիւններով: Նոյնիսկ կ'աղբէին հակասութիւններով: Հե-
 տաքըքրականը ա՛յն էր սակայն, որ անոնք հաշտ էին, կամ թերեւս անտեղ-
 եակ այդ բոլորէն: Օրինակ, սա ճամբորդական գրասենեակի պատասխանա-
 տու պարոն Մկրտիչը ամէն կէսօր պանդոկ կու դար ճաշելու, կը սիրէր ու-
 տել, ուտելով խօսիլ: Կ'ուտէր, գարեջուր կը խմէր ու շէր դերնար: Տարի-
 ներ առաջ պաշտօնակից եղած էր իրեն: Ուրեմն՝ ծայր տասիճան գործնա-
 պաշտ էր:

Շահանն կը հետեւէր իր նախկին պաշտօնակիցին շարժումներուն, կը սե-
 առէր հետուն եւ անխօս կը վառէր ծխամորճը:

Հիմա, պարոն Մկրտիչը գինք չնկատուաւ առտիճան խանգաղառ խօ-
 սակցութեան մը մէջ էր: Խօսակիցը, Ամերիկայէն նոր ժամանած, պարոն
 Մանուէլեան անունով մէկն էր: Անոր ճաղատին գիծը թէեւ բաւական նա-
 հանջած էր եւ ճերմակներ կ'երեւէին մնացած մազերուն մէջ, բայց եւ այն-
 պէս, անոր ամերիկեան անձը հազուադէպ, տաք խօսակցութիւնը, ինքնավա-
 տասութեան շնոր բառերուն վրայ, ո՛չ մէկ կասկած կը ձգէր, որ հետա-
 քըքրուած էր որոշ չափով դարգացած պէյրութեցի հայուհիով մը, որ շու-
 տով միանար իրեն ու միասին մեկնէին Միացեալ Նահանգներ:

Բուրումնաւէս ծխախոտի քուրայ-քուրայ ծուխերուն ընդմէջէն Շա-
 հանն նկատեց, որ պարոն Մկրտիչ ցաւալիտիցն քաղաքավար էր իր վարուե-
 լակերպին մէջ: Այնպէ՛ս կը խօսէր, այնպէ՛ս կը վարուէր, որ վստահ կրնա-
 յիւր ըլլալ, թէ յաջողած, չըջապատին կողմէ յարգուած ու սիրուած անմա-
 լարութիւն մըն է:

Շահանն կծկուեցաւ իր բազկաթոռին մէջ, մարդոց հանդէպ իր վստա-
 հութեան ու կապերուն նօսրացած ըլլալը աւելի եւս արդարացած գտնելով:
 Մինչ այդ, պարոն Մկրտիչ աւարտած էր իր բանակցութիւնները ամերիկա-
 հայուն հետ, որ զգուշաւոր, բայց արագ քայլերով սահած էր պանդոկէ
 երկրորդ յարկը:

Հաւանաբար իր սենեակը հոն է, մտածեց Շահանն:
 — Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ... — գոհունակ ձայնեց պարոն Մկրտիչ, եւ օրա-
 թերթը վերցնելով սեղանին վրայէն, արագ ակնարկով մը վերնադէրնները
 կարդաց եւ մօտեցաւ Շահանին:

— Հէ՛յ, Շահանն, երկար ատենէ ի վեր ձայնդ չեմ լսած. ո՞ւր ես,
 ի՞նչ ջուրերու մէջ: Հէ՛յ, ամժօ՛ Ղապար, մեզի երկու պաղ դարեջուր բեր.
 տաք թէ՛յ, Շահան, թէ՛ պաղ դարեջուր: Պա՛ղ դարեջուր: Ուրեմն երկու պաղ
 դարեջուր, ամժօ՛ Ղապար, — կրկնեց պատուէրը եւ տեղաւորուեցաւ Շահա-
 նին մօտ, շարունակելով թերթիւրը պրոպսել:

Շահան վայրկեանսպէս շիրջաւ ընկալել պարոն Մկրտիչի այդ յանկարծակի ծափկութիւնը: Յետոյ նկատեց, որ տնոր վարժուներն եւ բարեւելուն մէջ ժտերձական անտխտելի շէշտ մը կայ: Քերիւս ինք սխալած էր իր նախորդ մտածումներուն մէջ: Ջանաց վանել այդ խորհուրդները եւ տեղ տալ նոր արամադրութիւններու...

— Երբութիւն մը չկայ, — յայտարարեց Մկրտիչ եւ ինամբով ծայնց թերթը, մէկդի դրաւ դայն ու աչքերը սեւեռեց Շահանին:

Նայուածքին մէջ բարեկամական արտայայտութիւն մը կար: Շահան ուղեց անմիջապէս լաւ բան մը ընել՝ հաւանաբար քիչ առաջուտն իր մտածումներն ու վերադրումները սրբադրելու համար եւ պահ մը զոյջաց՝ առաջին սպաւորութիւններուն հաշտոյն:

— Շատ զրազած կ'երեւիք:

— Շատ, — ըսաւ պարոն Մկրտիչ եւ դաւաթին պարունակութիւնը ամբողջութեամբ կուտալէ ետք, արտարանքով ոտքի հլաւ եւ հրստիշտ առնելով մեկնեցաւ:

Շահան հայեացքը սեւեռեց պատուհանէն դուրս՝ անհանդարտ թափով տեղացող անձրեւին:

Ձմրան եղանակին Ձիատ եւս հազուադէպօրէն կը բացակայէր պանդոկէն: Բացակայելու պարագային, շատ չէր ուշանար: Օրուան մեծ մասը քնանալով կ'անցընէր: Իրիկուան մօտ միայն դուրս կու գար սենեակէն, գիշերային աշխատանքի իր հերթը ստանձնելու եւ օրուան նորութիւններուն տեղեկանալու համար: Թանձր թէյին մէջ քիչ մը կաթ կը խառնէր, ամմօ Ղազարէն սիկարէթ մը կ'առնէր, լայն-լայն կը ներշնչէր ծուխը եւ Շահանին հետ քանի մը նախազասութիւն փոխանակելէ ետք, կը լծուէր աշխատանքի:

Երբ հօրեղբորս երկու տղաքը, եղբայրս եւ ես կը վերադառնայինք համայարանէն, Ձիատ կը թողուր աշխատանքը եւ կը միանար մեզի, մեր իրօտակցութեան մասնակից ըլլալու եւ մինչ այդ իր միտքը տազնապեցնող հարցերն ու քաղաքական տեսակէտները մեզի փոխանցելու համար:

Ձմեռը անցաւ յարաբերաբար խաղաղ ընթացքով: Քանի մը սահմանափակ ցոյցեր ու պատահական բախումներ տեղի ունեցան ոստիկաններու եւ ծայրայեղականներու միջեւ: Թէեւ միջուորտը հանդարտ կը թուէր ըլլալ, բայց Ձիատ շատ մտահոգ կը վերադառնար իր հանդիպումներէն եւ Երեբով անարամադիր ու ջղային վիճակ մը կ'ունենար: Արթիւով մը, իր մտահոգութեան տարողութիւնը մեզի հասկցնելու նպատակով յիշեց, թէ առաջին անգամ ըլլալով, իրենց եւ հակառակորդ ծայրայեղականներու կեդրոններէն ներս, զինուորական լուրջ պատրաստութիւններ տեղի կ'ունենան, խորհրդաւոր լուսնամար մը զողարկուած, եւ թէ՛ ոչինչ կարելի է դուշակիլ, բայց եւ այնպէս, մօտաւոր ապագան անախորժ անահնկայներով լեցուն կը թուի ըլլալ:

Իրօք, պայթումը չուշացաւ:

Ապրիլեան սեւ շարաթափերը մըն էր, աղիտալուր օրագարձը, երբ կէտ զիշերուան ուշ ժամերուն, պանդոկին տանիքը հաւաքուած, բուրբոյլին անփոյթ ու օրուան պատահարներէն անտեղեակ, ահարկու դիտող մը ցնցեց թաղամասը:

Օդին մէջ, վաճառատուներէն անջատուած կտորներ ցայտադրելի

սկսեալ ժայթքեցան, դարարուեցան, յետոյ ցիրուցան եղամ՝ տեղացին ամառացած ժայթերուն ու փողոցներուն վրայ:

Վառօղի հոտը, փոշին ու ծուխը ծաւալեցան:

Զիտա զիշերանոցով վազեց փողոց: Մենք երգիքէն դիտեցինք անցուղարձը:

Ոտերկաններու ջրկատ մը հասաւ, երկու մարդատար կատըով եւ զըրտահապատով մը:

Շատ յճօտեցան ականաւարուած վաճառատան:

Քիչ ետք, աւելի խոր ու զորուօր պայթիւններ լսուեցան:

Զիտա վերադարձաւ մտահոգ ու Նղապիրի: Բոլորս լուռ էինք: Մօտալուտ աղէտի մը անորոշ սարսուռը կը սողար մեր երակներուն մէջ:

Յանջորդ առտու, մահաշունչ մթնոլորտ մը կը խռովէր քաղաքը:

Պանդուկէն մինչեւ քաղաք երկարող փողոցներուն վրայ, տասնեակ վաճառատուներ ականաւարուած էին նախորդ դիշեր:

Ինքնաշարժներուն մէջ, մարդիկ կը խօսէին զանդուածային սպանութիւններու, բախումներու եւ անապահով փողոցներու մասին: Պօսքերը կը շատնային, կը բազմապատուէին, յետոյ, երբ մայնասփիւռը սկսէր խօսիլ՝ կը լռէին:

Չայնասփիւռը, իր բնական հաղորդումները ընդհատած՝ փողոցներու տնայաւանօրէիտեան եւ ընդհարումներու մասին գեկուցում կու տար, հայրենասիրական ուղղաշունչ եւ երբեմն լայկան երգերով ընդմիջուած:

Համալուրանէն ներս կը տիրէր սապնապահար մթնոլորտ մը: Պատահածին ու անորոշին կշիռը պարփակելի ըլլալէ շատ հետո կ'ը:

Պաղպարական աշինչ կամ այնինչ կարգախօտով դիմուցած, խելատ յեղ փոթորկումներու ալիքներուն անձնատուր աղաք, որոնք սոփոր էին փողոցները ողորկել, ցոյցերու ընթացքին ոտականներ քարկոծել եւ հակառակորդ խումբին բռունցք ճօճել, քաշուած էին ծառերու շուքին, փոքր խմբակներու բաժնուած:

Համալուրանի մուտքերուն հսկող եւ խռովութիւններու ընթացքին միջամտող ոստիկանական լոկատներ չկային:

Չկար հակառակորդ կողմը:

Համալուրանը կը նմանէր առանց բերդապահի ձգուած մարդաղաշտի մը, ուր այնքան հետաքրքրական մրցում մը յանկարծօրէն ընդհատուած էր ու մրցակիցները չբացած էին դաշտէն՝ ամայի ձգելով բերդը:

Հիմա, անորոշութիւնն էր, որ կ'իշխէր բոլոր հոգիներուն վրայ:

Արուեստի ու դիտութեան կանաթի գլխաւոր շէնքին մուտքերը փակ էին: Դուռներուն, պատերուն եւ պատուհաններուն վրայ փակցուած էին սարսափազդու նկարները քաղաքացիական պատերազմի առաջին զոհերուն:

Մեծադիր, բիրտ, արինալի ու զրգոխ:

Անդամահատուած, խոշտանդուած, հարիւրաւոր կապարներէ բզկալուած մարմիններու պատկերներ:

Մուտքին կը հսկէին ուսանողներու ամէնէն աւելի փոթորկատներէն զինեալ քանի մը հողի միայն, լուռ, խոժոռ ու շուար դէմքերով:

Ոչ ոք ի վիճակի էր ընկալելու աղէտը՝ իր նոր տարողութեամբ:

Պայքարող կողմերուն կամեցողութենէն վեր, կար չարագուշակ ու խորհրդաւոր կամք մը: Նոյնիսկ բռնամիջոցներու համամիտ արմատականները անակնկալի առջեւ էին: Ընդդէմ է, ու իրենք, գէթ տեսականօրէն, կը հաստատային բռնութեան, բայց իրենց կիրարկածը այնքան անմեղ ու ընդունելի

էր. առաւելագոյնը՝ ոստիկան քարկոծել, կամ ցուցափեղկեր կոտրել, բը-
ռունցքային կռիւներ ունենալ մրցակից կողմին հետ՝ ուսանողական բնտրու-
թիւններու շրջանին: Բայց այդ բոլորը կարծէք մարզական մրցախաղի մը
ստեղծած մթնոլորտին կը նմանէին: Ուղէն հտք, կարելի էր նոյնիսկ նստիլ
հակառակորդին հետ նոյն սեղանը ու միասին սուրճ խմել:

Հիմա չկային հակառակորդները, ա՛լ չհանդիպէին հաւանաբար, կամ
հանդիպէին հակադիր պատնէշներու հտին միայն:

Երկու խումբերուն միջեւ հիմա գոյութիւն առած էր արեան խրա-
մատը:

Վրէժի ու անորոշ սարսափի խառն զգացումներ, որոնք մեղաւոր ցըն-
ցումով մը կը սողային մինչեւ ողնածուծին վերջին բջիջը: Ողջի ու բարո-
յականութեան անգատուութիւն մը, եւ անոր պատճառած յանցանքի դա-
ցումը:

Արուեստի եւ գիտութեանց կաճառին մուտքին, անձնաթ սպասու-
մներու տարբերով սառած՝ անոնք կը դիտէին շրջափակը:

Հեռուոր Բաղամասերէն պայթիւնի եւ ինքնագործ դէնքերու համա-
զարկը կը շարունակուէր: Մերթ ընդ մերթ պայթիւնները աւելի մօտէն կը
լսուէին:

Ձիտո մէկի ընկերակցած էր մինչեւ համալսարան, ուր կրնար հան-
դիպիլ իր ծանօթներուն, նորագոյն մանրամասնութիւններէն տեղեակ մնա-
լու համար: Անորոշութեան ու շփոթի հարցականներ դէմքին՝ ան տմբողջ
մարմնով կը ցնցուէր:

Ձիտո եւս լուռ էր: Կային յանձնառութիւններ, որոնք եկած էին ա-
կամայ եւ իբրեւ կարգախօս ներկայացուած ամբողջարութիւնը հիմա վե-
րածուած էր մարտակոչի:

Ան դիտէր, թէ նման պահերու հաւատարմութիւնը շարքերը կը նսրա-
նային:

Մուտքին հսկող գինեակներուն միացաւ նոր խմբակ մը, որ, ըստ երե-
ւոյթին, իրեն հետ ունէր նոր լուրեր եւ թելադրանքներ: Փսփսուքներով ու
խորհրդաւորութիւններով սկսած շարժումը հետզհետէ ծաւալեցաւ ուսա-
նողներու շարքերուն մէջ:

Անոնք սկսան խմուելի գլխաւոր ծառերուն տակ, որ նախորդ հաւաք-
ներուն աւանդական վայրն էր:

Մտներուն տակէն, աստիճաններուն վրայէն եւ անկիւններէն ուսա-
նողները կը դիմէին հանդիպումի վայրը, որ հետզհետէ կը խճողուէր ալ-
մըկոտ ամբոխով մը:

Մտներու կոճղերուն վրայ բարձրախօսներ զետեղուեցան, սրոնցմէ
մարտաշունչ կրգեր ու կոչեր սկսան ձայնասփռուիլ:

Բեմը պատրաստուեցաւ շուտով:

Բարձրախօսին ժօտեցաւ շարժումին դեկավարներէն մէկը, նախ՝ վա-
րանոտ, ապա՝ աւելի արագ քայլերով: Դիտեց լուռ ու քարացած բազմու-
թիւնը: Կոկորդը մաքրեց, շակեց բարձրախօսը, ժօտեցուց իրեն, եւ դրակա-
լին կոթնած՝ ամփոփ ու ինսյողութեամբ արտասանուած տողերուն մէջ,
տարտած տեղեկութիւններ տուաւ նորագոյն դէպքերուն մասին, որոնց «գաւ
ու աղէտ» սահմանումները աւելեւ տեք, յայտարարեց, թէ արեան անսահման-
բուն կարիքը կայ, ճշդելով, թէ ո՛ր կեղերոններուն մէջ կարելի է տալ:

Ձիտո շղապիրկ ու շորցած կոկորդով կ'ունկնդրէր յայտարարու-
թիւնները: Իսկական զուհարերութեան ժամը սկսած էր: Հիմա է յայտ պիտի
զար նուիրումի պատրաստակամութիւնը շարքերը բաղկացնող տարրերուն:



Քիչեր պիտի կարենային անսալ արեան կոչին, միացնելով բազուկ ու սիրտ :
Բայց, իրօք, յանուն ինչի՞, ընդդէմ որո՞ւ... : Նման հարցումներով մտա-
հոգուիլը, այդ ժամուն, հաւանաբար դասալքութիւն մըն էր ինքնին : Պա-
հանջուածը հիմա արիւն էր :

Ձիատ, դեռ վարանոս, կը դիտէր շուրջը : Սառած աչքերը կը սոււ-
ռէր յայտարարութիւններ ընող տղան մօրուքին, կզակին ու կուլ կու տար
թուփը :

Վերջապէս, տմբոխէն անջատուցան քանի մը հողի ու առաջացան
դէպի բեմ :

Անջատուողներուն թիւը շատցաւ :

Պատասխանատուները սկսան խմբակներու բաժնել զոննեք :

Ձիատ եւս առաջացաւ :

Մօտեցաւ խմբակները գասաւորող տղոց :

Արիւն տալու պատրաստուող խմբակներէն անջատ կեցուցին զինք,
քանի մը այլ տղոց հետ :

Քիչ ետք, Ձիատ եկաւ մեր մօտ : Յուզումն էր ու անհանգիստ :

— Ի՞նչ է, Ձիատ, քեզմէ՞ տլ արիւն պիտի առնեն :

— Ո՛չ, մեզմէ արիւն պիտի չառնեն : Մեզմէ աւելի՞ն կը պահանջուի,
— քաւ ու խառնուեցաւ ուսանողներուն :

ԱՐԱ ԱՏԻԼԵԱՆ

(Շար. 3 եւ մնացեալը Փետրուարի թիւով)

Պ. Հ Ե Ր Ե Ա Ն

Ե Ի Ե Ս Ե Կ Ա Յ

Երբ ես եկայ՝
Ուտի կարած աբուներու,
Սեզաններու՝

պատաստած ծածկոցներու ղեկերում տակ,
չարդուփշուր բաժակներու դէմ գտայ ձեզ՝
իմ պատկերի՝ նմանակներ:

Ձեր շիկացած գլուխները կայուն էին՝
Անուրջներու եւ խոհերու փշրամբներով
եւ ծուլացած ձեր քիւրքը

մտնդներէն կը խայթուէին:

Եւ ես եկայ՝ իբրեւ դատարկ երջանկութիւն,
Կեցայ մուտքին ձեր սենեակին
Ու քայլ առի ծպտուն-ծպտուն.
Ապակեղէն իր մը ինկաւ վերերէն
Ու ես պահ մը հիացումով քարացայ...

Դուք արքեղներ՝ ձեր հիաստանչ հայեցմներով կը նայէիք,
Խակ եւ անփորձ էի, անուժ,
Եւ շատ էի կաշկանդուած ծնողական չարագոհեցեալ գուրգուրանքով,
Եւ շատ էի պարակտուած՝
Բարի, խածան, վտանգաւոր խրատներով:

Բայց երբ կրցամք, յաջողեցանք իրար աչքին ուզիկ նայիլ,
Անխօս կերպով ստիքի կախ,
Դժկամութեամբ դուք ծածկեցիք մերկ մասերը ձեր մարմինին
Եւ քալեցինք միասին:

Մայր նամբում մէջ ամուր-ամուր համբուրուեցանք
Եւ առինքնող պայքարի մը երդումով՝
Բաժնուեցանք իրարմէ :

Ի՛նչ ալ ըլլար՝ արտառուէով պատած դէմքս պիտի փայլէր,
Եւ ես ահա առանձնութեան տեղ ուժով զինուեցայ
Եւ ինքնիմս ձեռք կռօժիմ՝
Իրբեւ անդարձ որոշում,
Իրբեւ անսանձ քարեշրջման հովուոյք :

Հիմա նորէն, ա՛յր ալ ըլլամ,
Խոնարհութեան բարձունքներէն կը միացնեմ ձայնս ձեզի՝
Եւ բազուկս՝ ձեր հարուածին,
Միանուագ օրերուն լարը փշրող
Եւ անհուստ ժամերուն շնորհիմ քայլող,
Ահագնացող
Խենթեր, կանչեր պողպատեայ : —

Փլուզումի ոչ մէկ նշան եւ ոչ մէկ երգ անբարեխօսիզ
Կը սողոսկի իմ արեան մէջ,
Ու ես այսպէս,
Մանր-մունր դասերու դէմ ծիծաղելէն՝
Հաստատաբայլ կ'անցնիմ բոլոր արգելքներէն,
Որպէսզի հասնիմ, փարիմ անօթին այն բիւրեղային
Ու գայն բաշխիմ կտոր-կտոր,
Ձերք կեցուցիչ հազարդարիւն,
Ու բարձրացնեմ գետին ինկած հոգերը խեղճ,
Որ չճանան մանր-մունր դասերն ամէն
Ու վախ չըլլայ, վտանգներէն չգայ երկինջ
Եւ ես ու դուք ըլլանք, մնանք
Նայն պատկերին նմանակներ...

Ձե՛ր որ մտցանք մե՛նք զմեզ
Եւ յիշեցինք մե՛նք զիրար
Այն օրէն, երբ երգներն ու վտանգները
Խառնուեցան իրարու եւ չկրցանք բռնել զանոնք...

Պայծառ օրն այս
Աշխուժօրէն շիրմաբարձն վրայ երգող
Դեզմանիկներ կը ծնի,
Իսկ մե՛նք կ'երթանք բարձր ու քեթի
Ու մեր հոգին մարմիններէն կ'անջատուի
Եւ անջատման այս հեշտագին
Գործողութիւնը ամարաստ


Կը վարակէ ամէն միջոց,
Միջոցին հետ մեծ կը դառնանք ամբողջութիւն,
Հետու-հետու անձանօքը կը պայթեցնենք,
Որ բողբոջներ ծլին այնտեղ,
Երբ պաշարենք, գերեվարենք անորոշին խղերն ամէն:

Քանի դեռ կանք,
Քանի որ դեռ գիտե՛նք, որ կանք,
Մեզի ընծայ տրուած կեանքն այս քաղ որ դառնայ մեր հաջոցին, մոռցիւնին
Ու մեր քառին ենթակայ:

Եւ դու՛ք կեցցե՛ք:
Ու քաղաքիւն, քաղաքիւն ձեզ, իմ պատկերի նմանակներ:

(Քալէս առաջ ըսեր էի, թէ կու գամ ես):

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ



Յ. Պ Է Բ Պ Է Բ Ե Ա Ն

**ՄՈՒՏՔ՝
ՈՐԲՈՒՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ**

Ա.— ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԽՈՂԸ

Դժուար է արտոյ ակնարկով մը ներկայացնել Որբունիի արձակը, որուն մա՛նաւանդ վիզական մարդը, «Փորձը»-ն մինչև «Ես եղի մարդ», «Թեկնածուն», «Ասփալթը» եւ «Անվորակուն օր մը» անուն գործը, Փրուստէն մինչև Բոպ կրիչէ բոց մնալով բոլոր փնտտութեամբ ոչ մի՛ գարժանաւի հոլովոյթ մը կրեց, եւ փորձեց գրեւորումի իր եղանակը գտնել:

«Բազմն»-ի համար կատարուած հարցազրոյցի մը մէջ (թիւ 10, 1980), Մեծուրիի հետեւեալ հաստատումին վրայ՝ «Ես ինքզինքս կը գրեմ», Որբունիի հետեւեալ ընդհանրացումը կը կատարէ.

«Եթէ ինքզինքդ չես գրեր, կ'ըլլաս պաշտօնեայ գրող մը: Հիմա ես ինքզինքս կը գրեմ: Հիմա, որ ինքզինքս կը գրեմ, Աստուծոյ պէս, իմ գարծիւ մէջ ամէնաւ բմ: Տիկին Երագեանն ալ ես եմ, Շաշանն ալ ես եմ, ամէնուն մէջ ալ ես կամ: Ես ինքզինքիս հազար տեսակ երես կու տամ: Եթէ ես ինքզինքս չգրեմ, ես կը մեռնիմ: Ձկան, Այսինքն՝ կը մեռնիմ չգրելով: Ուրեմն ես ամէնքն եմ: Որբունիին, զոր գիրքին մէջ կ'ուզեմ վտարել միշտ, երբ Միճասը Որբունիին կը վերագրէ սրտը բաներ, այդ կ'ընեմ, որպէսզի չըսեն, թէ ինքը Որբունիին է» (էջ 57):

Այս քիչ մը պարզունակ յայտարարութիւնը, որքան ալ միամիտ թուի առաջին հերթին, ստեղծագործական արտազրութիւնը քանի մը մակարդակներու վրայ կը դնէ: Առաջին՝ հեղինակին կեանքն ու հարցերը իրրու գրական նիւթ կը բերէ, որ բազմաթիւ ձեւերով ու յղումներով կը գրեւորուի: Այս մէկը, ինքնին, արդէն հարցական կը դարձնէ իրականութեան եւ զբաղանքութեան յարաբերութիւնները, այս կերպարանափոխումի ընթացքին գնելով

անկարելիութիւնը՝ իրականութեան այլակերպումին: Այս դժով, «Թեկնա-
ծաւն» խորագրով վէպին մէջ, Նոյն Հարցր պիտի դրուի Վահագնի թերնով.
«... Ուրիմն սուտ է այս ամէնը: Արուեստական պատմութիւն մը ստեղ-
ծեր եմ ես ինծի, արդարացնելու համար իմ ակերորդ, իմ յայտառակ կեան-
քըս:

«... — Ա՛յս, իմ կեանքն ամբողջ վէպ մըն է:

«Վէպ մըն է ո՛չ թէ իր պարածովը, այլ՝ պատմածովը: Նկատած եմ,
որ ըսուածներուն գոնէ կէտը սուտ է: Երեւակայութիւնը անկատարը կ'ամ-
բողջացնէ հնարքներով եւ ամէն կեանք անկատար է» (էջ 94):

Վահագնի գրութիւն-նամակը որեւէ իրականութիւն անկարելի կը
դարձնէ, որովհետեւ ո՛չ միայն երեւութական իրականութենէն (phenomena)
անդին կ'անցնի, այլեւ իր ապրած կեանքը, այսինքն՝ ենթակայական ճշը-
մարտութիւնը Հարցարդիւի կը դարձնէ, որովհետեւ Հոն արդէն երեւակա-
յութիւնը կը գործէ եւ բոլոր սահմանները խառնուած են:

Երկրորդ՝ երբ Հեղինակը, քիչ մը պուտտայական ժօտեցումով մը ինք-
զինք բաժնուած կը տեսնէ իր ստեղծած բոլոր տիպարներուն մէջ, բնակա-
նարար ժխտած կ'ըլլայ իր կեանքը պատմած բլլալու պատրանքը (վարկածը
կամ առասպելը, ինչպէս որ կ'ուզէք): Այսինքն՝ Որբունին չի կրնար ըլլալ
Մինասը, Հեղինակը չի կրնար բլլալ պատմող հերոսը, կամ՝ տիպար մը:
Ուրեմն, միայն արտադրող Հեղինակը կը մնայ, որ ինքզինք կը տեսնէ իր
բոլոր տիպարներուն մէջ:

Քիչ մը ակելի անդին երթալով այս բուրքէն, մոռնալով նաեւ Որբու-
նիի «ակամայ յիշողութեան» ու ժամանակի Հարցերը, ստիպուած կ'ըլլանք
աարերէ մէջընդմէջ մը կատարել իրմէ, այս անգամ «Ասփալթ»ի ներածական
«Երկու խօսե՛ցէն».

«Վէպը ընթերցողին համար գրգիտ մըն է, որ իր մէջ անճամօք հորի-
զան մը կը բանայ եւ այդ հորիզոնին վրայ կը գրէ իր սեփական վէպը: Վէպը
այսպէսով կ'ըլլայ նախանիւթ, որով՝ ընթերցողը կը շինէ նոր իրականու-
թիւն մը: Հետեւաբար այնքան վէպ արժան ընթերցող, սա տարբերութեամբ,
որ մինչդեռ առաջինը գրի առուած է, միւսները տեղի կ'ունենան ընթեր-
ցողներու երեւակայութեան մէջ: Ինչ որ երեւակայութիւնը կ'աշխատցնէ
գրութեան մը մէջ. այդ գրութեան մէջ պատմութիւնը չէ անպայման, այլ
այդ գրութեանն ստացած գգայնութիւններն են, որոնք կը բնորոշեն անոր
գեղարուեստական արակը:

«Գրականութիւնը գրութիւն է իր սեփական օրէնքներով եւ կանոննե-
րով, որոնք լեզուական են եւ որոնցմով յառաջ կու գայ բանաստեղծութիւնը:
Այսինքն՝ բանը ստեղծել եւ ոչ թէ պատմութիւնը պատմել: Փաստութիւնը
ինքը պէտք է դարս գայ այդ կանոններէն, այսպէս գրականութիւն չ'ըլլար:
Փաստութիւնը անպայման գրականութիւն չէ: Անիկա միայն հետեւանք մըն
է» (էջ 17):

Երբ ընթերցումի նման յղացքով մը ժօտենանք գրութեան, վէպը այլեւս
«փակ» արտադրութիւն մը չի գառնար, որ ինքն իր մէջ ամբողջական կամ
վերջնական ըլլայ: Առաւել՝ այս պարագային յարաբերական ճշմարտութիւն
մը եւ ո՛չ թէ մէկ ճշմարտութիւն կամ մէկ իրականութիւն կը մնայ. դործը
կ'ըլլայ նախանիւթ մը, ուր ընթերցողին երեւակայութիւնը կ'աշխատի: Այս
բոլորը երկու հաստատում կը կատարեն: Նախ ա՛յն՝ որ գրութիւնը ի՛ր օ-
րէնքներն ու իրականութիւնը ունենալով չի՛ կրնար աւալ գրողին իրականու-
թիւնը (Որբունիի կեանքը): Երկրորդ՝ այլեւս Հեղինակը կամ ներածողը չի

կրնաք «Աստուծոյ պէս» բան մը ըլլալ, ինչ որ կը հակասէ Որբունիի «Միա-
ձայն զրոյնք»ին մէջ կատարուած հաստատումին: Սակայն բազմաթիւ հակա-
սութիւններու կարեւի է հանդիպիլ Որբունիի տեսական արտայայտութիւն-
ներուն մէջ:

Նման նշումներ, որքան ալ որ ճիշդ ըլլան յղացքային հաստատում-
ներու կամ հակասութիւններու շրջապիծին մէջ, դիտենք, թէ ստեղծագործա-
կան կամ արտադրողական մակարդակի վրայ կը շարժին: Իսկ Որբունի հո-
ւանաբար պիտի պնդէ, որ ինք իր կեանքը կու տայ, ինչ որ կը գրուի, գու-
մարն է իր կեանքին, տաղանայներուն, անձկութիւններուն, երեւակայու-
թեան, եւայլն: Այսինքն՝ Որբունիի ամբողջ գործը կը շարժի հեղինակի
կեանքին, ներքին կամ ենթակայական իրականութեան եւ ստեղծագործական
իրականութեան օրէնքներուն միջեւ:

Այս պատճառով ալ, «Հալածուածներ»ու ամբողջ շարքին մէջ մահ-
ւան, սիրոյ (սեռի-սիրոյ), առանձնութեան, անձկութեան եւ կամ նման
թեմաներ յաճախանքի պէս պիտի կրկնուին: Սակայն իրականութիւնը միշտ
ալ պիտի հետեւի գրութեան օրէնքին եւ, մինչեւ իսկ իր մանրամասնութիւն-
ներուն կամ առաքելայական տուեալներուն մէջ՝ հետեւողական պիտի չըլլայ:
Օրինակ, «Եւ Եղիւ մարդ»ը, որ Որբունիի կատարած բազմաթիւ հաստա-
տումներով շարքին ամբողջութիւնը պէտք է ըլլայ, բովանդակային կամ դի-
պաշարի առումով (եթէ այլեւս կարելի է դիպաշարի մը մասին խօսիլ Որ-
բունիի վերջին 3 վէպերուն մէջ) չի պարփակեր տուեալ երեք գործերը: Նի-
քոյի սէրը շէր կրնար վրիպած ըլլալ հեղինակէն, սակայն Մարի-Ժոզէթը ու-
րիշ յարաբերութիւն է եւ երկուքին միջեւ միակ նմանութիւնը կը մնայ տ-
նոց օտար ու մեռած ըլլալը: Նոյնիսկ պոռնիկներու հետ հանդիպումը, որ
կը պատմուի երկու անգամ, մէկ՝ «Փարոսին, ապա՝ «Անվարական օր մը»
խորագրով գործին մէջ, իր Ֆիդիբազան տուեալներով տարբեր է, այսին-
քըն՝ ամենազարգ մէկ տուեալով, առայինին մէջ երկու կրկնը կան, երկ-
րորդին՝ հինգ...: Ինչ որ կը նշանակէ, թէ գրութեան յղացքը ո՛ր միայն այս-
պէս կուրուած ձևը կը փոխէ, այլև՝ բովանդակութիւնը: Այսինքն՝ մեռ-
վանդակութիւն երկուութիւնը կը գառնայ անիմաստ եւ գրութեան յղացքը,
ի՞ր ընդհանուր իմաստով, ի՞ր իրականութիւնը կը բերէ...


ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

ԵՐԵՒԱՆԻ
ՎԻՏԵՐԱՏՈՒՐՆԱԾԱ
ԱՐՄԵՆԻԱ,
ԱՄՍԱԳՐԻ
ՔՍԱՆԱՄԵԱԿԻ
Ա Ա Թ Ի Ի



СОДЕРЖАНИЕ
«Литературная Армения»
Генер. Секретарь
Редакт. Совет
Администр. Совет



1979 թուականի սկզբի ամիսներին Հայաստանում նշուեց «Լիտերատուրնայա Արմենիա» («Բրական Հայաստան») ասուերէն գրական ամսագրի 20ամեակը: Զինչէ է, այդ իր տեսակի յորելեանական նշումը շատերի համար թերեւս աննկատ անցաւ, որովհետեւ ընդհանուր ուշադրութիւն գրաւուց միջնդաստումներ չեղան: Բայց եւ այնպէս, դա առիթ ծառայեց, որպէսզի գործի հետ անմիջապէս կապուած եւ նրանով հետաքրքրուող ու շահագրգռուած մարդիկ խորհրդածեն այդ ինքնին կարեւոր հրատարակութեան անցած ուղու եւ անցեալ ու ներկայ դիմագծի շուրջը, դիրք ճշդեն ու բաղձանքներ յայտնեն:

Դեղեանին՝ հրատարակելով Հայաստանի Գրողների միութեան վարչութեան քարտուղարութեան համապատասխան ողջոյնի խօսքն ու 13 Հայ եւ օտարազգի գրողների եւ բարեկամների զնահատական արտայայտութիւնները: Հազիւ թէ ապացուցելու հարկ ըզգացուի, որ Հայաստանն այդպիսի մի պարբերական հրատարակութեան կարիք իսկապէս ունի: Դեռեւս նախապատեւրազմեան ժամանակից Երեւանում լոյս են տեսնում «Կուռումիստ» եւ «Կումսամուկ» (նախկին «Ստալինից») ասուերէն հանրապետական թերթերը: Առաջինի գոյութիւնը, այսպէս թէ այնպէս, կարելի է արդարացնել որոշակի նկատառումով, մինչդեռ երկրորդինը, որը սահմանուած է երիտասարդութեան ազգագայնացման համար, ո՛չ մի դէպքում: Յայտնի է, որ Գիտութիւնների Ակադեմիայի պարբերական հրատարակութիւնները, իբրեւ կանոն, երկիւղու են՝ Հայերէն եւ ասուերէն, այս կամ այն յարաբերակցութեամբ: Թէեւ դիտենք, որ զբրտնք գիտական աշխարհի համար են, եւ ուստի՝ ասուերէն յորումները անպար-

ման աւելորդ շէն, այնուամենայնիւ, կարելի էր աւելի արդար համարել յատուկ ուսերէն պարբերականի հրատարակութիւնը, զոնէ հասարակական գիտութիւնների համար, ալ ոչ թէ խոսնալիզու ամսագրերը եւ հանդէսները, որոնք կարող են վերջի վերջոյ հասցնել հայերէնի տարերային կամ միտումնուոր դուրս մղման, իբրեւ «աւելորդ» տարրի:

Այս պայմաններում, «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի հրատարակութիւնը, սկզբից եւեթ եւ ամբողջովին, հիմնաւորուած ու օգտակար է: Իսկ հայ գրականութիւնն ու արուեստը, մշակոյթն ու պատմութիւնը, հասարակական կեանքն ու խնդիրները ուսերէնի խողովակով աշխարհին հասցնելու հասարակական պայմաններէն մէկն է: Հետեւապէս, ամսագրի ամբողջումը այդ նպատակներին լուսադրոյն ծառայելու երաշխիքն է: Եւ երբ մի հայկացի ենք նետում ամսագրի անցած 20 տարուայ ճանապարհին, տեսնում ենք, որ այն գանձանք զժողովրդի մեծ յաղթանակները, յաղթանակները, յաղթանակները եւ իսրայէլական միջով աստիճանաբար ամբողջ է, եթէ կարելի է տեսլ՝ առնականացի:

Քանի որ Հայաստանում մի ուսերէն ներկայանալի գրական հանդէս հրատարակելու անհրաժեշտութիւնը ինքնին ահայտ է, զա չէր կարող չհասկանալ հայաստանեան գրական հասարակայնութիւնը: Եւ յետապիւնեան աշխուժացման տարիներին՝ մի շարք ուսերէն ժողովածուներ հրատարակելու փորձերից յետոյ, ձեռնարկուեց մեայուն ամսագիր հրատարակելու գործը, ինչ որ յաջողութեամբ պատկուեց 1958 թուի Գեղարքներին: Քանի որ սկիզբը մի քիչ արաստվոր եղաւ, աւելորդ չեմ համարում այստեղ մէջընթիւ մի վաւերական վկայութիւն:

Ամսագրի արդէն յիշուած 1978ի գեղարքներէն համարում, որտեղ դեռտեղւած են 13 հոգու յորելանական շնորհաւորանքները եւ բարեմաղթութիւնները, Հայաստանի եւ հայ գրականութեան բարեկամ էլեւս նիկոյաւակայան գրում է հետեւեալը. «... ես ինքսեմով պահում

եմ «Լիտերատուրնայա Արմենիա»-ն առաջին համարները: Դրանք իրար յետեւից երկուսն էին՝ Երկու «ՆԵ 1»...: Առաջինը, իբրեւ այդպիսին, որին յաջորդեցին ա՛յլ երկրորդ եւ ա՛յլ էլ երրորդ համարները, լոյս տեսաւ 1958 թ. Դեկտեմբերին: Նրան յաջորդողը նոյնպէս եղաւ առաջինը, որը լոյս տեսաւ 1959 թ. Յունուարին»:

«Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի հիմնից ու մինչեւ մահ ղեկավարեց Գուրգէն Բարեանը: Այնուհետեւ գլխաւոր խմբագիրներ են եղել Գեղարք Խմբիւր, Սարգիս Յարութիւնեանը եւ Միքայէլ Եսթիւրեանը: Իսկ որոշ տարիներէց ի վեր, երբ հիմնական վերակառուցման ենթարկուեց ամսագիրը, գլխաւոր խմբագիրն է Կարէն Սիմոնեանը:

Այստեղ արժէ նշել, որ Հայաստանեան ուսերէն գրական ամսագիրը, որքան էլ անհրաժեշտ ու օգտակար լինի հայկական տեսակէտից, ինքնատիպ հրեւոյթ չէ համախորհրդային իրակահոսութեան մէջ: Միւս հանրապետութիւնները եւս ունեն նոյն դերը կատարելու կոչուած ամսագրեր, ընդամենի միանգամայն տարակալ ու միակողմանի անուններով: Այսպէս, օրինակ, Վրաստանում լոյս տեսող նոյնանման ամսագիրը կոչուած է «Լիտերատուրնայա Գրուզիա» («Գրական Վրաստան»), Արբեղեանում՝ «Լիտերատուրնայա Արարատ» («Գրական Արարատ»), եւ այսպէս շարունակ՝ մինչեւ վերջ, ըստ ամբողջութեան կարգերի հարադաս կանոններով...

Միւս կողմից, արժէ նշել նաեւ, որ Հայաստանեան գրական պարբերականներից թերեւս ոչ մէկը այնքան զգոնութիւն ու քննադատութիւն չի յարուցել գրողների շարքում, որքան որ ուսերէն ամսագիրը՝ իր գոյութեան յատկապէս առաջին տասնամեակում: Ամսագրին կըլտարմբել են, թէ նա արժանաւորապէս չի ներկայացնում հայ մշակոյթը օտարներին, թարգմանուող նիւթերի սխալ ընտրութիւն է կատարում առաջնութիւն տարւով թոյլ տեղիւնադրութիւններին, բարւար չափով չի գրողոււմ թարգմանիչների որակեալ անձնակազմ ստեղծելու:

ու համայնքներու ուղղութեամբ, եւ այլն, եւ այլն: Պէտք է ենթադրել, որ գրաւոր քննադատութիւններէջ անհամեմատ աւելի շատ են եղել մանաւանդ բանաւոր քննադատութիւնները: Քերութիւնները վերացնելու նպատակով՝ համեմատաբար յաճախ են փոփոխուել իմբացրական կազմերը, մինչեւ որ ստեղծուել է այժմեան իւրաքանչեւ գրադատարութիւնն ու նպատակաւայց հաւասարակչուութիւնը:

Ռուսերէն ամսագիրը ներկայանում է իբրեւ «գրական-գեղարուեստական եւ հասարակական-քաղաքական հանդէս»: Դա նշանակում է, որ նա իրաւասու է գրագուշակու նաեւ ոչ գրու գրական ինքիւրներով, այսինքն՝ «հասարակական-քաղաքական» նիւթերով: Բայց քանի որ խորհրդային երկրում «հասարակական» ու «քաղաքական» առհասարակ էրական բովանդակութիւն չունեն, այլ սոսկ պաճուճարատեր են ինքնամիթարութեան համար, հիմնական շնորհ ինքնարբարար գրուում է «գրական» ու «գեղարուեստական» իբրայ: Ճիշդ է, հասարակական» կամ «հասարակագիտական» իմաստով՝ ամսագիրը որչա նիւթեր է գետնուում նաեւ հայ կեանքի ինչ-ինչ կողմերի շուրջ, բայց հարութեանը կենսականորէն լահարգող գրել է ոչ մի առանցքային հարց առայժմ չի արծարծուել նրա էջերում, մինչդեռ այդպիսի հարցեր շատ կան, մատչելիութեան տարբեր աստիճաններով, որոնց ամենայնաբար բեժը հենց այդ ուսերէն եւ զանդուածային տարածում ունեցող հանդէսն է, իբրեւ ամէնից ազդեցիկ բեժ:

Ամսագիրը լոյս է տեսնում 112 էջով: Տրամագրելի էջերը օգտագործուում են բացարձակապէս լիովին, առանց խոպան բացասների: Աւելին. օգտագործուում են նաեւ հաստատուող կազմի բոլոր 4 էջերը՝ նկարչական երկերի գունաւոր կամ սև լուսանկարների, ճարտարապետական եւ այլ յուշարձանների պատկերների համար: Մանաւանդ ուշադրու են կազմի ամենավերջին էջերը, որտեղ հետեւողականորէն զետեղուում են հայոց ազգային ու մշակութային պատմութեան հետ ա-

ւրնչուող յատկանշական յուշարձանների պատկերները՝ համապատասխան բացարձակութիւններով: Դա իր տեսակի մէջ ուղղակի եզակի նախաձեռնութիւն է:

Ամսագրի տպագրական, անհասկանալի պատճառներով, փոփոխական է, այսինքն՝ տատանումները խիստ աչքի են ընկնում: Բայց այս տողերը գրուելու պահին իմ արտագրութեան տակ գտնուող ամենավերջին համարը (N 4, 1979 թ.) ունի 7800 տպագրական կապած չէկայ, որ ամսագիրը լոյս է տեսնում ոչ այնքան Հայաստանում, որքան որ նրա սահմաններից դուրս տարածուելու նպատակով: Առաջին հերթին՝ օտար գրաւոր ընթերցողների համար: Նաեւ՝ խորհրդային երկրի այլեւայլ մասերում ապրող, հայերէն թիչ իմացող կամ չիմացող, բայց հայ կեանքով հետաքրքրուող հայերի համար: Միտմանակ՝ նաեւ ուսանող գրական ու գիտական մտաւորականութեան համար: Այդ իմաստով զնահասական վկայութիւններ շատ կան: Քանի որ օտար մտաւորականները հայ ազգեակներէն մշակութային կեանքի մէջ թափանցելու համար հիմնական աղբիւր են ճանաչում յատկապէս «Լիտերատուրնայա Արմենիան», ապա նրանք, միտմանակ, թէ՛ անկեղծօրէն երախտապարտ են եւ թէ բարեկամաբար պահանջուում: Ուստի եւ՝ նրանց արտայայտութիւնները սովորաբար լինում են այդ երկու իմաստով:

Երեւանեան ռուսերէն ամսագիրը պարբերաբար ամփոփում է սփիւռքահայ հանրային ու մշակութային կեանքում տեղի ունեցող իրադարձութիւնները, «Անկէ-ամիս» բաժնի տակ, բնականաբար՝ միայն կոմունիստական երկրում թոյլատրելի սահմաններում, միակողմանիօրէն եւ բոլորին յայտել չափանշաններով: Այդ բաժինը, պէտք է ասել, դատելով գրաւոր զանազան արձագանգներից, ժիրով է ընդունուում թէ՛ օտարախօս հայերի եւ թէ՛ հենց մանաւանդ օտարների կողմից: Հայաստանեան պարբերականներից այդ դերը կատարող բաժին ունի միայն, որքան յայտել է, «Պատմա-բանասիրական հանդէս»ը, շեշ-

ալ զնելով առաւելապէս գիտա-մշակութային լուրերի վրայ:

«Լիտերատուրնայա Արմենիան իւրա-յատուկ տեղ և դեր ունի: Դրանով է պայ-մանաւորուած եւ նրա կառուցուածքն ու բովանդակութիւնը: Պարզ ուսած, նրա գործը չէ՛ գրողների համար զբաղան աս-պարեզ ապահովելը, գրողներ անցնելը եւ այսպէս ստած՝ զգրական քաղաքակա-նութիւն» վարելը: Դրա զիմաց, նրա հիմնական պարտականութիւնն է գոյու-թիւն ունեցող՝ հայաստանեան զգրական անտեսութեան» տրամադրելի երկերից յաղող ու նպատակալարմար նմոյշներ ընտրելը ու դրանք պատշաճ մակարդա-կով օտարախօս ընթերցողներին հասցնե-լը: Դրա համար անհրաժեշտ է ունենալ ո՛չ միայն քաղաքացիական դիտակցու-թիւն ու սուր հետաքրքրութիւն, այլև՝ չենց զուտ զբաղան հոտառութիւն, ճա-շակ, հորիզոն ու յարակից յատկութիւն-ներ: Պէտք է ունենալ մանաւանդ որակ-եալ թարգմանիչներ:

Հայաստանում թարգմանչական անձ-նակազմի ու թարգմանական արուեստի մասին խօսելու եւ գրելու շատ առիթներ են եղել մինչև հիմա: Բայց «Լիտերա-տուրնայա Արմենիայ»ի համար թարգմա-նական Հարցերը միայն տեսական նշա-նակութիւն չունեն, այլ՝ աւելի շուտ գործնական ու ամէնօրեայ: Այս դէպքում է, որ զգրական քաղաքականութեան» գոխարէն ինքնարեւոյր ծառանում է «թարգմանական քաղաքականութիւնը»: Իսկ այս վերջինն էլ նշանակում է բառի բուն իմաստով թարգմանիչներ ստեղծել ու անցնել: Քանզի որքան էլ շատ լինեն թարգմանական ասպարէզի համար ըն-դունակ մարդիկ, նրանք չեն կարող գոր-ծել, անէլ ու կատարելագործուել՝ առանց կենդանի գործունէութեան: Ահա և առաջին դիժ է քաջում զբաղան ամառ-զրի դերը՝ թարգմանիչներին խրախու-սելու եւ տեղ տալու ասպարէզում:

Այդ պատճառով էլ ես ուզում եմ այստեղ որոշ տեղեկութիւններ տալ ո՛չ այնքան ամառզրի հեղինակային կազմի, որքան որ թարգմանչական անձնակազմի մասին: Հեղինակները, առաւելապէս հա-

յաստանեան գրողները, բանաստեղծներն ու թատերագիրներն են, զբաղանազե-տները, հրապարակախօսները, լրագրողնե-րը, եւայն: Դրանք այս կամ այն չափով ծանօթ են նաև սփուռքահայերին: Մինչ-դեռ թարգմանիչները գրեթէ զանազան» աշխատատեղեր են, որոնք, սակայն, անփոփոխելի գործ են կատարում: Նը-րանք եւս արուեստագէտներ են, քանի որ զբաղան երկեր են թարգմանում:

Երևանեան ամառզրի նիթերից, բնակոնարար, նկատի ունեն միայն գե-ղարուեստական երկերը: Գեղարուեստա-կան երկերը կա՛մ բնագիր կամ էլ թարգ-մանութիւն են: Թուսերէն գրում են թէ՛ Հայաստանում ու նրանից դուրս ապրող որոշ թուով հայեր եւ թէ՛ ի հարկէ, օ-տարներ: Իսկ թարգմանութիւնների կա-պակցութեամբ՝ արժէ նշել հետեւեալը:

Չափածոյ երկերը, իբրև կանոն եւ մեծ մասամբ, թարգմանում են օտար-ներ իրողմից, մանաւանդ հրեայ մասնա-գէտ թարգմանիչների, որոնք առհասարակ յայն կապեր ունեն խորհրդային եր-կրի գոնազան հրատարակչական հաստա-տութիւնների հետ: Բուն ուսմանը, ինչ-պէս որ յաճախ է պատահում «մեծ սաղ-գերի» ներկայացուցիչների մօտ, լեզուա-գիտութեան մէջ, իբրև կանոն, աւելի քան բողբիլ են եւ անտարբեր: Ի հարկէ, հրեաները եւս հայազէտ չեն եւ ուղղակի բնագրից չեն թարգմանում, այլ օգտը-ւում են հիմնականում ռուսացի թարգ-մանութիւններից»: Բայց նրանք սովորա-բար ուրիշ շատ լեզուներ գիտեն, հետե-ւապէս նաև օտար մթնոլորտ թափանցե-լու ու օտար շարադրանքը ընկալելու վարժութիւն եւ կարողութիւն ունեն:

Դրա զիմաց, արձակ երկերը թարգ-մանում են առաւելապէս հայերի կող-մից: Թարգմանում են թէ՛ նրանք, ովքեր իրենք եւս գրող են՝ արձակագիր կամ բանաստեղծ, եւ թէ՛ նրանք, ովքեր միայն թարգմանութեամբ են զբաղում: Այս-պէս, օրինակ, աւստրիցի բանաստեղծու-հի Սլլա Տէր Յակոբեանը, որը արդէն 5 զբի հեղինակ է, թարգմանում է բա-նաստեղծութիւններ: Ի դէպ, նա է թարգ-մանել արեւմտահայ բանաստեղծներին:

Նոյն ձևով է վարում եւ ռուսագիր բանաստեղծուհի Մելա Վերմիշեան: Իսկ «զգիտա-հրեականական» եւ երգիծական ուղղութեամբ տրձակագիր Ռուսյան Մազարյանը թարգմանում է արձակ երկեր:

Անհամեմատ մեծ թիւ են կազմում զուտ թարգմանիչները: Եթէ նկատի առնելն Հենց միայն այս տողերը զրուելու պահին աչքի առջեւ գտնուող վերջին տասը համարները, աւելի քան տասնեակ անուններ են երևում, որոնք հանդէս են դալին մէկ կամ քաղմաթիւ անգամ: Անմիջապէս նկատելի է, որ թարգմանչական անձնակազմի մէջ չէլտուած մեծամասնութիւն են կազմում կանայք, յատուկ զունաւորում տալով թարգմանական ասպարէզին: Հետաքրքրութեան համար արժէ ներկայացնել այդ ցանկը, միաժամանակ իմանալով, որ դա հայաստանեան թարգմանչական ամբողջ տնտեսական կազմի մէկ, այն էլ նորահաս մասն է միայն, քանի որ նկատի են առնում ամառգրի սուկ որոշ թուով համարներ: Ցանկը արժէ ներկայացնել նաեւ այն պատճառով, որ այսօր ամսագրում դեր կատարող թարգմանիչներն են այն ուժերը, որոնք օգնում են հայ մշակոյթի ճանաչմանը տարածելու դործին եւ, բացի այդ, մեծ մասամբ երիտասարդներ են ու դեռեւս մասնագիտական աճման ճանապարհին:

Ահա՛ երեւանեան ամսագրի ընթացիկ թարգմանիչները.— Գէորգի Կուրաթեան, Մայա Հայ-Արտեան, Գուրգէն Հայ-Արտեան, Էլիզաւետա Շաթիրեան, Ռուզան Աղամեան, Կարինէ Պալաթովա, Նելլի Մկրտչեան, Ռոզա Եղիազարեան, Արմէն Գրիգորեան, Գեւ Ատրեան, Արմէն Պանբարեան, Նելսոն Ալեքսանեան, Ալեքսանդր Քաղէստեան, Մարինէ Մարինեան:

Ամսագրի 1978 թ. գեկտեմբերեան համարում հայաստանեան գրական կազմակերպութեան ղեկավարութիւնը իրաւացիօրէն նշում է իր ողջոյնի գրութեան մէջ, թէ՛ «Անասիկ արդէն երկու տասնամեակ է, ինչ համըտը մեծ ու օգտակար աշխատանք է կատարում հայ գրա-

կանութեան, մեր ամբողջ մշակոյթի քաղաքացիական եւ ժողովրդականացման ասպարէզում»: Բայց միաժամանակ աւելում է, թէ՛ «Հասնելի մեծ ծառայութիւնն են հանդիսանում եզրայրական հանրապետութիւնների գրողների յաւաքայն երկերի հրատարակումները, որոնք նպաստում են ազգային գրականութիւնների փոխընթացումը եւ փոխհարստացումը»: Այս վերջին գրոյթը ակնյայտօրէն վիճելի է՝ շատ պարզ պատճառով: Այդ ուղղութեամբ գործելը իրականում կը լինի ուժերի աւելորդ վատնում, քանի որ ուսերէն գրական հանդէսներ կան բոլոր «եզրայրական հանրապետութիւններում», ու մա՛նաւանդ՝ Մոսկուայում եւ Լենինգրադում: Այդ դէպքում՝ ի՞նչ իմաստ ունի հայ գրողներին զրկելու հաշուին օտարազգի գրողներին ասպարէզ աւել:

Երեւանեան ռուսերէն ամսագրի առանցքային դերը, թւում է, պէտք է կայանայ միայն հայերէն գրուած երկերը ընտրողարար թարգմանելու եւ օտարներին ներկայացնելու մէջ: Որոշ պարագաներում, անշուշտ, օտար հեղինակների կողմից ռուսերէն գրուածները հրատարակելը չի նշանակում մեղք գործել: Բայց դրանք իւրաքանչիւր դէպքում պէտք է համարուեն ուշագրութեամբ հիմնաւորում ու անհրաժեշտ բացառութիւններ, այլ ոչ թէ պարտադիր զինտերնացիոնալիտական» պարտականութիւն: Հիմնաւոր է, օրինակ, երբ օտար հեղինակների գրածը ուղղակի կամ անուղղակի վերաբերում է Հայաստանին ու հայութեանը: Հիմնաւոր է, օրինակ, երբ օտար հեղինակները Հայաստանի ասպացուցումը բարեկամներ են եւ նրանց նկատմամբ ցուցաբերուող ուշագրութիւնը ինքնաբոյս բարոյական հատուցման իմաստ ունի: Բայց անհիմն է, եթէ տղու են սովորական ու շարքային ռուսերէն թագրեր, որովհետեւ՝ նրանց տեղը հայաստանեան տուեալ պարբերական հրատարակութիւնը չէ՛:

Աւելի քան հիմնաւոր ու անհրաժեշտ են այն պարագաները, երբ տպւում են Ռուսաստանում կամ այլուր ապրող եւ իրերի բերմամբ միայն ռուսերէն գրող

Հայազգի հեղինակները երկերը: Այդ ուզ-
ղութեամբ երևանեան հանդէսը արդէն
զգալի դորձ է կատարել: Դրա վերջին
ցայտուն օրինակն է բանաստեղծ Սերգէյ
Մնացականեանին «արգելքերը»: 1917
թուին ծնուած Մնացականեանը երեք ժո-
ղովածունների տէր եւ ճանաչուած բա-
նաստեղծ է, ցայտուն եւ ինքնատիպ,
«համաժողովեանական» մակարդակով: Եւ
ան աճապարհ այս տարուայ Յրդ համա-
րուած տարուայ նրա «Կարմրայայտ (Հա-
յաստան — Չորդ դար) ժեծաշունչ եր-
կը, իրրեւ «արդիական ժամանակագրու-
թիւններ», իրրեւ, հեղինակի տակելով,
Քոնցեյալ ու ներկամ միասնական հոսաւ-
քի մէջ տեսնելու եւ գիտակցելու փորձ»: Այսպիսի
ղէպքերու արդէն երկի ուսե-
րէն կաճ ոչ-ուսերէն զրուած լինելը
յատուկ նշանակութիւն չունի, ժանա-
ւանդ՝ որ արտացոլում է հայաստանեան
ապրումներ:

«Լիտերատուրնայա Արմենիա»ն ամսէ
ամիս Հայաստանից լոյս աշխարհ է դուրս
գալիս եւ իր հնարաւորութեան սահմա-
նում Հայկական ճայնը հնչեցնում օտար-
ների մօտ: Աճսէ ամիս հանդէսը, պէտք
է կարծել, բարեկամութիւններ է ամրա-
պնդում եւ նորանոր բարեկամներ շա-
հում: Դա ո՛ր միայն անունով, այլեւ բո-
վանդակութեամբ զգրական Հայաստանի
դեր է կատարում, խորհրդային իւրա-
յատուկ պայմաններում: Եւ հանդէսի վե-
րաբերեալ առուող դնահատական խոսքե-
րը «յատուր պատշանի» ընկալեալ արտա-

յայտութիւններ լինելուց աւելի՝ հիմնա-
ւորուած դնահատակամներ են: Իմաստ
ունեն նաեւ դժգոհութիւնները, պահանջ-
ները, հանդէսն աւելի լաւ վիճակում
տեսնելու ցանկութիւնները: Այդպիսի
ղէպքերում, ըստ երեւոյթին, իւրաքան-
չիւր ոք էլնում է այն իրողութիւնից, որ
երեւանեան ուսերէն զրական հանդէսը
առայժմ եղակի է իր տեսակի մէջ եւ,
հետեւապէս, պէտք է որ գիտակցի այդ
եղակի դերն ու այդ ուղղութեամբ դո՞ր-
ծի: «Գրական Հայաստան»ը միայն գրա-
կանութիւն ու արուեստ չէ, այլ նաեւ՝
աղղ ու պատմութիւն, հոգսեր ու ձըգ-
տումներ:

Երեւանեան ամազրի վերաբերեալ,
նրա զոյութեան Չամեակի կապակցու-
թեամբ, բնականաբար, տեսիլքներ շատ
կան: Բայց տուեալ զէպքում այդ տես-
լիքները սպասելու ցանկութիւնը չէ, որ
ինձ մզեց զրիջ վերցնել ու անզրադաու-
նալ ամազրի գործունէութեանը, այլ
Մփիւքում անձանօթ պարբերականի մա-
տին մի քանի տարրական տեղեկութիւն-
ներ զրի առնելու եւ զրաւէրների ուշա-
զրութեանը յանձնելու մտադրութիւնը:
Երեւանեան ուսերէն հանդէսը հայաս-
տանեան հրատարակութիւն է, հայու-
թեանն ու հայ մշակութիւն իր կոչման
մակարդակով ծառայելու ծրագրով, ա-
ռաջադրանքներով ու դործելակերպով:
Եւ զա, բնականաբար, պէտք է յայտնի
լինի հայ կեանքով ապրող մարդկանց:

1979 թ. Մայիս

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Թ Ի Ի Ր Ն Ո Ւ Թ Ե Ր Ի Ն

Բ. Թաշեանի մանկն ետք, մեր քերթերում մէջ գտնուած լեզուական սինթակսիս վարձապը այս տարի սկսաւ լեզուի Թարգման ֆիւլուրէնանի «Քիւրի ու Քերի» այսօր» խորագրուած նշարմերում շարժով, որում «Թաղի» եւս էր բացաւ՝ իր Յունիսի համարն սկսեալ:

Մեր լեզուն իր նշարիս նրարանգներով գործածելու Յայտնու-խնդրութեանը գրուած փորձեանի տեսկէսմերէն ուսմնց դէմ իր առարկութիւնը ունենալով. Տո՛ք. Արմենակ Եղիսյեան «Ազգակ» օրա-քերթիմ մէջ ստորագրեց յօդուածաշարք մը ու սկսաւ վէճը:

Կատարուած հաստատումները, առարկութիւններն ու վերահաստատումները հետաքրքրական ըլլալով ետնդրա, մեզի համար կարեւորը բախում է, քան մը ընդունելու առարկութեանը ևւ արիշ բան մը մեր-ժիւու տնագործեմով ետնդէս գալու մգումը, որ այնքան բքտցած է մեր մէջ, տնտարկութեան տնարկու տխտով:

Ստորեւ վէճը՝ իր ամբողջութեանը մէջ:

Մեծագոյն Հանճըով կարգացի վերջերս Թարութիւն Քիւրքեհանի «Թիւրն ու քերիմ» այսօր» յօդուածը() եւ շատ ուրախ եմ, որ նման էջ մը կը բացուի մամուլի ամէնէն շատ տարածում գտած օրաթերթերէն մէկուն մէջ, թերի մը արբազրելու նախապայմաններէն զլիսաւորը մեծ թիւով ըն-թերցող ունենայն է, ինչ որ ինքնին գրաւական մըն է, թէ ճիշդը ճանչցող-ներուն թիւն ալ մեծ պիտի ըլլայ: Ուրախ եմ նաեւ այն պատճառով, որ այդ շարքը սկսողը մեր ամէնէն փայլուն եւ խոստմոտից կրիտասարդներէն մէկն է, յանձին Թարութիւն Քիւրքեհանի, որուն Հանդէպ միայն յարզանք եւ Հա-մակրանք կը տածեմ: Մասւորականի իր անաչառ ողին, պարկեշտ կեցուած-քը, իր անխառն նուիրումը գրականութեան, եւ մեր լեզուին Հանդէպ ցու-ցարեմած բծախնդրութիւնը բաւարար տաւ ընտելութիւններ են, որոնք իմ գնա-Հաստնքիս Հիմը կը կազմեն:*

Թարգարծան բարեկամս ներողամիտ թող ըլլայ, եթէ իր բոլոր տե-սակէտները եւ կարծիքները չբաժնեմ. մենք եւ մեր վէճերը գնայուն են, մոտայունը մեր Մեծասքանչն է, իսկ այս տողերը թելադրողն ալ այդ Մեծա-քանչին Հանդէպ մեր երկուքին ունեցած սէրն է:

Ընթերցողները Հաւանարար կը յիշեն խնդրոյ առարկայ յօդուածը, որ կը բաղկանայ չորս գլուխներէ: Առաջինին մէջ՝ յօդուածագիրը կը մատո-նանչէ ամէն, ամբողջ եւ բոլոր բառերու գործածութեան սխալ մեւերը եւ կը լուսարանէ զանոնք շատ յատկօրէն: Երկրորդին մէջ՝ կը քննէ գրակա-կաններու որոշ գոյղեր», ինչպէս են ընկերային – ընկերաբանականը, հոգե-

(*) «Ազգակ», 2 Հնիսեմբեր 1980

կան — հոգեբանականը, հեայն, նոյն յստակութեամբ եւ մատչելիորէն: Եր-
րորդին մէջ քննուած է զգայութիւն — զգայութիւն զոյգը, հմտութեամբ եւ
նիւթը շատ լաւ ճանչցողի պայծառամտութեամբ: Չորրորդ դուրսը յստակաց-
ւած է արհեստակարար քիւր ու քնիւթի մը: Հոս եւս, Յարութիւն Քիւրքեան
մատը դրած է մեր կոտորացող վէրքերէն մէկուն վրայ եւ մեծագոյն ճար-
տարութեամբ կը հաստատէ ու կը վերահատէ զայն:

Թերեւս հարցուի, թէ մ'ը մոաց հապա տարակարծութիւնը, քանի
որ ամէն ինչ կարդին է: Անկասկած տարակարծութիւն մը ունիմ եւ այդ յայտ-
նելու համար է, որ դրած եմ այս յօդուածը:

Յարգարժան քարեկոտ յատկապէս դժգոհ է, որ արհեստակարար լայ-
նորէն կը դրծածեն անտեղի անտեղի ու թափթփած կուտակման քաղա-
քականութիւն մը: այս շարքին մէջ կը թուէ սկզբունքայինը, տեղեկամբայինը
եւ հիմունքայինը: Յատկապէս այս բաները կը թուէ, բայց սեւէ ընթացող
կը դուշակէ, թէ այս շարքը շատ երկար է ու անձամբ ալ, վստահ եմ, հան-
դիպած է նման բաներու:

Մակայն ինծի կը թուի, թէ սկզբունքայինը, զոր յօդուածագիրը կ'ու-
զէ փոխարինել կալ ու վայելուչ սկզբնայինով, պէտք է անխտել այն միւս
երկուքէն. ամօթխած գանդադանութիւն մըն ալ կատարած է անոր եւ միւս-
ներուն միջեւ (սակայն մտնանք սկզբունքայինի հանդէպ մեր սկզբունքա-
յին դժգոհանքը...), առանց համոզումի թէ եւ (սխալ, բայց նուիրագործուած
սխալ, որ անսոցուս ու անտեղի կը դարձնէ նոյնիսկ արտասանքը՝ անձաշակ
այս բարեւ հաշուին):

Արդ, ի՞նչ է մեզքը այս բարին, զոր Յարութիւն Քիւրքեան այսպէս
կը հաւատաքննէ եւ կը բանադրէ, յետոյ աննշան անկիւն մը յատկացնելով
անոր մեր բառամթերքի բաւարանին մէջ: Այս բարին մեղքն է ունենալ եր-
կու անձանցներ՝ ունէ եւ այլն, իսկ իր առաջարկած սկզբնայինին առաջինու-
թիւնն է՝ ունենալ մէկ անձանց միայն: Ուրիշ կրկնածանց բառերու անցնելի
տառով, թիչ մը ծանրանանք այս մէկուն վրայ, ո՛վ դիտէ, թերեւ ճառ մը
զաննէք զայն ուղղափառ հաւատքին վերադարձնելու (ակնարկութիւնս բա-
ռին կ'երթայ):

Սկզբունքայինը կազմուած է սկզբունքէն, որ յոգնակին է սկիզբին.
դրաբարի մէջ ունէով կազմուած շատ ուրիշ յոգնակիներ ունինք՝ ակ-ակունք,
Հիւ-Հիւմունք, շուրթ-շրթունք, երկկամ-երկկամունք, հեայն: Ուրեմն՝ ար-
տաքննապէս այնպէս կ'երեւի, որ սկզբունքայինը նախ յոգնակիակերտ ունէ
եւ ապա անակնակերտ այլն անձանցներու կուտակումով յառաջ եկած բառ
մըն է:

Ո՛չ, այդպէս չէ: Աւելի ճիշդը՝ մեականօրէն այդպէս է, բայց խոր-
քին մէջ այդպէս չէ: Ինչո՞ւ, որովհետեւ մինչ միւս բառերը (ակունք, շր-
թունք, երկկամունք) մինչեւ Հիւմա ալ, նոյնիսկ աշխարհաբարի մէջ, կը պա-
հեն իրենց յոգնակի թիւի տարազը (օրինակի համար, կ'ըսենք՝ երկկամներս
կը ցաւին կամ երկկամունքս կը ցաւին), սկզբունքը դադարած է մեր լեզուին
մէջ սկիզբին յոգնակին նկատուելի, ստացած է նոր նշանակութիւն մը, որ
կը թարգմանուի այսպէս՝ Հիւմական կանոններ, բարոյական համոզում,
հեայն: Այլ խոսքով՝ սկզբունքը սկիզբ արժատին հետ հեռաւոր կապ մը պա-
հած է իր յոգնակի թիւին մէջ եւ պէտք է զայն նկատել նոր բառ մը: Ինչպէ՞ս
կարելի է անկէ անական մը ստանալ այլնէն զատ ուրիշ անձանց մը աւելցը-
նելով՝ միայն այս միջոցը կարելի է վերաբանութեան նիւթ դարձնել, որով-
հետեւ խաղալ այս բառին Հիւմին հետ, որ սկզբունքն է, համազօր է զայն

այլանդակելու: Եթէ կ'ընդունինք սկզբունքը իրրեւ ամբողջութիւն մը, բա-
 նիւ նովին ստիպուած ենք ընդունելու նաեւ անկէ յատկացող անակաւոր:
 Կ'ուզէ՞ք այլինը ականով փոխարինել եւ ստանալ սկզբունքական, այդ ձեռ
 գրանակներն է, բայց թող չըսուի, թէ սկզբնական բառը գոյութիւն ունի ար-
 դէն, որովհետեւ սկզբնականին մէջ սկիզբի իմաստը գո'յ է տակաւին: Ու-
 բեմն՝ կը մնայ ընտրել սկզբունքայինն եւ սկզբունքականին միջեւ եւ ընտրու-
 թիւնն ալ շատոնց եղած է: Գալով սկզբնայինին, որ կը վայելէ Յարութիւն
 Քրիստոսեանի նախասիրութիւնը, ան շատ-շատ կրնայ նշանակել սկիզբի յա-
 տուկ, բայց ոչ՝ սկզբունքի յատուկ:

Հոս կարելի է գուշակու մը պէս սկզբունքային եւ ընտանեկան բառե-
 րուն միջեւ: Ահա թէ ինչո՞ւ. այս բառն ալ կազմուած է մէկ արմատէ՝ տուն
 (արմատ մը, որ ամէն մեղքիս հոլովուած ալ է՝ տան) եւ երկու անանցներէ՝
 ընդ նախածանցէն եւ եկան վերջածանցէն (եթէ շատ պրպտենք՝ ուրիշ ներ-
 կայութիւններ ալ կրնանք գտնել այս բառին մէջ, որովհետեւ եկան անանց
 չունինք), ուրեմն՝ անանցներուն թիւը կը հաւասարի սկզբունքայինի թիւին:
 Ուրիշ նմանութիւն մըն ալ հետեւեալն է՝ այս անակաւոր եւս տուն բառին
 (արմէ յառաջացած է) հետ իր կապերը խզած է, պէթ աշխատ մը, որքան
 սկզբունքայինը խզած է սկիզբին հետ, եւ երբ ընտանեկան կ'ըսենք՝ ալ չենք
 մտածեր ո'չ տան եւ ոչ ալ անտէքին եւ կամ ալ բնակարանի հետ կապ ու-
 նեցող բանի մը մասին, այլ՝ այդ տան մէջ բնակող հաւաքականութեան մա-
 սին, ընտանիքի մասին. իսկ եթէ հրթիռի մը պատճառով տունը, որուն մէջ
 այդ հաւաքականութիւնը կ'ապրի, կործանի եւ հոն ապրողները դաշտի մը
 մէջ ապաստանին, ընտանիք մը եւ ընտանեկան վիճակ մը ներկայացնելէ պի-
 տի չլսողին, հակառակ անոր, որ այնչա տունի մը մէջ չեն դառնուիր:

Ուրեմն՝ այն ձեւով, որ ընտանիքի եւ ընտանեկանի մէջ տունի դադա-
 փարը դադարած է կարեւորութիւն ունենալէ, նոյն ձեւով ալ սկզբունքայինին
 մէջ սկիզբը դադարած է կարեւորութիւն ունենալէ: Յարութիւն Քրիստոսեանի
 սկզբնայինը այնքան կապ ունի սկզբունքայինի հետ, որքան տնայինը՝ ըն-
 տանեկանին հետ: Կրնա՞նք ըսել, որ տնային հարցեր ձեռեցինք, փոխանակ
 ըսելու՝ ընտանեկան հարցեր ձեռեցինք. նոյնպէս ալ շ'ըսուիք սկզբնային,
 փոխան սկզբունքայինի:

Մարդկային բառին հանդէպ որեւէ հակակրանք ցոյց չի տար բարե-
 կամս, քանի որ դայն գործածած է անանց որեւէ բանադրանքի: Թերեւս
 մտածէք, թէ մարդկայինը ի՞նչ կապ ունի այս նիւթին հետ:

Մարդկայինը եւ սկզբունքայինը երկուորեակներու պէս իրարու կը
 նմանին. երկուքին ալ արմատը գոյական մըն է (մարդ - սկիզբ), երկուքին
 ալ հիմը յոգնակի է (մարդիկ - սկզբունք), երկուքն ալ նոյն վերջածանցը
 ունին՝ այլիմ, երկուքն ալ իրենց այս ձեւին մէջ դարձած են որակական ա-
 ծականներ, երկուքն ալ անիմաստ են՝ առանց յոգնակի թիւին (մարդկային -
 սկզբնային):

Նպատակս ո'չ բառախաղ ընել է, ոչ ալ՝ գիւտեր: Կ'ուզեմ պարզապէս
 ցոյց տալ, որ անանցներու կուտակումը բան մը չէ փոխած այս երկու բա-
 ռերու արժէքէն, եւ թէ՛ մէկէ անլի անանցներու ներկայութիւնը, բառի
 մը մէջ, շատ սովորական երեւոյթ մըն է մեր լեզուին մէջ. հոգ-կուտական
 (հոգի-աւոր-ական), ուժ-գն-ակի (ուժ-գին-ակի), հակ-ընդ-դէմ, հանդիս-
 աւոր-ութիւն, պարտ-աւոր-ութիւն, կոտոր-ակ-ային, եւ այլն...:

Հիմա չեմ գիտեր, թէ մեր այս մեղաւորը իր յանցանքը քաւե՞ց եւ
 կամ քաւելու որեւէ յոյս ունի՞: Այդ մէկը պիտի որոշեն մեր լեզուն իտաղ-
 ները եւ զրոյները:

Պայտի հիմունքային, տեղեկամային և գործադրամակամբն, կ'ընդունիմ, որ սպիտակ է, կ'ընդունիմ ծանրաշարժ մեքենաներու, զորս տէրը մտնած է իւրեւ, կ'ուզիս եւ և հակակրեւի. առնենք երրորդը, որ և ամէնէն անճոռնին է, բազմացած է երկու արմատներէ (զորո՞ւզի) և երկու անճոռններէ (ու՞մ-ական). հարեւար որ նման բաներ ունինք, բայց այս մէկը սիրախ չի խօսիր, հակազեղացիական է, ինչպէս կ'ըսէ Յարութիւն Քիւրքճեան: Այս այլանդակութիւնները պատճառ մը չեն սակայն, որպէսզի որդեգրենք անխմտ թառեր, ինչպէս են սկզբնայինը, հիմնայինը, տեղեկամայինը...:

Մէկ ծայրայեղութենէ ազատելով պէտք չէ որ ուրիշ ծայրայեղութեան մը գերկը իյնանք:

«Այս շարքի մեկնակետին կը յայտնուէր տրամադրութիւնը՝ առաւելագոյնս մօտ ըլլալու արեւելահայերէնին, ընկալուչ մնալու՝ անոր յօրինումներուն ու նախնական առաւելագոյն չափով...»:

Այս սողերով կը սկսի Յարութիւն Քիւրքճեանի «Երեւանի տարածական թիւր ու քերի մը» նշմարը: Պէտք կ'ա՞յ ըսելու, թէ որքան աշխատեցան և կարեւոր հարցի մըն է, որ կ'ակնարկէ ան: Երբ աւելցնենք, որ յօդուածագիրը նաև ջերմ պաշտպան մըն է մեր երկու աշխարհարարներուն մերձեցման, որ պետի տանի տրամաբանական և ընդունելի միութեան մը, միաժամանակ՝ թէ՛ մեր ժողովուրդի երկու թեւերուն և թէ՛ լեզուին (թէ՛եւ այս նպատակին իրար դիմաց կ'ախտաւ է քաղաքական տուեալներէ ալ), այն ատեն աւելի լաւ կը հասկցուի այս սողերուն նպատակը: Նաև ըսեմ, որ այս ուղղութեամբ բաւարար աշխատանք չէ կատարուած. մենք չէինք կ'ընար, իրենք ալ պէտք եղածին չափ չ'ստիճեցին: Նոր — նոր է, որ աստիճան ըսելիս կ'առնուին միայն. կարեւորը՝ տրամադրութիւնն է, համոզումն է, որ այդպէս պէտք է ըլլայ, և՛ հաւաստի: Յարութիւն Քիւրքճեան այս նպատակին ծառայողներէն է՝ թէ՛ համոզումով և թէ՛ գործով: Մայրթիւն է, որ իր ճիշդը արդիւնաւորութիւն. մէկ հոգիի գործ չէ այս. համազարգացիւն և համազգային ճիշդ կարօտող գործ է:

Բայց գիրագրանք մեր նիւթին: «Նորում» բառին այս յօդուածին դուրս տեղ մը հանդիպած չէի. պահ մը մտածեցի, որ յօդուածագիրին դիւան է: Տրամադրութեանս տակ եղող բոլոր բառարաններուն մէջ փնտռեցի: Միայն Մալխասեանց է, որ ունի նախնական (իւրեւ՝ նորագումն, նորագելը), որուն համար ըսած է «Հազարադէպ թառ»: Աւրեմն՝ անցեալին ունեցած ենք նման բառ մը, որ գործածութենէ ինկած է: Ի՞նչ անհրաժեշտութենէ ժողուած՝ այս բառին վերստին կեանք կ'ուզէ շնորհիւ բարեկամս, չեմ գիտեր. կազութիւն մը կամ ուրիշ տեսչութիւն մը ունի այս բառը. այդ կէտը գտնելու և ինքզինքս քաջատրելու համար ալ կը դիմեմ հետեւեալ ասուագրանութեան: Նորում բառը, եթէ ընդունինք այս ձևով, կ'ենթադրէ գոյութիւնը նորի ներգործական բային, որուն գործողութիւնն է (action) նորումը: Անպահ մը, որ նորից կ'ընդունինք, այլևս ճամբան բաց է մեր առջև հետեւեալ ձևերուն համար ալ՝ նորից (չէզոք),

նարանի (կրասօրական) եւ նորեցնի կամ նորի տալ (անցողական)։ Այս բաները եւ կը մերժեմ գործածել, որովհետեւ, ինչպէս ըստ, կազուժիւն մը, ախեղծութիւն մը կը նշմարեմ ասոնց վրայ։

Բառ ստեղծելը բացարձակ երեւոյթ չէ սողովուրդի մը կեանքին մէջ, որ կ'անցնի բառ ստեղծելով, բառ գործածելով եւ բառ մաշեցնելով, ինչպէս որ կը ստեղծենք որեւէ ուրիշ գործիք, կը գործածենք եւ կը մաշեցնենք։ Սակայն ամէն ստեղծագործութեան պէս, ան ալ ունի իր օրէնքները, ներքին օրինաչափութիւնները. երբ այս օրինաչափութիւնները բացակայ են, որեւէ ստեղծագործութիւն չի յաջողիր։ Լեզու մը ուրիշ՝ կը ստանայ իր օրինաչափութիւնները, յայտնի չէ. զարեքու գործածութիւնը, զարեքու փորձառութիւնը կը ստեղծեն զայն, լեզուաբանը կամ քերականագէտը միայն կ'ուսուսեմարէ եւ երբ Հարկը ներկայանայ նոր բառ մը աւելցնելու՝ անպայման կ'ենթարկուի կամ կը ջանայ ենթարկուիլ նոյն այն օրինաչափութիւններուն, զորս աներեւոյթ մեղք մը զբաժնէ լեզուներու մէջ։ Յարութիւն ֆիւրքենանի արեւելահայոց վզին փաթկած մեղադրանքները, նոյն այս օրինաչափութիւններուն անտեսումէն յառաջացող երեւոյթներ են. զժբախտաբար ինք եւս ինկած է նոյն ցանցին մէջ՝ նորումին առիթով։

Հիմա գտնեմ, աւելի ճիշդը՝ ջանամ գտնել այս նորումին կաղութիւնը եւ իմ հակակրանքիս պատճառը։ Եթէ թոյլատրուի շրջանցում մը պիտի կոտորեմ եւ պիտի սկսիմ նորիլն, որովհետեւ կը կրկնեմ, նորումը անպայման կ'ենթարէ նորի բայը։ Այս բայը կաղմուած է նոր արմատէն (որ որակական ածական մըն է եւ իր այս մեկին մէջ ալ ներկայիս գործածական է), եւ ել(՞) լծորդութիւնէն, որ մեր լեզուին մէջ առաջին լծորդութիւն կը կոչուի։ Ստացուած բայը ներգործական է, այսինքն՝ սեռի կամ ուղիղ խնդիր կ'աննէ։

Երկար կը մտածէի, թէ ինչն է, որ կը կազացնէ այս բառը եւ եզրակացութեան մը շէք հասնիր։ Թերեւս լեզուաբանի մը համար պարզ ըլլար պատճառը, բայց ես լեզուաբան մը չեմ ու այդ պատճառով ալ կը դեգերէի հարցին շուրջը՝ առանց խորը թափանցելու։ Վերջապէս դիմեցի հետեւեալ միջոցին. բառարաններէն փնտռեցի բոլոր առվ սկսող եւ նորիին տարազը կրող բայերը, այլ խօսքով՝ բոլոր ա'յն բայերը, որոնք կաղմուած են հետեւեալ ձևով, Որակական ածական գործածական արմատ + ել լծորդութիւն = ներգործական բայ եւ որ կարող ըլլայ ևս վերջածանցով տալ նոյն այդ բային գործողութիւնը (action du verbe)։ Գտայ հետեւեալ չորս բայերը՝ ազատել, ազճատել, ամփոփել, անջատել (ուշագրաւ է այս թիւին փոքրութիւնը), որոնց վրայ աւելցուցի մտովի յիշածներս ալ՝ դատարկել, փակել, սըրբել։ Այս բայերը կը լրացնեն նորիին պայմանները (ազատ - ազատել - ազատում, ազճատ - ազճատել - ազճատում, ամփոփ - ամփոփել - ամփոփում, անջատ - անջատել - անջատում, զատարկ - զատարկել - զատարկում, սուրբ սըրբել - սրբում, փակ - փակել - փակում)։ Ուրեմն՝ նորիին կաղմութիւնը որեւէ խորթութիւն չի ներկայացներ, կը մտածէի, բայց կը շարունակուէր հակադրութիւնս։ Դիմեցի Վրաստանի քառարանին, քիչ մըն ալ ստուգաբանելու համար նոր, ազատ, ազճատ, ամփոփ, անջատ, դատարկ եւ փակ բառերուն ծագումը։ Ահա՛ եզրակացութիւնս. նոր, փակ եւ սուրբ արմատներէն բացի, միւս բոլորն ալ խառնածին են՝ ազատ (ա - զատ), ամփոփ (ամ - փոփ), ազճատ (նման արմատ չունինք, կը թուի թէ ասորական չաստուածութեան մը անունն է), անջատ (համ կամ ըն + զատ), դատարկ (դատ - արկ)։ Կը մնայ սուրբ, որմէ սրբել եւ սրբում (ունի՞նք իրապէս սրբում),

սակայն սուրբը իբրև մահալար արժատական իմաստով այլևս աշխարհարարի մէջ գործածական չէ, ան ներկայիս իբրև արժատ ցոյց կու տայ անձ մը միայն: Իր անական արժատէն ունինք աշխարհարարի մէջ սրբացնելը, որ չի համապատասխաներ նորեկին, որովհետեւ արժատին եւ շնորհին միջեւ ինկած է միջածանց մը: Փառով փակ արժատին, ա՛ն եւս անցեալին անական մը չէ եղած եւ նշանական է «կողպէք», այսինքն՝ զոյական մըն է, որ յետնարար ստացած է անականի արժէք, մինչդեռ դրարարեան փակել բային մէջ միայն ու միայն զոյականարար գործածուած է:

Յամենայնդէպս, պիտի չզարմանամ՝ եթէ նորեկին համարժէք կազմութեամբ ուրիշ բայեր պանուին: Հետաքրքրական է, որ մեր բոլոր բառերը, կամ աւելի ճիշդը՝ բոլոր բայերը ցուցակազրոյ մը բլլայ եւ այս հարցը ուսումնասիրուի ակադեմականօրէն:

Աւելի տարածուած ձեւը (հետեւարար ա՛յն՝ որ մեր լեզուի ոգին եւ օրինակափութիւններուն աւելի գոհացում կու տայ), հետեւեալ կազմութիւնն է. որականական անական գործածական արժատ + միջածանց + ել շնորհութիւն = ներգործական բայ, որ ԽԱՄ վերջածանցով տայ բային գործողութիւնը, նման բայեր կարելի է տասնեակներով թուել՝ սեւցնել, կարճցնել, չորացնել, կորացնել չարացնել, եւայլն: Մեր լեզուի ասորը հուսմանարար թոյլատրէք, որ նորէն կազմէինք նորցնել բայը, այսինքն՝ միջածանց մը դնէինք արժատին եւ շնորհին միջեւ, բայց ոգին՝ այդ եւս թոյլատրած չէ. եւ այսօր ո՛չ նորել ունինք եւ ո՛չ ալ նորցնել:

Սօսքը խօսք կը բանայ, կ'ըսեն. եթէ դուինիդ շատ չցաւցուցի, քիչ մըն ալ այս բառին մասին պիտի խօսիմ. վերջին հաշուով, մեր ունեցածը հազելահազ գրոյց մըն է:

Աշխարհարարի մէջ ունինք նորագել բայը, զոր կը գործածենք միայն նիւթի մը պարագային (կօշիկը նորոգել, բոյնը նորոգել): Վերացական խօսքի մը պարագային չենք գործածեր, չենք կրնար ըսել, օրինակի համար, բանասանդուութիւնը նորոգել, հողին նորոգել, լեզուն նորոգել: Ունինք նաքոզ հիմով կազմուած անական մը՝ մշտանորոգ, զոր կրնանք վերացական զոյականներու վրայ դնել (մշտանորոգ բայց միշտ հիմ) սոսքը ծանօթ է բուրբին) բայց նորագելը իբրև նորել չի գործածուիր:

Կը թուի, թէ անցեալին այսպէս չէ եղած. նորագելը գործածուած է նաեւ վերացական խօսքի պարագային ալ: «Առաւօտ լուսոյ»ի լլբգ տուէին մէջ ունինք:

Նորոճող հնութեանց,
Նորագիւտ եւ գիւ,
Նարագ(**) զարդարեա:

Ուրեմն՝ Ներսէս Ծնորհալի կը խնդրէ, որ Աստուած գինք եւս նորոգէ: Իսկ առաջին աողի հնութեանցը որեւէ նիւթական տարրիայի չի վերա-

(*) Այս սոցիմ կը կարծեմ, որ «Նորոգ զարգաբնա» ձեւով պիտի կանոնուիմ, բայց կը տեսնեմ որ «նորոգ» գրուած է 1966ին ստուած «Փոսքերիներու ժամագրութիւն» եւ 1980ին ստուած մեծ «Ժամագրութիւն» մէջ, ասոր կամար ալ եղածին պէս թնօրեմանիցի: Արդեօք «նարոգ» պէտք չէ՞ բլլայ, այսինքն՝ նորիմ գործիական ետովք, որով կը ստանամք պիս նորով զարդարէի իմաստը:

(**) Հարկաւ պիտէ չէ այն սխալ եզրակացութեամ կամսիլ, թէ «նարոգ» միայն կարելի է «նորագրական» բայ տառով:

բերիք, այլ՝ հինցած հոգիներու, հինցած հաւատքի, հաւյլն՝
Նոյն նշանակութեամբ, նոյն բառը կը գտնենք ուրիշ տեղեր ալ. «Խոր-
նորոգ խորիմէք մէջ. — Չարչարամօք քա սուրբ Միածնիդ նորոգեցամ արա-
քածք ամենայն»:

Պատկուողներուն ծանօթ է, իսկ ամուրիներն ալ լսած են Հետեւեա-
լը. — «Ենձա՛ յոյժ դուստր Սիւզի, քանզի Երկիրս երկիմք եղեմ այսօր վե-
րբստիմ քն նորոգմամբ»:

Ինչպէս կը տեսնենք, այս բոլոր օրինակներուն մէջ նորոգելը եւ նորո-
գիլը (չէզօք) կը վերաբերին վերացական գաղափարներու:

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով նորոգելին այս իմաստը կորսուած է, չեմ
զիտեր:

Յարութիւն Գիւրգճեան գործածած է նաեւ ընկալուչ բառը: Ընկալիլ
բային գէշ-աղէկ ծանօթ էի: Գրաբարի մէջ շատ գործածուած բառ մըն է,
(«Երանի՛ գոր ընտրեցեր եւ ընկալար», «ընկալ՝ քաղցրութեամբ, Տէր Աստ-
ուած հօր, զգառնացողիս գաղաչանս»), եւ կը նշանակէր ընդունիլ: Կազմը-
ւած է բնի (մէջ) եւ կալիլ (բունիլ) բառերէն, ինչպէս որ կազմուած է ընդ
եւ ւնիլը (ունենալ): Այսպէս գրաբարի մէջ կը շարունակենք գործածել այս
զեզեցիկ բառը, բայց ընդունիլի իմաստով չէ, այլ՝ ըմբռնելի: Այս վերջին
բառը տառացի ընդօրինակութիւնն է ընկալելին: Կը շարունակենք գործածել
ընկալիւլ յարակատար գերբայը կարգ մը պարապաներու (ըստ ընկալեալ
սովորութեան), աշխարհաբարի մէջ ալ, պահելով անոր գրաբարեան իմաս-
տը (ըստ ընկալեալ սովորութեան): Մօտիկ անցեալին կը գործածէինք նաեւ
ընկալագիրը, զոր փոխարինած է ստացագիրը, թէև այս երկու բառերը նոյն
իմաստը շունին, դարձեալ ընդունիլի իմաստով (ընկալագիր-ընդունման
զիր, ընդունած ըլլալը հաստատող գրութիւն), կայ վերջապէս կիրաւրնկալ
յաջող բարդ բառը:

Կը կարծէի, որ ընկալուչին ալ ծանօթ եմ, բայց երբ հանդիպեցայ «ըն-
կալուչ մնալու» արտայայտութեան, գիտցածս մէկզի գնելով, գիմեցի բա-
նարաններուս: Մայիստեանց կու տայ երկու բացատրութիւն՝ ա. ընդունող,
ընկալող, Բ. փեսայ, որ հարսին պիտի ընդունէ: Ճիգմէճեան վարդապետ
կու տայ երեք բացատրութիւն՝ ա. ընդունող, Բ. փեսացու, Գ. հեռաձայ-
նի... զործիքի բ. մասը, որ կ'ընդունի խօսքը: Գրայեանն ունի միայն՝ խօս-
նայր, փեսացու:

Մարդ քանի մը անգամ պէտք է աշխարհ գայ, որպէսզի մեր լեզուի
դադանքներուն եւ անակնկալներուն մէկ մասը իմանայ: Ուրեմն այսքան
տարիներ անցեր են եւ ես լուր չեմ ունեցած, որ ընկալուչ եղեր եմ. բայց
յանցանքը իմն չէ, օր մը օրանց վիզս փաթթուելով «սիրելի ընկալուչս,
ս՛ւր մնացիք» ըսող մը չեղաւ...:

Ընկալուչը ես գիտցած եմ այն ձևով, զոր կը բացատրէ Ճիգմէճեան
վարդապետ՝ հեռաձայնի գործիքի բ. մասը, որ կ'ընդունի խօսքը. անոր ըն-
դունողի իմաստով գործածութեան հանդիպած չէի մինչեւ Հիմա, իրապէս
կը գործածուի՞ այս հարցին ալ չեմ կրնար պատասխանել:

«... Ընկալուչ մնալու՝ անոր (այսինքն՝ արեւելահայերէնի) յօրի-
նումներուն ու նորումներուն առաւելագոյն շափով, օգտուելու արեւելահայ

եւ խորհրդահայ Հայադիտական նուաճումներէն. կարճ՝ միտիլ մեր լեզուի երկու ճիւղերու մերձեցման: Պարզ է, սակայն, որ այս արամադրութիւնները մէզմէ պէտք չէ խլին ըննականութիւնը, այսինքն՝ հարցադրող ու դատող մարդու խոշորացոյցը...»:

Ուկրաին շատը ինչպէ՞ս կ'ըմբռնէ Յարութիւն ֆիւրքճեան՝ այդ կ'ուզեմ պիտեմալ, պարզ է, որ ո՛չ հեռաձայնի խօսք կայ, ոչ ալ՝ փեսացուի, կը մնայ ընդունողը: Բայց բան մը երբ կ'ընդունինք, առարկութիւն չենք կըրնար ընել, իսկ երբ առարկութիւն կ'ընենք, ընդունած չենք ըլլար, իսկ երբ կ'առարկենք եւ կ'ընդունինք, ալ այդ մէկը ըննարկութիւն, հարցադրում եւ դատողութիւն չէ, այլ պարզապէս համակերպութիւն է, իսկ Յարութիւն ֆիւրքճեան համակերպելու ո՛չ մէկ արամադրութիւն ցոյց կու տայ արեւելահայերէնի նորումներուն եւ յորինումներուն հանդէպ (եւ՛ր կ'երթայ հայերէնը այս ձեւով): Ուրեմն, տեղ մը բոս մը կայ, որ իր տեղը չէ գտած, այդ ալ ընկալուցն է. կարելի է ունկնդիր մնալ ու յետոյ հարցադրող եւ դատող մարդու խոշորացոյցը՝ մեզք անել, կարելի է ուշադիր մնալ ու յետոյ ընդունել կամ մերժել սա կամ նա զնորումը եւ յորինումը, բայց ընկալուց զանալէ ետք՝ ալ այդ բաները կարելի չէ ընել, այդ մէկը կ'ըլլայ գիտաւիճական ամուսնութիւն»:

Գալով այս բառի դործածութեան, կարծեմ թէ ժամանակադիւզ է ընդունողի իմաստով զայն դործածելը. ունինք ուշադիր, ունինք եւ ընդունող բառերը, որոնք այս անել կարութեանէն զուրս կրնան բերել մեզ: Վերապահենք զայն հեռաձայնի դործիքին ու այդպէսով այս բառը իր ճակատագիրը լաւապէս կերտած կ'ըլլայ:

Գ'ըմբռնենք, առաւել՝ խորապէս դիտակից ենք, որ խորհրդահայ իրականութեան բազմազանութիւնը այդ հայերէնը դնէ յանդուգն ստեղծագործութիւններու մարտահրաւիրի մը առջեւ, որուն նուազ չեւտօրէն ենթակայ է մեր արեւմտահայերէնը: Բայց կարելի չէ՞ ունել վայելուց մեզով վերջնել այդ մարտահրաւիրը»:

Նախ՝ կ'ուզեմ մտտեանչել կարգ մը լիզուական անճշգրտութիւններ: Անհեթեթ է ըսել զմեր արեւմտահայերէնը, տրուած ըլլալով, որ քառասուն հասարակականներէն չկայ (թէեւ զայն քառասուն մեւով զրոգներ կան), մեր ստացականը աւելորդ է:

— Նուազ եւ շեշտօրէն իրարու հետ համերաշխ չեն. հուազը նուազեցընողի, պակասեցողի, զրկողի իմաստը կու տայ, իսկ չեւտօրէնը՝ ճիշդ հակասակը: Եւ նուազ ենթակայ է» կը բաւէ: Այս շեշտօրէնին մասին աւելի ուշ պիտի խօսիմ:

— «Մարտահրաւիր վերցնել» չ'ըսուիր, մարտահրաւիրը կ'ընդունինք կամ կը մերժենք, ինչպէ՞ս՝ բայց հրահրները: Կ'ըսուի զձեռնոց վերցնելը, որովհետեւ կայ նաեւ զձեռնոց նետելը, որ մարտահրաւիրի ձեւ մըն էր ասպետական դարերուն:

— Ձենք կրնար դրել. «Մտեղծագործութիւններու մարտահրաւիրի մը առջեւ», որովհետեւ, եթէ յատկացուցիչը (ստեղծագործութիւններու) որոշւած չէ, յատկացեալը (մարտահրաւիր) որոշ է: Հետեւաբար պէտք է ըսել «ստեղծագործութիւններու մարտահրաւիրին առջեւ»: Այս մասին ալ պիտի խօսիմ:

— «Վայելուց մեզով» պէտք չէ բան, ինչպէս որ պէտք չէ ըսել «սքանչելի կերպով», եւ այնն: Ամէն անգամ, որ կարելի է սրակական ժակբայ մը ձագմել՝ պէտք է խուսափիլ անպանին վրայ ձեռնիլ եւ կիրպով աւելցնել

եւ ձեւի պարագայ կազմելու փորձութենէն եւ... ունակութենէն: Չլսենք՝
Հանդարտ ձեւով կամ կերպով, վայելուչ ձեւով կամ կերպով, խանդավառ
ձեւով կամ կերպով: այլ ըսենք՝ Հանդարտօրէն, վայելչօրէն, խանդավառօ-
րէն: Կրնաք վստահ ըլլալ, որ այսպէսով մեր լեզուն աւելի մեծ վայելչու-
թիւն մը կը զգենու...:

Հիմա անցնիմք բուն բանիքիս:

Այս նախադասութեան մէջ կայ բառ մը, որ զիս չի համոզեր, ստեղ-
ծագործութիւններ բառն է այդ: Նորումը շահանկայ, ընկալուչը սիրախ
չխօսեցաւ (ի՛նչ կրնամ ընել, ո՛րքա է), բայց այս բառին ներկայութիւնը
զիս կը ժողորմեցնէ: Մալխասեանց հետեւեալ բացատրութիւնը կու տայ այս
բառին. 1- արարչագործութիւն, 2- գեղարուեստական գաղափար յղանակն
եւ իրագործելը, 3- հոյակապ գեղարուեստական գործ:

Զգենք արարչագործութիւնը (աշխարհի գործերուն խելք շեմ հասցը-
ներ արդէն), միւս երկուքին մէջ եւ այս բառին գործածութենէն իմ կրած
սպաւորութիւնս ա՛յն է, որ ստեղծագործութիւնը մեր մէջ կ'արթնցնէ կա-
տարելութեան, անվիճելի, անքննադատելի, անվերաքննելի, գլուխ-գոր-
ծոցի եւ բացառութեան գաղափարը: Միայն երեւակայութեամբ կարելի է
պատկերացնել (եւ ինքս չեմ կրնար), թէ ի՛նչ կրնան ըլլալ գյանդուզն ստեղ-
ծագործութիւնները: Հիմա ջանանք անենել, որ այս գաղափարը մարմնա-
ւորող կամ գոյն արթնցնող բաւարար ենթահող ստեղծած կամ պատրաստած
է Յարութիւն Քիւրճեան:

Յարգարժան բարեկամս ակնարկած է Ռոբնմնիրու եւ յօրհմումներու,
որոնց կը դիմեն արեւելահայերը՝ լուծելու համար քերականական կամ բա-
ռակցմական իրենց խնդիրները: Արդ, քերականական կամ բառակազմական
նման ճիշդեր, նոյնի՛սկ լուսազոյն արգիւնաւորուելու ալ ըլլային (ինչ որ կը
թուի թէ պարզուան չէ, արուած ըլլալով, որ հակազեղադիտական հանգա-
մանքը, թափթփանութիւնը, վայելչութեան պակասը միայն կը կազմեն այս
բոլորին յատկանիշները), արդեօք իրաւունք պիտի ունենայի՞նք գյանդուզն
ստեղծագործութիւններու» մասին խօսելու, կը կարծեմ որ՝ ո՛չ: Քերական-
ութիւնը, լեզուաբանութիւնը եւ գիտական ճիշդ պահանջող միւս բոլոր մար-
գերը ստեղծագործութեան հետ կապ չունին: Ստեղծագործութիւն չեն, օ-
րինակի համար, Հրաչեայ Աճառեանի «Արմատական քառարանք» (թէ եւ ե-
զակի գործ), Հայր Արսէն Բագրատունիի «Է՛) պետս գարգացելոց»ը, Այնը-
թայի «Յարաբերակաւութեան սկզբունքը», Տարգիւնի «Տեսակներու ծագու-
մը»ն, եւ այլն, որքան ալ մեծ ըլլայ այս գործերուն տարողութիւնը: Ստեղ-
ծագործութիւն են, սակայն, Ս. Պետրոսի տաճարը, Հոմերոսի «Իլիական»ը,
Եղիշէ Չարենցի «Նս իմ անուշ Հայաստանի»ն. ստեղծագործութիւնը ամէն
բանէ առաջ կ'ենթադրէ ստեղծումի գաղափարը, որուն կ'ընկերանայ գոր-
ծը, եւ այս երկուքը հիմնուած՝ տաղանդի վրայ: Ստեղծագործութիւնը ա-
մէն բանէ առաջ արուեստ է, իսկ գիտական գործերը (քերականութիւնը գուտ
դիտական գործ է), որքան ալ մեծ դեր մը խաղան մեր կեանքին մէջ, ար-
ւեստ չեն:

Այս յօդուածը կ'ուղեմ փակել վերջին նշմարով մը. «...Ապրող էա-
կին հողիկան աշխարհի, զգացումներու եւ զգացականութեան բարդ խառ-
նուածքն է ան (կ'ակնարկուի գգայնութեան Ա. Ե.)»... Մինչ զգայնութիւնը
տեսողական է, լսողական, շօշափային, եւ այլն...:

Այս հատուածին քերականական սխալներուն մասին ուրիշ առիթով
պիտի անդրադառնամ. հարցը չի վերաբերիր նաեւ քննուած նիւթին եւ եզ-

ընդուն, որովհետեւ երբ Յարութիւն Քիւրքեանն կը բացատրէ բառ մը, քե-
րականական կանոն մը, կամ կը մտնան լիցուական սխալադրութիւն մը՝
անբնականելի է, անվիճելի եւ անհերքելի, ինք ինքն է, այլ խօսքով: Տարբեր
է պարագան, երբ Հարցը կը վերաբերի իր նոր բառերուն: Այգրնայիմէն եւ
տեղեկայիմէն ետք, ահա ձեզի ուրիշ գիւտ մըն այ՝ շօշափայիմը: Ձգայու-
թիւն-զգայնութիւն գոյզը հրաշալիորէն բացատրելէ ետք, կ'ուզէ զգայու-
թիւնը բնորոշող յատկանիշներ թուել՝ տեսողական, լսողական... եւ յան-
կարծ ոտքը կը սայթաքի ու կ'իյնայ նոյն անելին մէջ, որ այլիմ անանցով
վերջացող բառերունն է, եւ կը ստանանք... շօշափայիմը: Ինչո՞ւ, բարեկամ,
ինչո՞ւ տեսողականն է լսողականն է ետք, յանկարծ ոյս շօշափայիմը: Լա՛ւ
կը տեսնես որ ակամով կազմուած որակականները նոյնքա՞ն Հայերէն են,
նոյնքա՞ն դեղեցիկ, նոյնքա՞ն արտայայտչական, ալ ինչո՞ւ շօշափական եւ
զոյնութիւն ունեցող անականը վերածել շօշափայիմի, որ ազեկ է, խժա-
լուր է, հակականոնական է եւ, ի վերայ այս ամենայնի՝ ՀԱՅՏԻՆ ԶԷ՛:
Կանոն մը կա՞յ, որ կ'ըսէ, թէ զգայութեանց այսինչ տեսակը ակամով կը
ստացուի եւ այնինչ տեսակը՝ այլիմով: Գոնէ ճիւղաճիւղերու եւ յորինումներ-
րու գծ հաւատարիմ մնալու համար (քանի որ ակամի եւ այլիմի միջեւ այսօր
մեծ տարբերութիւն կը գնես եւ արդարօրէն), զրէ՛ր՝ տեսողական, լսողա-
կան, շօշափական, կամ՝ տեսողայիմ (սխալ), լսողայիմ (սխալ) եւ... շօ-
շափայիմ (սխալ):

Ճի՛շդ է, որ արեւելախոսակերտ մեղքերը շատ են, երբեմն գիտակցուած,
երբեմն՝ ո՛չ, գիտնան իսկ կը յամառին, ձկնոց թեղանիքները լայն են», կ'ը-
սէ եղբի Հայր Արսէն Դագիկեան (այդպէս կը վկայէ Բ. Յաշեան): Բայց,
նորումով, հիմնադրով, տեղեկայիմով եւ շօշափայիմով ո՛ւր կը հասնին մեր
թեղանիքները՝ Աստուած գիտէ. ինչ որ կը վերաբերի իմիններուս, այնքան
նեղացած կը զգամ, որ շնչակղճ կ'ըլլամ:

*
**

Հիմա քիչ մըն ալ զրազինք ստանին Հոգեբով եւ մեր սուներ կարգի գը-
նենք: Իր յօդուածի առաջին գլուխին մէջ, որ յատկացուած է ամէն, ամբողջ
եւ բոլոր անականներու կամ դերանուններու միջոց գործածութեան, Յարու-
թիւն Քիւրքեանն կը գրէ. «Ամէն, բոլոր եւ ամբողջ բառերը... իբր դերա-
նուն... անական, ի դէպ՝ երկու պարագային ալ կը պատկանին Անորոշ կամ
Ընդհանրական խօսքի մասին, տեսակին...»: Այս անմեղ տողերուն մէջ եր-
կու սխալներ թացուած են: Թերեւս ընթերցողներէն սմանք քերականութիւ-
նը մոռցած են, հետեւաբար պզտիկ վերլիւնցում մը կատարեմ: Ո՞ւր բառը
այստեղ գործածուած չէ իբրեւ խօսիլ կամ խօսակցութիւն իմաստով, այլ՝
քերականական եզր մըն է, որով՝ կը հասկնանք լիզուի մը բոլոր բառերը
միասին առնուած: Ո՞ւրքը ունի իր մասերը կամ տեսակները (մասունք բանի,
կամ խօսքին մասերը, կամ խօսքին տեսակները), որոնք հետեւեալներն են.—
գոյական, անական, դերանուն, բայ, մակբայ, յարադրութիւն, շաղկապ,
մայրաբնութիւն, իսկ ոմանք ասոնցմէ կ'անջատեն յօդերը եւ եզանակաւ-
որիչ բառերը: Ո՞ւրքի այս մասերը ունին իրենց ենթաբաժանումները եւ այս-
պէսով է, որ անական մը կրնայ ըլլալ իր կարգին անորոշ, որակական, թուա-
կան, ցուցական, ստացական. դերանուն մը կրնայ ըլլալ անորոշ, եւայլն:

ինչպէս նաեւ յօդը: Այս բացատրութիւնն է յայտ կու գայ, որ անորոշ խօսք գոյութիւն չունի, այլ կան խօսքի անորոշ մասեր կամ ենթամասեր, ենթատեսակներ: Ուրեմն՝ պէտք է գրուէր. «...Կը պատկանին խօսքի անորոշ կամ ընդհանրական մասին, տեսակին...»: Երբ անորոշը կը դնենք խօսք բառին առջեւ, ընթերցողը իրաւունք ունի կարծելու, թէ խօսակցութեան մըն է, որ կը վերաբերի, կ'ակնարկուի: Եթէ զթիւրն ու թերին նպատակ մը ունին, ուշադիր ըլլանք հետեւեայ կանոնին՝ որակական անակաւոր պարտինք միշտ գրել առջեւը ա՛յն գոյականին, զոր ան կ'որակէ:

Կայ երկրորդ սխալագրութիւն մը եւս. Անորոշ եւ Ընդհանրական անձականները պէտք չունինք գլխադիրով գրելու, որեւէ արդարացուցիչ պատճառ չկայ եւ այս երկու բառերը, որոնք պարզապէս սրակական անակաւոր են, գլխադիրով գրուող բառերու կամ ասոյթներու մէջ չեն մտնիր: Եթէ Յարութիւն Գիւրգենիան կ'ուզէր անոնց տրուած նշանակութիւնը շեշտել այս ձևով, պէտք է ուրիշ միջոցի դիմէր:

«Սակայն... անոնք... կ'երեւին... իբր սխալ ծանոցուող եւ սխալ կիրարկուող բառեր»: Սխալ ծանոցուող եւ սխալ կիրարկուող բառեր չկան եւ չեն կրնար ըլլալ, մեր լեզուն նման բառեր չունի, իմ ճանչցած եւ... շնաչցած լեզուներս ալ նման բառեր չունին եւ չեն կրնար ունենալ. կան սխալ ծանոցուած եւ սխալ կիրարկուած բառեր: Այլ խօսքով՝ բառերը ո՛չ մէկ ատեն կրնան սխալ ծանոցուելու եւ կիրարկուելու յատկութիւնը ունենալ, բայց զանոնք գործածողները կրնան սխալիլ: Երբ ենթակայական դերբայը իբրեւ որակական անակաւոր կը գործածենք, մեր որակած գոյականին մէկ յատկութիւնը կ'ուզենք մատնացոյց ընել, յատկանիշ մը կ'ուզենք տալ այդ գոյականին: Արդ, կա՞ն, գոյութիւն ունի՞ն բառեր, որոնք սխալ ծանոցուելու եւ սխալ կիրարկուելու յատկութիւնը ունենան, ո՛չ, նման բառեր չկան: Ուրեմն գրենք. սխալ ծանոցուած եւ սխալ կիրարկուած բառեր: Եթէ գրենք Երբութիւն Գիւրգենիանի ձևով, այդ պարագային պէտք է ընդունինք որ ամեն, ամբողջ եւ բոլոր բառերուն յատկանիշն է սխալ գրուիլ. ալ ի՞նչ թիւր եւ ի՞նչ թերի:

Ուրիշ դիտողութիւն մը եւս օտխալ ծանոցուող եւ սխալ կիրարկուող զին մասին: Եթէ այս կամ այն բառը սխալ ծանոցուած է, իբրեւ հետեւանք մէկ եւ միայն մէկ կարելիութիւն կրնար ունենալ, այն է՝ սխալ կիրարկուելը. հետեւաբար, տրամաբանօրէն, այս կիրարկուողը պէտք չկար բարդուելու, կուտակուելու ծանոցուողին վրայ, այն ալ՝ եւ շաղկապով: Եթէ եւին փոխարէն գրուէր կամ, կացութիւնը փոխուած կ'ըլլար:

Ուրեմն, այսուհետեւ բժախնդրութեամբ ընտրենք եւ զանազաննք մեր ենթակայական եւ յարակատար դերբայները, որոնց երկուքն ալ որակական անակաւոր պաշտօնը կը կատարեն (ուրիշ պաշտօններու կարգին):

«...Կրնանք ըսել գրոյր ութերը՝ բայց երբեք բոլոր ութը: Իսկ գրուող կարողականութիւնը՝ կրկնակիօրէն սխալ է. «Կարողականութիւն»ը, շեշտօրէն վերացական բառ ու ծանոցութիւն, չի կրնար գրուիլ յօգանակի...»:

Պարզ եւ մեկին: Հակառակը պնդող կա՞յ. ես պիտի փորձեմ: Բոլոր կարողականութիւնը սխալ է անկասկած. բայց ինչո՞ւ համար կրկնակիօրէն սխալ է, այդ մէկը չեմ հասկնար: Բարեացակամ մէկը արդեօք ձանձրոյթը յանձն անելով ինծի կը բարեհաճի՞ր բացատրել թէ ինչո՞ւ...: Մէկ եւ միայն մէկ սխալի առջեւ կը դանձմ ես ինքզինքա՞մ ամբողջի փոխարէն բոլոր գրուած է, եւ եթէ սխալագրողը ըսած ըլլար գրոյր կարողականութիւնները, այն

ատեն, քերականական ՈՁ Մէկ սխալ գործած պէտք ըլլար, այլ՝ տրամաբանական (քանի որ զհարողականութիւնը յոգնակի չի դրուելը, ըստ յօդուածայինը), եւ այդ տրամաբանական սխալն ալ գործուելու պարագային՝ դարձեալ Մէկ սխալ պէտք ունենայինք. ո՞ր է երկրորդ սխալը, շեշտ... : Բայց ուրիշ եւ կրկնակ սխալներ կան վերի մէջըհրուածին մէջ: Քիչ անդին կը տեսնենք:

Շեշտօրէն վերացական արտայայտութիւնը ունի Յարութիւն Քիւրքճեան: Նիւթականի եւ վերացականի տարբերութիւնը պէշադէկ ըմբռնած էի կամ ալ այդպէս կը կործէի, հիմա ուրիշ քարդութեան մը առջեւ է յոգնած ուղեղս: Պէտք է զանազանեմ շեշտօրէն վերացականը եւ անշեշտ վերացականը, թերեւս օր մըն ալ՝ կէս վերացականը, մէկ իննգերորդ վերացականը, կրկնակ նիւթականը (օրինակ՝ կապարը), կամ մէկ տասներորդ նիւթականը (օրինակ՝ լոյսը, օդը): Բայց ասի քերականութիւն չէ, Անշեշտայնի յարաբերականութիւնն է, ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Շեշտօրէն վերացականը տեսնք, հիմա դարձեալ քննենք այս շեշտօրէնը ուրիշ... Խոշորացոյցով մը: Քիչ առաջ խօսեցայ խօսքի տեսակներուն մասին, հիմա կ'ուզեմ երկու բառ ըսել մտկայաներու մասին, որովհետեւ շեշտօրէնը մակրայ մըն է, որական մակրայ, եւ այստեղ կը վերաբերի վերացական որական անականին (ուրիշ տեղ մըն ալ հանդիպեցանք շեշտօրէն ենթակային եւ շեշտակի վերացականութեանին, ճիշդ այս առաջին օրինակին պէտք): Մեր (եւ հաւանաբար ուրիշներու ալ) լեզուին մէջ մակրայները երեք պաշտօն ունին՝ կը լրացնեն կամ կ'հղանակուորեն բայ մը, անական մը եւ ուրիշ մակրայ մը: Երբեմն իրենց բնութիւնը փոխելով կ'առնեն կամ կը կատարեն այն բոլոր պաշտօնները, զորս զոյական մը կ'առնէ կամ կը կատարէ՝ այս երկրորդը մեզի հետ կապ չունի: Կեղրոնանանք որական մակրային վրայ, որուն մաս կը կազմէ շեշտօրէնը, եւ տանք քանի մը օրինակներ — յանկարծ, ախմայ, քարճրածայն եւ բոլոր օրէն (դանդաղօրէն, մեղմօրէն, միամտօրէն), արար (քաջարար, հաւանաբար, դժբախտաբար), ապէս (մեծապէս, բացարձակապէս, մօտաւորապէս) վերջածանցը կրող բառերը: Այս վերջածանցները յաճախ զիրար կը փոխարինեն, երբեմն ալ՝ ոչ: Կրնանք ըսել՝ հաւանօրէն — հաւանաբար, շենք կրնար ըսել՝ քաջարար — քաջօրէն, եւ այլն:

Այս թուած մակրայներու մէջ հետեւեալ հատարակաց գիծերը կան. ա. Բոլորն ալ բայի մը եւ միայն բայի մը հետ կրնան գործածուիլ:

Ոչ մէկը կարելի է անականի մը կամ ուրիշ մակրայի կցել:

բ. Բոլոր օրէն, արար եւ ապէս վերջածանցը կրող մակրայներու արմատը կամ հիմքը(*) որական անական մըն է կամ կրնայ այդպէս գործածուիլ (դանդաղ, մեղմ, միամիտ, քաջ, հաւան, դժբախտ, մեծ, բացարձակ, մօտաւոր):

Շեշտօրէնը չի կրնար բացառութիւն մը կազմել, որովհետեւ այս կանոնը բացառութիւններ չունի, կրկնակ սխալ մըն է, կամ «կրկնակիօրէն» սխալ է, ինչպէս կ'ըսէ Յարութիւն Քիւրքճեան, անոր արմատը զոյական մըն է (շեշտ), եւ գործածուած է որական անականի մը հետ:

Այս կանոնէն մեկնելով, դիւրին է այլեւս պուշակել կամ պարզապէս նկատել, որ կրկնակիօրէն մակրայն այ սխալ գործածուած է, քանի որ աւելացած է սխալ անականին վրայ (այսպէս երկու բնութիւն ունի, զոյական է եւ անական է, այստեղ երկրորդն է):

Վերջացնեմ, բայց միտքս հանդիստ չէ, այս կրկնակիօրէնը չեմ սխալ

րեք, չեմ պիտեր ինչո՞ւ, չի գրաւեր զիս, վայելչութենէ զուրկ է եւ կաշու-
 թիւն մը ունի վրան. դուն որ անանցներու կուտակուածը չէիր սիրեր, այս
 մէկը (կրկին - աղի - օրէն կամ կրկին - աղ - թ - օրէն) ինչո՞ւ վիզերնուս
 վաթթեցիր, սիրելիս, ինչո՞ւ: Դուն զեզի չէիր մեղքնար, գոնէ մեզի մեղ-
 քընայիր:

Սուրճ մը չի նեմ եւ բառարաններուս քով երթամ:



Էւրեքա՞, էւրեքա՞, էւրեքա՞...

Բոլոր բառարաններս ալ խառնեցի եւ ահաւասիկ եզրակացութիւնս:

- Կրկին. մակրայ է եւ թուական բազմապատկական անական:
- Կրկնակ. սրակական անական:
- Կրկնակի. մակրայ (կրկնակի սխալիլ, կրկնակի մեղանչիլ):
- Կրկնակիօրէն... ՁԿԱՅ:

Ուրեմն այսքան ատեն է կը վիճիմ եղեր բառի մը համար, որ զոյու-
 թիւն չունի մեր լեզուին մէջ: Հիմա ո՞ր մէկը ողորմ, այս բառին կորո՞ւս-
 տը, թէ՛ իմ տգիտութիւնս:

Կը խոստանամ ասկէ ետք նկատի ունենայ հետեւեալը.

- Կրկնակիօրէն, շեշտօրէն, ուղղակիօրէն բառեր ու, մանաւանդ՝
 մակրայներ չկան մեր լեզուին մէջ:
- Կրկնակի, շեշտակի, ուղղակի մակրայներ են (այս երեքէն շեշ-
 տակին անականարար ալ կը գործածուի):
- Կրկնակ, շեշտուած, ուղիղ անականներ են կամ իբր այդպիսին
 կը գործածուին:

ՏՈՔԹ. ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

(*) Հիմ բնիւով եւ հասկցած եմ բառիմ այն մտքը, որոն վրայ աւելցած է անանց
 մը, խօսքին այս կամ այն տեսակը ստանալու համար. հետեւաբար զժրախօսին հիմն ալ
 բախտը կարելի է ձկտակ, ձուտաւորիմ եիմը՝ ժօռը, եւայլն:

ԹԻՒՐՆ ՈՒ ԹԵՐԻՆ ԱՅՍՕՐ

ՅԵՏ-ԳՐՈՒԹԻՒՆ՝ ԲԺՒՇԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Համակրանքով — թէև որոշ տարակուսանքով նաև — կարդացի բժ. Ա. Եղիայեանի շարքին ուսմին երկու յօդուածները «Ազգակ»ի մէջ: Տարակուսանք, նախ՝ գրական-հրատարակագրական բարքերու կալուածին մէջ ասոնց պարզած որոշ մէկ պատկերին առջև. անմիջ շնորհուած շքանշաններէն մինչև անձնական բարեկամութեան մը հրատարակային ինքնահանձնող հրահետրումը՝ դոնէ ինձի համար նեղացուցիչ բան մը ունին, անխորհրդապահ եւ պոստիվարի: Տարակուսանք, ապա՝ որովհետև այդ յօդուածներէն ասոնքի՛նքը արդէն, մզոնհազի երկարութեամբ, կը հանոյանար յաճումովը հարցի մը շուրջ (սկզբունքային բառին մասին...), որ իմ գրած բուն հարցոչէր, այլ՝ կողմնակի, պատահական դիտողութեան մը ստարկան: Իր երկրորդ յօդուածը, թէ մը աւելի տարօրինակ, փոխանակ անգրագաւանալու իմ շարքիս գրած հարցերուն, կամ փոխանակ անգրագաւանալու լեզուական ընդհանրական երեւոյթներու եւ մասնանշիլու տարածում, կրկնուող սխալներ, միակնե՛րը, որոնք արժանի են հանրային ուշադրութեան, — մատի փաթթոց կը դարձնէր... նուազստիս, այսինքն՝ սոսկական անհատի մը զսխալները, իմ գրութեանէ՛ս, լեզուէ՛ս լսկ վերցուած, եւ ո՛չ, սնգամ մը եւս, իմ քանոնուած զատուցներէս...:

Յօսած էի, այսուհանդերձ, համակրանքի մասին նաև: Անշուշտ ինչպէ՛ս համակրանքով չմտնեալ, պահ մը մտնալով ամէն վերապահում, երբ մէկը կ'արձագանդէ լեզուական, այսինքն՝ ընդհանրական երեւոյթներու նուիրուած յօդուածաշարքիդ, թէ՛կուղ քուկինիդ խոտոր համեմատող խառնըւած ու մտաւարական բարքեր զուցարեկով...: Մտնեցումիս այս երանգը չի կարտիր, կարծեմ, յաւելեալ հիմնաւորման:

Սկզբնական այս տրամադրութիւններս կը զանցուին, սակայն, մեր բժիշկին երրորդ յօդուածով, ուր իմ լեզուական «սխալներու» ճննարկումը կը վերածուի արատնանշական-վարժապետական մոլուցքի: Միայնիւր գլխին մէջ ամէ՛ն գնով՝ ահա՛ մեր նշանաբանը, կ'ըսէ մեր բժիշկը կարծես: Մենք՝ վարժապետներս, ամէն օր աշակերտական շարագրութիւն կը սրբագրենք, ասանց սրբագրութեան արդիւնքը... մամուլով հանրութեան սեփականութիւն դարձնելու: Բայց մա՛նաւանդ զգոյշ եւ աշալուրջ կ'ըլլանք սխալ, անհիմն ու ձրի սրբագրութիւն չընելու, որովհետև վարժապետողի երեխաներ կրնան մեր սրբագրութեան սխալը բռնել: Եւ շատ հաճելի չ'ըլլար արդիւնքը: Այդպիսի բան մըն ալ պիտի փորձեմ հիմա, անշուշտ ասանց ինքզինքս աշակերտ նկատելու, մեր սրբագրիչ-բժիշկին հետ: Վերջիննք երկու հոռոյ՜:

Բժիշկը, երկարաշունչ ճննարկումէ մը ետք, կը մերժէ զործածած նարում գոյականս: Իր գլխաւոր պատճառարանութիւնը ա՛յն է, որ արժատական արականները չեն առներ — ում գոյականակերտ մասնիկը: Ետս —

բազմ հարց տամ իրեն. իսկ ո՞ւր կը գնէ հուսկ, ճիշդ, հակ, սիգ(տ), լուր, սեղմ, պլիլի... որակականները, բոլորն ալ վաւերական արժատական անհանկարծիքներ: Համապատասխան գոյականներու տեղումը, -ուս մասնիկի յաւելումը, կը ձգեմ իրեն...: Ձեռն ալ վկայակոչեր մեր դատականներէն՝ Օչականը, նաեւ Հայրենի՛ վերլուծական-քննադատական արձակը, նորագոյնը, որոնք նորումին... քաղաքացիական իրաւունք տուած են արդէն, ինծի՛ն խըլելով, աւա՛ղ, նորարարի փառապաշար:

Այլ առակ լուարուք: Բժ. Եղիայանը չի սիրեր ընկալուլ բառիս գործածութիւնը՝ ընդունողի, ընդունելու առակի կամ ընդունելու տրամադիրի (միշտ հոգեմտաւոր ուղորտին մասին խօսելով) իմաստին մէջ: Կ'արձանագրեմ իր նախկին անհրաժեշտ առումին հանդէպ... ու կը դառնամ անդին՝ յարգելու այս անգամ համակրանքը, որ կը շնորհեն այս բառի ա՛յս առումին՝ Յակոբ Օչական մը կամ Դանիէլ Վարուժան մը: Յուսամ բժիշկը չի նեղուիր նախապատուութիւնը իրեն շտապուս: Լաւ կ'ըլլար՝ բառարաններու կողքին երբեմն Օչական եւ Վարուժան թերթէր՝ աւելի ստեղծագործական հայերէնի մը հարգուելու համար. ի միջի այլոց կ'անդրադառնար այն ատեն, որ լեզուն ալ, հակառակ իր կարծիքին, ստեղծագործական ուղիւ մը ունի...: Ի դէպ, յիշուած երկու գրողներուն մօտ կ'արձանագրեմ, ընկալուլէ անդին, ընկալուլիս Թիւն հոսանց գոյականը, միշտ նո՛յն առումով գործածուած:

Ձեռն շարունակեր, արդէն երկարեցայ: Արդէն, եթէ չըլլար մեր լեզուի հարցերուն լրջօրէն մօտենալու հրամայականի շեշտան փափաքս, պիտի չանդրադառնայի Հրապարակադրական ոչ-առողջ այս երեւոյթին: Ձեռն ալ ուղեր բնորոշելու րոտ հոթեան՝ մեր բժիշկին դիտումը, երբ կ'եւլէ, վարժապետի կարմիր մատիտով ղինուած, Հրապարակային արագութեան. չեմ ուզեր ըլլալ վիրաւորական: Պարզ է, իմ լեզուս կրնայ անխոցելի չըլլալ. բայց պիտի նախընտրէի աւելի ձեռնաս եւ լուրջ մեղով շարադրուիլ, քան անէն դեռով սխալ գտնելու ելած վարժապետական մօտեցումով, առողջ Հիւսուածի մէջ ախտ փնտոող, Հիւանդութիւն երեւակայող բժիշկի նշարակով: Եթէ արդէն վիրաւորական եղաւ շեշտս՝ կը խնդրեմ ներողամիտ ըլլալ. մեր Հրապարակադրական բարձրու, բայց մա՛նաւանդ հայ լեզուի մօտեցման լրջութեան հրամայականը կը հարկադրեն երբեմն մարդս գործածելու ա՛յս նշարակը...:

Յ. ՔԻՆՐՔՅԱՆ

Կ. Շ Ա Հ Ի Ն Ե Ա Ն

ԵՐԱԺՅՏՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ

Ամբողջ արուեստը յարստեօրէն կը տնջայ
հասնիլ երաժշտութեան վիճակին:

ՈՒՈՒԹՂԸ ՓԷԹՂԸ

Արուեստագիտներէն ոմանք կը պաշտպանեն այն կարծիքը, թէ արուեստներու ազատ կամքով ամուսնութիւն գոյութիւն չունի, եւ թէ՛ եղածը պարզապէս բնարարութեամբ է: Այս կարծիքը, մանաւանդ անոր երկրորդ մասը, ունի չափազանցութեան ակներև բաժին մը, ինչպէս ունի արուեստի պատմութեան մէջ զինք արդարացնող ձախող ամուսնութեան բազմաթիւ օրինակներ:

Եթէ մեր ուշադրութիւնը կեդրոնացրենք երաժշտութեան վրայ եւ փորձենք զայն բնութագրել՝ անոր եւ միւս արուեստներուն միջեւ բաղդաստական մը կայացնելու ճամբով, եւ աչքի առջեւ ունենալով երկու այնպէս հակալ երաժշտագէտներու տեսակէտներ, ինչպիսիք եւ Արթուր Ծոփենհաուզը (1788-1860) եւ Խոսեարտ Հանսլիք (1825-1904), ապա պիտի նկատենք, որ երաժշտութիւնը միւս արուեստներէն կը տարբերի առաջին հերթին «սոցա-մտապատկերային» արուեստ մը ըլլալու իր իւրայատկութեամբ, ինչպէս կ'ըսէ Ծոփենհաուզը(1):

Արդարեւ, միւս բոլոր արուեստները այս կամ այն չափով կը պատկերեն արտաքին աշխարհը, մինչ երաժշտութիւնը կը ներկայացնէ իր իւրայատուկ աշխարհը, ուր ամէնէն աւելի կեղծ ու բնագործիկ կը հնչէ ձեւին եւ բովանդակութեան անջատման միտումը: Այս պարտադրանքն անհատի առնելով, իր գիրաժշտա-

քիւն եւ կեանք» յողուածին մէջ Շառլան Պէրպլերան կը գրէ. «Անոնք, որ երաժշտական կտոր մը «հասկնայու» համար կը պահանջեն, որ իրենց ըսուի, թէ ի՞նչ կը «նկարագրէ» ան, կամ ի՞նչ «գաղափարներ» կը յայտնէ, կամ ի՞նչ «ըզգացումներ կ'արտայայտէ», մարդիկ են, որոնք երբե՛ք պիտի չկարենան հասկնալ իրապէս երաժշտութիւնը. արովնտու անոնք յղացնենրով միայն կրնան մտածել, մինչ երաժշտութիւնը կը պահանջէ զուտ ձայներով մտածուիլ, ձայներով հասկցաւիլ»(2):

Ուրեմն, երաժշտութիւնը իր ունկերդրին կը հրամցնէ ո՛չ թէ որոշ իմաստներ, այլ՝ իմաստաւորումի կարելիութիւններ, զգայական ու հոգեկան յուզումի հնարաւորութիւններ: Որովհետեւ անիկա արտաքին աշխարհի թանձարացեալ պատկերները չի ներկայացնէր, այլ ունկերդրին մօտ կը ստեղծէ այդ պատկերներու ծնունդը կարելի դարձնող մթնոլորտ մը: Ըստ Ծոփենհաուզրի, երաժշտութիւնը արուեստ մըն է, որ չ'արտայայտէր ուրախութեան, տխրութեան, ցաւի, երկիւղի կամ երանութեան որոշ զգացում մը, այլ այդ զգացումները կ'արտայայտէ «իրենք իրենց մէջ», «անոնց որոշ չափով վերացական պատկերին մէջ», «առանց անոնց յարակցութիւններուն, այլ խօսքով առանց անոնց գրգայատմաններուն»:

A.R.A.R.®

digitised by

Երաժշտութեան երկրորդ ուշագրաւ յատկանիշը, զոր առաջին անգամ դիպուկ կերպով տարազած է Էտուարտ Հանսօնը, անոր «խնդարաւութիւնն է (immanence) : Այս իւրայատկութիւնը կարելի է նկատել առաջինին անմիջական հետեւանքն ու լրացուցիչը :

Ինչպէս Շոփենհաուերը, Հանսօնը եւս դիտել կու տար, որ երաժշտութիւնը միայն իր սեփական միջոցներով չի կրօնար որոշ գնացումներ արտայայտել եւ որեւէ սոնաթի երաժշտական ամբողջ կատարել կամ մէկ շարժումը ենթակայ չէ որեւէ իրական կամ երեւակայական զգացումի, այլ կը զարգանայ զուտ երաժշտական օրէնքներով : Թէեւ Հանսօնը կ'ըսէ, թէ՛ «զգացումները այն ըստայգ ուղեցոյցն են, որ ի վերջոյ պիտի որոշէ գեղեցիկին արժէքը», սակայն չ'ընդունիր, որ երաժշտութիւնը ըստեղծուած է զգացումներ արթնցնելու համար, ու կը մերժէ Ռոպերթ Շումանի այն տեսակէտը, թէ՛ «որեւէ արուեստի գեղագիտական արժեքափը կը ծառայէ ուրիշ որեւէ արուեստի, եւ ինչ որ կը տարբերի՝ գեղարուեստական նիւթն է» : Ըստ Հանսօնի, երաժշտութիւնը զգացումներուն հետ չի գրուցեր, այլ՝ երեւակայութեան : Հետեւաբար անիկա ինքնին անկախ բնագաւառ մըն է :

Արուեստներու մէջ երաժշտութեան դրական յարաբերաբար անկախ դիրքը արդիւնքն է անոր ոչ-մտապատկերային բնոյթին : Անոր այս բնոյթը եւ բառերու հետ յարաբերութեան կարելիութիւնը նկատի առնելով՝ Շոփենհաուերը իր «Աշխարհը իրիւր կամք ու պատկեր» գործին մէջ (առաջին անգամ հրատարակուած 1818ին, իսկ վերջնական ձեռագրին՝ հիմամբ՝ 1844ին) բառերը կը համարէ «ստույ ստար յատկում մը, որ երկրորդական արժէք ունի» : Երաժշտութիւնը, ըստ Շոփենհաուերի, առանց բառերու եւ թատերական շարժումի (օփերայի մէջ) ընկերակցութեան եւս կը մնայ մեծ ու սպաւորելի : Ան բառերուն հանդէպ կը պահպանէ իր անկախութիւնը եւ անոնց հետ բնաւ ամբողջովին չի ձուլուիր : Եթէ բառերուն թելադրանքները կարելի

է մտքով պատկերացնել, կարելի չէ սակայն զանոնք ոչ-մտապատկերային այս արուեստին հետ ձուլիլ : Բառերու նուազաւորումը կամ անոնց ընկերացումը երաժշտութեան չի նշանակեր պատրաստ զծաղրութիւններու մէջ գոյնեքու գետեզուտ, ինչպէս համոզուած էր Կլուք. որովհետեւ երաժշտութիւնը միջակ արժէքով քերթուածի մը նոր խորք, հորիզոնն ու որակ կրնայ հաղորդել ու գայն վերածել մարդու հոգիի ամենամութ ծալքերը արտայայտող երկի մը : Իննէ Ուելք եւ Սթըն Ուորըն իրենց «Գրականութեան տեսութիւն» հատորին մէջ կը գրեն, որ՝ «...երաժշտութեան ու իրապէս մեծ բանաստեղծութեան միջեւ յարաբերութիւնը ճշտ կը թուի, երբ մեզ կը մտածենք այն ապացոյցներուն մասին, որոնք հայրաբայութեան են նայնիսկ ամենայնազ Երաժշտական յարմարեցումներու կողմէ : Կառ հիւստածեմք եւ վարպետութիւն ամբողջացուած կատարելութեան մէջ իրենք գիրքումներ իրենք գիրքում գիրքում չեն ըմբայեր երաժշտական յարմարեցումի, մինչ միջակ կամ խեղճ բանաստեղծութիւնը, ինչպէս Հայնէի կամ վիլհելմ Միլլերի վաղ շրջանի բազմաթիւ բանաստեղծութիւններ, բնագիր հայրաբայութեան են Շումանի եւ Շումանի լատագոյն երգերուն : Եթէ բանաստեղծութիւնը գրական բարձր արժէք ունի, յարմարեցումը յամախ ամբողջովին կը խեղաքիւրէ կամ կը մտմտացնէ անոր բնագիրը, նայնիսկ երբ երաժշտութիւնը ինքնին ունի որոշ արժէք : Մարդ պէտք չունի վկայակոչելու այնպիսի օրինակներ, ինչպէս է Շէյնփիլի «Օթելլո»յին մեծ մասը վերադի օփերային մէջ, որովհետեւ Սաղմուսաց Գրքին եւ Կէօթէի բանաստեղծութիւններուն գրեթէ բոլոր յարմարեցումները բաւարար փաստ կը հայրաբայեն այս գծով : Բանաստեղծութեան եւ երաժշտութեան միջեւ գործակցութիւն, այս՛, գոյութիւն ունի : սակայն բարձրագոյն բանաստեղծութիւնը դէպի երաժշտութիւն չի ձգտիր, եւ մեծագոյն երաժշտութիւնը կը գոյատեւէ՝ առանց զգալու բառերու կարիքը»(3) :

Պէտք է նշել, որ երաժշտութիւնը

ունկնդրին մէջ կը յառաջացնէ նաեւ լը-
 սուրբին, որ խօստան լոսութիւն մըն է եւ,
 երաժշտական տունաւ կտորի մը ար-
 զիւնըն ըլլալով՝ կը պարզակէ գանազան
 մեկնարանութիւններու եւ ըմբռնումնե-
 րու Հնարաւորութիւններ: Եւ, ընդհան-
 րապէս, երաժշտական երկի մը գոյաւո-
 րումը կամ կատարումը կարելի է ար-
 տայալտել, բտելով, «նախ» ազմուկ էր,
 ապա հնչեց երաժշտութիւնը, որ կը խօ-
 սեցնէ լուսիւնն ու ազմուկը: «Լուս-
 իւնը երբեմն զու գայ մաս իսկ առնել
 երաժշտական գոյացութեան, երբ ամ իր
 գերագոյն ինչ-ինչ պահերուն կը կայտա-
 կայէ յանկարծ իր ձայները, բայց ո՛չ
 ինքզինք...: Լուսիւնը, որ հոն էր, բայց
 անկկատ այլեւս, «կը լուսի» յանկարծ,
 ձայներուն չափ գոյաւոր, «կը գագսուի»
 իրը շտի Թառազայրումս, ու ատով եր-
 քան ատելի իսկ յազիչ, էան ձայները.
 որովհետեւ անոց ծակադարար, բայց
 անոցմը տահմանաւ երաժշտական ձեւ
 ու իմաստ գեցած է ինքն իսկ այդ պա-
 ներուն:

«Կը բաւայի, ուրեմն, Համեմատագր
 Լուսեան խորհիմ» երբեմն անոր գոյա-
 ցութեան մասեր ալ աննկար իրեն՝ ինք-
 զինք կառուցանելու»(4):

Արուեստաբանութեան մէջ ընդհան-
 րացած է այն համոզումը, թէ արուեստ-
 ներու զնահատումին մէջ կրկնութեան ու
 զործածութեան հանդէպ անոնց դիմաց-
 կունութիւնը եւ թարմութեան պահպա-
 նումը արժեքաւոր մըն է: Այս արժեքաւոր
 երաժշտութեան կայունածին մէջ կիրար-
 կելով, կարելի է ըսել, որ երաժշտու-
 թիւնը միւս արուեստներէն աւելի դի-
 մացիուն ու անպասելի է գանազան մեկ-
 նարանութիւններու հանդէպ: Այսպէս,
 երաժշտական մասերական զործ մը, օ-
 բինակ, Պեթհովէնի Երկ համեմատագր
 երբ ունկնդիրներու կողմէ բազմաթիւ
 անգամներ ըմբռնուելի է ետք, անոնց
 մօտ դարձեալ կը պահէ իր թարմութիւնն
 ու ազդեցութիւնը, կը նշանակէ, թէ ար-
 ւեստի որակաւոր զործ մըն է, որովհե-
 տեւ անպատելի է:

Թանախ երաժշտութիւնը կը սահ-
 մանուի իրեն միտածամանակ արուեստ
 digitised by

եւ զիտութիւն եղող բնագաւառ մը: Եւ,
 հետեւաբար, անհրաժեշտ կը նկատուի,
 որ անհկա գնահատուելի գոյանութեամբ
 ու հասցուելի բանականութեամբ: Յամե-
 նանդէպս, ինչպէս կէօթէ կ'ըսէ, երա-
 ժշտութիւնը կը ներկայացնէ «ձեւի» եւ
 բովանդակութեան ամբողջացումը: Եւ
 զայն բանականութեամբ հասկնալու կա-
 ընելութեան դժով պէտք է նշել, որ ե-
 րաժշտութեան միայն օրէնքները կարե-
 լի է բանականութեամբ հասկնալ, իսկ
 անոր բովանդակութիւնը (եթէ կարելի է
 խօսիլ զերաժշտութեան բովանդակու-
 թեան) մասին՝ ամբողջութեամբ ու ճշ-
 շրտօրէն բնաւ կարելի չէ նուաճել միայն
 բանականութեամբ, քանի որ երաժշտու-
 թիւնը, կրկնե՛նք, ու-մտապատկերային
 է, այսինքն՝ միայն մտքին հետ առնչ-
 ւող կայունած մը չէ, այլ՝ ակամօքի ճամ-
 բով մարդուն ֆիզիքական ու հոգեկան
 ամբողջ կազմուածքին հետ յարաբերող
 արուեստ մը: Ականթի՛ ճամբով, որովհե-
 տեւ «ակամօքը երաժշտութիւն միակ
 ուղեղն է» (Շոփենհայնը):

Եւ եթէ լեզուին նպատակը, ի վեր-
 շոյ, ազատագրուելն է ու երաժշտու-
 թեան վերածուելը, ամբողջ արուեստին
 յարատեւ առնչանքն է երաժշտութեան
 վիճակին հասնելը:

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ԵԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

(1) Այս յօդուածին մէջ Շոփենհայնը եւ
 Հանդիքի տեսակետներէն մէքերումները եւ վը-
 կայիտումները խոստումն են գլխաւորաբար
 Ալֆրետ Այնշթայնի «Երաժշտութիւնը զգա-
 պալաւ Ժամանակը շահեմ» անուով գործին
 արտերէն թարգմանութեան: Թարգմանիչ՝
 Տ.Ք. Սիմեոն Համիսի Մանուտ, հրատարակ-
 ւած՝ 1973թ. Գաղթի, Երեւանի մշակույթի եւ
 մշակույթի նախարարութեան կողմէ:

(2) Շ. Պրիպրեան, «Գեղարուեստի եւ
 զեղարուեստ», 1976, Պելուք, Տօնիկեան հրա-
 տարակատան, էջ 247:

(3) Ռեմէ Ռեյնէլ եւ Օտթըն Ռարթ, «Գրա-
 կանութեան տեսութիւն», 1970, Փենկուիք, էջ
 127:

(4) Շ. Պրիպրեան, «Գեղարուեստի եւ
 զեղարուեստ», «Լուսեան շրջանակը» իրա-
 վար յօդուածը, էջ 273:

A.R.A.R.@



ՍԱԴՈՒՌՆԱԿԱՆ ՍԱՐՍԱՓ...

Մեր ձեռքը նոր հասաւ Երեւանի մէջ 1978ին լոյս տեսած Վազգէն Գաբրիէլեանի «Իմաստի վարածան» անուն մենագրութիւնը, որ կը հանդիսանայ ցարդ մեծ բանաստեղծին մասին պատրաստուած ուսումնասիրութիւններուն ամէնէն ստուարը, 430 էջ, մեծաքանակը, 10 հարար օրինակ։ Կարգ մը արդար զիտողութիւններով հանդերձ, Գաբրիէլեանի գործը ըստ արժանւոյն զնահատուեցաւ Հայրենի թերթերէն «Գրական քերթ»ի, «Հայրենիքի» ձայնի եւ «Գարուն»ի մէջ, Ալբերտ Եարուբեանի, Վարդան Փարթեմեանի եւ Սուրէն Աղարարեանի ստորագրութիւններով։

Փարթեմեանէն կ'իմանանք, որ «Վ. Գաբրիէլեանը աւելի քան մէկ սասնամեակ առաջ ձեռնամուխ է եղել վարածանի ստեղծագործութեան անմիջական ուսումնասիրութեանը»։ Տրամադրուած այս լայն ժամանակը ինքնին լրջութեան փաստ է եւ գործը քիչ քան չի պարտի մենագրողին այդ արժանիքին։ Վազգէն Գաբրիէլեան իրրեւ աղբիւր օգտագործած է վարածանի մասին նախապէս լոյս տեսած բազում գործեր, առաւել՝ նորայայտ նածակներ, կենսագրական ու ստեղծագործական նոր տուեալներ բովանդակող անտիպ գործեր ու շարք մը յուշեր, որոնք մեծապէս նպաստած են վարածանեան աշխարհին աուարկայական բացայայտման ու արուեստին վերելման։

Ազգրագտոնայով հետաքրտած աշխատանքին, Ալբերտ Եարուբեան կը թուէ արեւմտահայ եւ ներկայ Հայաստանի մտաւորականներուն կողմէ գրի առնուած վարածանեան բազում մենագրութիւններ, առանձին ուսումնասիրութիւններ, յուշեր եւ նորայայտ այլ նիւթեր, ընդդէմըով, որ՝

«Վ. Գաբրիէլեանի աշխատութիւնում փաստօրէն առաջին անգամ համակարգուած ու լայնօրէն ներկայացուած են վարածանի կեանքի ու ստեղծագործութեան ճարտարութիւնը՝ զարմալով բանասիրական այն իարիտը, որի վրայ կառուցուած են հետագոտողի շատ դրոյթներ»։

Այդ հիշդ է։ Անփոխարինելի են մանաւանդ «ճարտարութիւնը» բաժինները։

Գծաբարտարար, սակայն, վարածանին վերաբերող նորայայտ էջերով այնքան խանդավառ Վազգէն Գաբրիէլեան համրայայտմբով քիչ լահագըրդրուած է եւ բոլորովին անտես առած Գուրգէն Միթթարեանի, Մինաս Թէօօլեանի, Կարօ Սասունիի, Մ. Իշխանի, Եդ. Պօյաճեանի, Զանաչեանի եւ այլոց մենագրութիւններն ու առանձին զրութիւնները, որոնք, յայտնապէս վերելածական բաժինին մէջ՝ կրնային նոր պատուհաններ բանալ իրեն։

Իր աշխատանքի տարիներուն, Գաբրիէլեան շատ քիչ անգամ հանդիպումներ ունեցած է նաեւ Յ. Օշականի հետ եւ ներքին թերացում մը չէ այս մէկը, որովհետեւ այսօր դժուար է ըմբռնել, թէ ինչպէ՞ս վարածանի մասին մենագրութիւն կը գրեն մարդիկ՝ առանց նկատի առնելու մենագրութեան ցարդ չգերազանցուած վարպետին գործը, Օշականի «Համապատկեր»ի շարքը, որուն վեցերորդ հատորը, որ լոյս տեսաւ Վազգէն Գաբրիէլեանի մենագրութեան ուղիղ տանամեակ (1968) մը առաջ, ահագին տեղ յատկացուած է վարածանին, վաթսուն մեծադիր էջ։

Հիմա Օլականը Հայաստանի մէջ հռչակուած նախկին հերետիկոսը չէ եւ իր անունին ու գործերուն յիշատակութիւնը մահացու մեղքերու կորզին չի դնուիր, եւ Գարրիէլեան արդէն քանի մը անգ ասուած է Օլականի անունը, երնք-չորս անգամ, Թղթիբի «Հայ գրականութիւն» հանդէսին մէջ Վարուժանի մասին ստորագրած ուսումնասիրութեան առիթով եւ «Հերթնոս երգեր»ու սաղիմական հրատարակութեան իբրեւ յոռաշարան արտագրուած էջին կապակցաբար: Վերջինը «Համադատներ»ի վաթսուն էջերէն վերջուած ութ էջն է, ուր Օլական, ըստ Գարրիէլեանի՝ «խոր բնութեամբ հաստատեց»... եւայլն:

Մէկ ութերորդը այսպէս գնահատող Գարրիէլեան անտարակոյտ ողբ-տրուիթեան աւելի պատճառներ պիտի ունենար տարողին զիմաց, զոր փոյժ չէ ըբսծ փնտռել եւ ունենալ իր տրամադրութեան տակ: Նման պատահումներն մը անպայման ատրբեր արժեւորումներու զուտ պիտի բաժար իրեն եւ կասկածէ զուրս է, որ հատորը գրախոսողներէն Սուրէն Աղաբաբեան հետեւեալ դիտողութենէն տարբեր բան պիտի ըսէր.

«Բանն այն է, սակայն, որ սեղ-տեղ, օրինակ, «Ճեղին սիրտը» գիրքը վերլուծելիս, հեղինակը չափից անլի մեծ տեղ է տալիս արտաքին իրականութեան տուեալներին, որոնց ծանրութեան տակ խլացում է վերլուծուող այս կամ այն բանաստեղծութեան ձայնը, բանաստեղծութիւնը գրկուում է իբր ինքնաքիւնից»:

Նոյնքան տեղին է Գարրիէլեանի այս աշխատութեան առիթով կատարուած հրկրորդ դիտողութիւնը, այս անգամ Շարուրեանի կողմէ, թէ՛ «Մեր համագումար, իրաւացի չէ գրականագէտը, երբ Վարուժանի «Ո՛ր Տարիթա» եւ «Սպարուհեական» քերթուածներում տեսնում է տոտեմի գոհնիկ պատկերներ»:

Խնդիրը կը վերաբերի Գարրիէլեանի ու պարբերութեան. «Վարուժանը, չնայած առանձին գոհնիկ պատկերներին («Ո՛ր Տարիթա», «Սպարուհեական» բանաստեղծութիւններէ մէջ) արուեստի մեծ ուժով յայրահարկց միւրի դիմագրութիւնը, մերկութեան գայթակղութիւնից խուսափելով, գտաւ ճիշտ մէջ գեղեցկութեան եւ կենսասիրութեան հրամզը, ծաւալեց եւ ընդգծեց այն»:

Այն ապաւորութիւնը կը ստացուի, սակայն, որ «մերկութեան գայթակղութեան» կամ «գեղեցկութեան» մասին կայուն կարծիքներ չունի Գարրիէլեան, որովհետեւ թէ՛ կ'սքեւորուի մերկութեան պատկերներով եւ թէ բարոյախօսի պատմուեան գզեցած՝ խօսք կ'ուղղէ անոր դէմ: Հետեւեալ պարբերութեան մէջ ամփոփուած է Վարուժանի հեթանոսական արուեստին առիթով ծագած հարցին հին ու նոր երեսները.

«Վարուժանի այս երգերում կան եւ ինքնին» գեղեցկութիւններ, եւ վայելումներ, կրէիր ու մարմնական նախրումներ: Եւ բնական է, որ ինչպէս Վարուժանի, այնպէս էլ միւս «հեթանոսականներին» այսպիսի երգերը պիտի տեղիք տային տարամերժ կարծիքներին: «Հեթանոսականներին» դէմ գրեցին Ա. Շիրվանզադէն, Վ. Տերեանը, Յ. Սուրիսաբեանը, Կ. Ջալալանը եւ շատ ուրիշներ: Նրանց յատկապէս վրդաձուլ էին երեսոյթի արտաքին կողմը, բաց նկարագրութիւնները: Ռեալիզմի մեծագոյն ներկայացուցիչ Շիրվանզադէին գայրագրել էին յատկապէս նատուրալիստական նկարագրութիւնները, բնանշատութեան սլաքն ուղղուում էր մերկութիւններին, անպակն ցամկասիրութիւն յարուցող նկարագրութիւններին դէմ, եւ դա, ի հարկէ, տեղին էր, որովհետեւ «հեթանոսականներին» շատերի բազմաթիւ գործեր այդպիսի տպաւորութիւն էին թողնում»:

«Հեթանոսականներից» շատերի բազմաթիւ գործերուն առիթով կատարուած ընդհանրացումը, այսինքն՝ Վարուժանէն առաջ ու հաջ իբր այդ արժիող գրական ստուերներուն անտազանդ գրչախաղերուն գոյութիւնը, երբն' ք չ'արդարացներ Հեթանոս քուրմին զէժ գայթակղած միւսներուն մուկանութիւնը եւ ոչ ուր Գարրիէլեան բարենշան մը կ'աւելցնէ իր վրայ՝ բարոյախօսի շիրմանգողէական ցնդոտիներ նետելով Կոստան Զարեանի ուսերուն:

Քարմացնելու համար յիշողութիւնները, ըսենք, որ արուեստի նախնական լրմոնումներով Վարուժանի զէժ գրոհող մարդոց «վասնասունին» առաջին պատճառը եղաւ «Գեղարուեստ»ի մէջ լոյս տեսած «Ո՛վ Լալագէշն, ու վայնասունին» առաջին վայոցը եղաւ «Նամուս»ի պատուանդիրը, նոյնինքն Շիրվանզադէն, «Բոզմաւս եմ գգուամբով» տնուն գրութեան «Անա մի ուրիշը» ենթախորագիրին տակ շարադրելով իր խոր-խոր անհասկացողութիւնը: Արձանագրուած պատմութիւն է, ամբողջական երկերու մէջ վերհրատարակուած գրութիւն, որ «Հեթանոս երգեր»ը ուսումնասիրողներուն միշտ նիւթ եղաւ թէև, իսկ մանրամասնութիւնը ծանօթ է քիչերուն միայն: Ճիշդ այդ պատճառով՝ դիմացի էջին կու տանք ամբողջութիւնը, որուն մէջ յայտնուած անհեթեթութիւնները այնքան զանոթութիւն պատճառեցին եղբարարխտ բանաստեղծին: Անշուշտ, Վարուժանի տաղանդով գրուած բանաստեղծութիւն մը պիտի չկէր անբանաստեղծ գրիչներու հարուածին տակ, ու չկէճցաւ, օրին արուեստի խոր հասկացողութեամբ օժտեալ զէժքերը, Օշական եւ ուրիշներ, պաշտպանութեան տակ տօին «Ո՛վ Լալագէշն, որ կենսաթրթիւ իր թարմութեամբ քաղից ժամանակին հետ ու նուաճեց ամէնքը:

Վարուժանի ապրած վիշտէն 35 տարի ետք, Պարոյր Անակ պիտի գրէր. «Ժժուար կը լինի պատկերացնել մայրական ընդունութեան, կնոյ արգաստուր ծանրութեան առաւել հմայուն, մաքուր եւ սրբազան լիտիւր... Վերջինս բանաստեղծական յորինումէի ճերմաշնակութեան, յղացում օրիգինալութեան եւ պատկերման եզրեւոր խորութեան տեսակետից մի իսկական գլուխ-գործոց է՝ անխառն ճերմաշնակութեամբ ծնուած, մի իւրօրինակ յանցանքի խոստովանութիւն...»:

Տեղին է յիշել նոյն քերթուածին մասին ուրիշ վկայութիւն մը, ի բնէ արուեստագէտ ուրիշ ընտրեալէ մը, Վազգէն Շուշանեանէն, որ, Պարոյր Անակի արձանագրած հիասքանչ զնահատականէն շուրջ երկու տասնամեակ առաջ, թրթրացուցած էր քնարական իր ուժեղ տպաւորութիւնը.

«Ձեզմէ ա՛վ կը յիշէ, ըսէ՛ք, այն թրթրուոն ու աշխանայիմ ռիւսոյնքերով, գիմնարքը քաղցուով եւ կրճոտ եւ տաքարիւմ կիմերու բուրումնորով լիցնուն երգը, սրուն թափանցիկ եւ յղի սողերուն մէջէն մարդ խոշոր աչքերով կը տեսնէ՝ ծանրաբեռն ու հարուստ որթատունկերը, որ կը դիպին, այդիմնորու պարագնաց հարիզներ, ընկազմիներ՝ մեծ ու լայն շարքերով եւ գարնամագնակ ազդիկներ, որ խաղաղ կը թնդին հնձամին մէջ»:

Երկու այս եղբարարխտ զէժքերուն տպաւորութիւնէն հաջ, տպաւորութեան տակ՝ վերստին սրբացած «Ո՛վ Լալագէշն բաւական լոյս պէտք է պիտած ըլլար նաեւ նոյն նկարագիրը կրող Վարուժանի միւս բանաստեղծութիւններուն վրայ եւ նորագոյն մտաւորականները գերծ կացուցանէր հիւններուն օրինակով գայթակղելու փորձութեան: Այդպէս չէ պատահած: Կը ցաւեմք, ու կ'անցնինք, իսկ Վազգէն Գարրիէլեանին կը հանդիպինք ուրիշ անգամ, ոչ բարոյախօսիներուն կէս թերան ձայնակցած մենագրողին, այլ՝ ապրուած դժոխք մը գունազարդած յողումագիրին, զանական թուականներուն Կոստան Զարեանին վիճակուած հայրենական աննախանձելի բախտին առնչութեամբ:

Ա Հ Ա Մ Ի Ո Ւ Ր Ի Ծ Ը

Ես պրեկ էի մի հայ բանաստեղծի մի ոտանավորի մասին, որի հեղինակը հրեականացի պատմիչ է, թէ ինչպէս նա իր տասներեք տարեկան ազգականուհու հոգին բռնաբարել է եւ մարմինը գերեզման ուղարկել:

Երէկ իմ բարեկամներից մէկի ցուցմունքով կարդացի մի ուրիշ հայ «բանաստեղծի» մի աւելի զարդիկ ոտանավորը:

Այդ «բանաստեղծի» անունն է Գանիէլ Վարուժան, ոտանավորի վերնագիրը «Ո՛վ Լալագէ...»: Տպուած է այդ կեղտոտ ոտանավորը «Գեղարուեստ» հանդէսի նոյն համարում:

Գատեցէ՛ք ինքներդ: Մեր բանաստեղծը պատմում է, թէ ինչպէս ինքը մի օր իր յղի կնոջ հետ մտնում է մի այդի այգեկուճի ժամանակ: Այդում աշխատում են էթովպացի կանայք կիսամերկ, «ծիծերն ի վար գոգին մէջ»:

Տեսնում է նրանց թէ չէ, իսկոյն դրզուում է: Գոնէ ինքն այսպէս է երգում.

Ես ունեցայ ընդվզումներ արիւնի:

Ու ցանկացայ արեգակին, եռլին ուլտ

Ուռնացրնել ինձ մերձեցող ամէն հունտ...

Այսինքն՝ Հասարակ մահկանացուներին լեզուով ասած, հայ «բանաստեղծը» ցանկութիւն է ունենում սեռական յարաբերութիւն ունենալ բոլոր էթովպուհներին հետ, որոնց, «պորտին տակը» այնպիսի բանաստեղծական էջատագի է բերել նրան, որ մտածում է անգամ իր յղի կնոջ ներկայութիւնը:

Եւ ահա այն միջոցին, երբ յղի կինը դատուած է նուրբ քաղցրով եւ ուտելով, մեր երեւելի բանաստեղծը մի էթովպուհու...

Համբարեցի՛ր բռնած հընդիկ մագերէմ,

Պառկեցուցի ժրպտագի՛մ զլուխը կուրծքիս,

Ու հեշտաբա՛ւրքն շրթերով, Լալագէ՛,

Համբարեցի՛ր...

Եւ այլն:

Գա արդէն պոռնկագրութիւն չէ, այլ կատարեալ պոռնկութիւն: Եւ ահա Գանիէլ Վարուժանի պէտ էրստամանները մեզ իրանց պոռնկութեան նըմոյշները ծախում են բանաստեղծութեան տեղ եւ «Գեղարուեստ»ի նման մի հանդէս այդ նմոյշները օրը ցերեկով թափազա է անում մեզ:

Ո՛հ, մարդու փոխանքն է գալիս այդ տեսակ պոռնիկ, կոպիտ, ամօթից ու ամենատարբական ճաշակից զուրկ «բանաստեղծների» դործերը կարդալիս:

Ինչո՞ճ հայ ընթերցող:

Ես սնահատում եմ «Գեղարուեստ» հանդէսը, հաւանում եմ նրա նըկարները, սիրում եմ խմբագրի նուանը եւ անկեղծ ցանկութիւնը ծառայելու իր հայրենակիցներին մէջ գեղեցիկի ճաշակը զարգացնելու դործին, բայց չեմ կարող իմ նողկանքը չլայտնել, որ շատ գեղեցիկ էջերի հետ նրա համարելի հանդէսի մէջ կան եւ լինում են եւ այնպիսի աղտոտ էջեր, որպիսին է «Ո՛վ Լալագէ...»-ն (էջ 62-63):

Կը ցանկանայի, որ պ. Գ. Լեւոնեանը շեքարկուէր մի խումբ ազէտ, անճաշակ արեւելեան կեղտը՝ իդէալական սիրոյ եւ դոյտերի կոկոսը սոսիակի դայլայլիկի տեղ ընդունող ասիացիների խրատուանքին...

Ա. ՇԻՐՎԱՆՁԱԴԷ

«Նրկիբի ժողովածու», Հատոր 10, էջ (475-476)

ՎԱԳԻՆԻ 1980Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԵՂԻՆԱԿ	ԿՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
---------	---------	-----

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ե. ՉԱՐԵՆՑ	Քո մթնածորում	1
> >	Նու քառերի համար քո	1
Գ. ՄԱՀԱՐԻ	Ակսելին	1
Հ. ՍԱՀԵԱՆ	Դու եօթնապատիկ ամենդ նահատակ	1
ՀՐ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Սոնետ հեծեծանքի	1
ԱԼ. ԻՍԱԶԱՆԵԱՆ	Ա. Բակուցին	1
Վ. ՏԵՐԵԱՆ	Մի խառնե՛ք մեզ	2
Ե. ՊՕՅԱՃԵԱՆ	Դու	2
> >	Գետի մը	3
> >	Դու — գիրքը անծանօթ	8
> >	Մարդը նորէն, մարդը նորէն...	12
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ազօթ՝ յինկուրքեան հղանկներում	2
> >	Նու քանն էր...	8
> >	Յարակտարը խլրտում	8
> >	Կապույտ գորութիւն	8
Ա. ՃԻՒՂԵԱՆ	Ծածկոց	2
> >	Բանաստեղծ ծով...	6
> >	Կարօտ	6
> >	Գետ	11
ԱՏՐԱ	Գետի կարկաչ	3
Հ. ԻՓԷԿԵԱՆ	Թող գան օրեր	3
> >	Բարեկամի մը	3
> >	Հրածեշտ	3
> >	Առանձնութիւն	3
> >	Անտակ սրդին	3

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Կ. ՇԱՀԻՆՆԱՆ	Գաղթակայան	3
>	Յայտնաբերում	10
Յ. ՊԼՐՊԵՐՆԱՆ	Դաշտանկարներ	4
>	Ծննդոց	7
>	Ազատութիւնս ինչ բրի	7
>	Հովը կը խաղար	7
>	Առատեան ժամերուն	7
>	Ծովափին	9
>	Քարաքումբեր	9
Շ. ԱԶՆԱՌՈՒՐ	Պարզ է, սիրում եմ քեզ	4
>	Տա՛ւր մեզ այսօր	4
Պ. ՀԵՐՆԱՆ	Կարօտ	4
>	Անվտանգութիւն	4
>	Եւ ես եկայ...	12
Յ. ՄԱՆՈՒԿՆԱՆ	Ազիրս	5
>	Անգիր քառի պէս	5
>	Ընկալագիր	5
>	Այրեցեալ գօտի	9
>	Դիակի մը անձնօր	9
>	Հեռամտայց հոտառութեամբ	11
ԱՏՈՆԻՍ	Բանաստեղծութիւններ	7
Փ. ՃԵՐԱՆՆԱՆ	Փերքա	5
>	Քարեղէն մանապահ...	5
>	Անեզրական օրեր	10
>	Օր մըն էր, հեռո՛ւ	12
>	Տարածութեան սահմանէն դուրս	12
Գ. ԹԵՄԻՋԵԱՆ	Նախերգանք	6
>	Տեղ մը լեզուին եւ շարժումին միջեւ	6
>	Հնչեանի	9
>	Կը կանչէ՞ք զիս...	11
Շ. ՔԷՕՐՕՂՆԱՆ	Բազմերակդ՝ կեանքիդ ղէմ...	6
>	Ո՛ր չսպասելու համազումով	10
>	Շարունակուող գիմարում	10
>	Քաղիլու արուեստը	10
Կ. ԱՓՈՒԽՆԷՐ	Zone	11
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Ո՛ր, Տայիթա	7
>	Սաղունական	7
>	... Ո՛վ լայագէ	12
Մ. ՀԱՃՆԱՆ	Անպատեղիին	8
Ն. ԶԱՐՆՈՒՏԵԱՆ	Արեադարձային	8
ԶԱՀՐԱՏ	Բանաստեղծութիւններ	8
Յ. ՄԻՆՈՑ	Եղբրերգութիւն N. N.ի համար	10

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
---------	---------	-----

Ա Ր Զ Ա Կ

Ա. ԲԱԿՈՒՆՑ	Փոքրիկ Ֆրիխտան՝ Մաքվեյ Մաքվեիչը	1
»	»	1
»	»	1
»	»	1
»	»	1
»	»	2
Ս. ԽԱՆՁԱԿԵԱՆ	Բակունցեան խնամքները	1
»	»	1
»	»	9
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ	Օփթն, փլիճ	2
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Ամէն ո՛ք ինձ փրկել է ուզում	3
»	»	7
»	»	7
	Հում նիւթ դասական կառոյցով	
	մի սովորական պատմութեան համար	10
Բ. ՔԵՊԱՊՅԵԱՆ	Խորտակուած քտեակը	2
»	»	4
»	»	4
»	»	8
»	»	12
Ա. ԱԲԷԼԵԱՆ	Խոնաքած պատեր	3
»	»	10
»	»	11
»	»	12
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Քարայրիմ աղջու	4
Վ. ԱՆԱՆԵԱՆ	Մոնկապարտեզի դաստիարակչուհին	4
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Պիկնիկ	5
»	»	5
	Շարք մի առատ	
	գայլուհու եւ ոչխարի կեանքից	9
ՇԱՀԱՆՆՈՒՆԵՑ	Ապրազ քաղին հեքիաքը	5
»	»	9
»	»	9
Կ. ԶԱՐԵԱՆ	Անցորդը եւ իր նամբան	5
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	Ռոստոմ	6
Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Թաւառազ քրքիջը	6
Գ. ԱՅՏԵՄԵԱՆ	Քանի՞ տարի, ինչի՞ կեանք	6
Ն. ԳԻՄԱՔՍԵԱՆ	Յարալեզ	6
»	»	8
»	»	8
Մ. ԻՇԽԱՆ	Հաղորդակցութիւն	10
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	Ժամադրութիւն	7
Ա. ԱՐՓԻՆԷ	Ածելիին շեղքը	7
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Կեանք մը	8
ԼՈՒՍԻԿ	Պատար ջուրեր	11
Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Մի ազգիկ ու մի արու	11
	Լոյսի ամբողջը	11

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Մ. ԻՇԽԱՆ	Հայ գիւղին քնարերգակ նկարիչը	1
Ռ. ԻՇԽԱՆՆԵԱՆ	Առաջառը գծում	1
»	Ակսել, Հերդա	1
»	Ակսել Բակունց	1
Կ. ՓՕԼԱՏՇԱՆ	Բակունցեան պատմումները	1
Յ. ՊԵՐՊԵՐՆԱՆ	Պարսկահայ երիտասարդ բանաստեղծուքիւնը	2
»	Փ. Ճերանեանի «Քամիներ»ը	4
»	Կ. Զարեան՝ յանրժամական ճամբորդը	5
»	Գրական քերթերը որս՝ համար եւ ինչո՞ւ	6
»	Զանբաս	8
»	Ա. Արէլեանի «Զինագուլ 27»ը	10
»	Մուսէ՛ Որբունիի գրականութեան ներս	12
»	Անուան գրագետը	1
Ա. ԱՐՓԻՆԷ	Կենսաբաթաւ եւ նշմարտարույս խօսքի	
Է. ՄԿՐՏԶԵԱՆ	արարչութեան համադարձին	1
»	Արեւելեան Եւրոպայի երկրներում —	
»	1.- Բուլղարիա	3
»	Արեւելեան Եւրոպայի երկրներում —	
»	2.- Հունգարիա	4
»	Արեւելեան Եւրոպայի երկրներում —	
»	3.- Ռումինիա	5
»	Միխայիլ Շոլոխովի «Ճաղաղ Գոն» վեպի	
»	ստեղծումը	8
»	Խորհրդահայ գրական արուարձանների	
»	կացութեան շուրջ	9
»	Երեւանի «Լեհերատուրնայա Արմենիա»	
»	ամսագրի բանամտակի առթիւ	12
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Ակսել Բակունց	1
»	Ֆրանսուա Վիյոն	6
»	Կիյոմ Ափոլինէր	11
»	Ա. Բակունցի «Կյորիս»ը	1
Ա. ԱՐԷԼԵԱՆ	«Քնարական» Ակսելը	1
Ռ. ԱԹԱՅԵԱՆ	Մի դրուագ Բակունցի ուսանողական	
Ա. ՊԱՏՐԻԿ	տարիներից	1
»	Բիրեզ Բակունց	1
»	Մեծ յայտերի սերմնացանը	1
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Ակսելեան Բանդակներ	1
Վ. ԲԱԿՈՒՆՅ	Ակսել մարգու մասին	1
Գ. ՄԱՀԱՐԻ	Ալեքանդր վարժապետը	1
Մ. ԱՐՄԷՆ	Ալեքանդր վարժապետը	1
Հ. ՍԱՀԵԱՆ	Ակսել Բակունցի եես	1
Ռ. ԶԱՐԵԱՆ		

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	Թիվ
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Կողոպտուած համաճուազը	1
> >	Հայրենի բնութեան էութեան ուղիներով	3
> >	Յապագած հասունացման առաջին բազրոջումները	4
> >	Յ. Մանուկեանի «Անբընդան վաղորդաբեր»	4
> >	Մարգը սրբագրող վրձիներ	6
> >	Սպիտակ ու սև պատմութիւն	7
> >	Ի խնդիր ներգոր մամուլի	9
Վ. ԱՆԱՆԵԱՆ	Բակունցի հետ	1
> >	«Ամբակաւոր ոչխարների» եւ «Խոտակեր գազանների» մասին	5
Վ. ՕՇԱԿԱՆ	Վերջին տեսարանը	1
> >	Քանի մը նաթ «Սեւ ցիւրի սերմնացան»ի մասին	2
> >	Հայաստանի երիտասարդ բանաստեղծները	4
> >	> > >	5
> >	> > >	6
> >	> > >	7
> >	> > >	8
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Ջարճուած միրհաւը	1
ՍԻՐԱՍ	Կուսակցութեան երկաթէ կարգապահութեամբ	1
Հ. ՍԻՐԱՍ	Մայրենի գրականութեան նուիրեալը	1
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Բնապաշտ բանաստեղծը	1
> >	Ե. Պարսումեանի «Մազէ ի ծագ»ը	2
> >	Մարիա ճեփպարնի օրագրութիւնը	3
Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Բակունցի ժողովրդականութիւնը	1
> >	Քաղաքական գտեղադրութիւնը հորինողային Հայաստանում	2
> >	Ճանաչենք մեր մեծ հարեւանին	7
> >	Գրական հարցեր	11
ՀՐ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Ոսկէ աստղ	2
Հ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Տէրեանը յիշում էմ Օրեմբուրգում	2
ԳԱՐԵԳԻՆ Ք.	Յառաջարան	3
Յ. ՕՇԱԿԱՆ	Ա. Յարութիւնեան	3
Լ. ՓՕԼ ԹՈՄԱՆ	Յառաջարան	3
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ	Դարձեալ «Հարցումն եւ պատասխանիք» գրուածքի մասին	3
Յ. ՔԻՐՈՔՅԵԱՆ	Մանկավարժութիւն մը՝ տարբերութեան ի խնդիր	4
> >	Թիւրն ու քերին՝ այսօր	6
> >	> > >	7
> >	> > >	9
> >	> > >	10
> >	> > >	12

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	Թիվ
Շ. ԱԶՆԱՒՈՒՐ	Հարցազրույցներ	4
Ա. ԱԼԻՔԵԱՆ	Ազնաւեր տաղանդ	4
Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Ներկայացում Սրբուհի Տիւսարի	5
> >	Հերանոյշ Արշակեանի «Հոգիներու արցունքը»	7
Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ	Մի անակնկալ հանդիպում	6
Մ. ՔԻՆՆՏԵՐԱ	Հարցազրույց	5
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Ակսել Բակունցը եւ «Ալլիսկան ժանուշակ»ը	6
> >	Romance-սիրավէպի ծագումը	10
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Դիցանոցերանութիւն	7
> >	Խաղերը	9
> >	Հաստակամ ոգի	11
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Ատոնիս կամ այլափոխուելու ճիգը	7
> >	Երաժշտութեան բնույթը	12
Ե. ԶԱՐԵՆՑ	Սիրելի բժիշկ	8
Ա. ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	Հայ մշակութային գանձերու փրկութեան եւ պահպանման հրամայականը	8
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Յակոբ Օշական եւ արեւմտեայ նորավէպը	9
Ա. ԱՐԹՕ	Տարածում մտել եւ Արթուր Ադամովի «Խոստովանմք»	10
Մ. ՀԱՃԵԱՆ	Անարուեստ պատմութիւն ու գեղարուեստական նորավէպի մասին	10
Մ. ՊԶԱՔՃԵԱՆ	Միաձայն գրույց Զարեհ Որբունիի հետ	10
> >	> > > > > > >	11
ՏՈՒՔԹ. Ա. ԵՂԻԱՅԵԱՆ	Թիւրք ու թերիկ՝ այսօր	12

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՆՈՒԹԵՐ

Բակունցեան առասպել	1
Բակունցի առաջին գրութիւնը	1
Կարասեալ ձեռագիրներ	1
Բակունց եւ Կամիտաս	1
Սեւ կէտ	1
Ապտակի մը պատմութիւնը	1
Դահլիճի աշտասանքը	1
«Դաշնակ Բակունցը»	1
Շնորհակալութիւն Ռ. Իշխանեանին	1
Հուրի Իփեկեան	3
Մարտիրոս Սարեան	3

Համապատկերը	3
Ազնուարի. ձայնը	4
Վախթանգ Անանեան	4
Միլան ֆիլմերա	4
«Ռոստամը»	6
Զարեհի ամտիպ ժառանգութիւնը	8
«Էդ ցարին եաց է, հա՛ց»	9
Զ. Որբունի	12

Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր

«Յովնաթան մարչ»	1
«Որդի Որոտման»	1
«Ազդկադ տաւ հայկական դպրոց»	1
Մեծ սերերը	1
«Որտեղ ես հանգչում եիմա»	2
«Մեր փնտռումներն անօգուտ մնացին»	2
«Ժամանակ»ի ծնունդը	2
Հեռուտառեսութիւն	3
Եթէ	3
Պատկերասփիւռ	6
Յուշաճա՛ր, թէ անիւն	11
Սաղունական տարսափ	12

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւ՝ 2, 3, 5, 8, 9, 10, 11, 12




«Բազին»ի Յուսուպի քիւլը իր մեծ մասով նուիրուած պիտի ըլլայ Հայրենի եղերաբախտ գրագէտ Մուշեղ Գալշոյ-Եանին, որ Հոկտեմբեր 17ին գոհ զնաց որսորդական անեքքէք արկածի մը:

Ձիւնհայեան շրջանին եւ անոր յաջորդող տարիներուն Հայաստանի արձակին աշխուժութիւն հաղորդած եւ մեծ արձակի ճանապարհներուն իր տնունին մեծ յոյսեր կապած մտօր վրայ հաշուուող դէմքերէն մէկն էր Գալշոյեան, որ արդէն տրձանագրած էր անփշուր էջեր, ռմանք՝ զլուխ-գործոցներուն յատուկ շնչառութեամբ:

«Բազին» հնարաւոր բոլոր միջոցները ի գործ պիտի դնէ՝ ամբողջական գաղափար մը տալու համար արտաստեմանի ընթերցողին քիչ ծանօթ այս տարաբախտ գրագէտին մասին:



ՄԱՄՈՒԼԻ ՏՍԿ	ՄԱՄՈՒԼԻ ՏՍԿ
Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ	
Մ Ի Ջ Ն Ա Ր Ա Ր Ե Օ Թ	
(Պատմութիւններ)	
●	
Ժ. Ա Թ Թ Ա Ր Ե Ա Ն	
ԿԵԱՆՔԸ ԳԵՂԵՏԻԿ Է	
(Պատմութիւններ)	



ՏԱՐԵԿԱՆ ԲԱՃՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆ 27 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

بَاكِينُ
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

•
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆՁԳԵԱՆ

Խմբագրությունը անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՄ ԿՐԱՍՈՍԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898